ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ԱՊՐԻԼ 2011

Լիահոնա

Նա է Հարությունը և կյանքը, էջեր 4, 12

Աստծո Ամենազոր Որդու վկայությունը, էջ 16

Որովհետև մենք ավելի շատ պարտք ենք, քան կարող ենք վճարել, էջ 56

Երեխաների արվեստի ցուցահանդես. Ավետարանը օրհնում է իմ կյանքը, էջ 62

© SCALA/ART RESOURCE, NEW YORK

Ecce Homo (ԱՀԱ ՄԱՐԴԸ), Անտոնիո Սիզերի

«Պիղատոսն էլ կանչեց քահանայապետներին և իշխաններին և ժողովրդին,

Եվ նրանց ասաց. Դուք այս մարդն ինձ մոտ բերիք իբրև ժողովուրդը մոլորեցնող և ահա ձեր առաջին դատելով ոչ մի հանցանք չգտա այս մարդումն այն բաների համար, որ դուք ամբաստանություն եք անում դրանից: . . .

Արդ պատժեմ դորան՝ և արձակեմ:

Որովհետև հարկավոր էր որ տոնի ժամանակին մի մարդ արձակեր նրանց համար:

Իսկ նորանք բոլոր բազմությամբ աղաղակում էին և ասում. Վեր առ դորան, և արձակիր մեզ համար Բարաբբային. . . .

Եվ Պիղատոսը դարձյալ խոսեց դեպի նորանց. կամենալով արձակել Հիսուսին:

Իսկ նորանք աղաղակում էին և ասում. Խաչիր, խաչիր դորան:

Եվ նա երրորդ անգամ ասեց նրանց. Ապա ի՞նչ չար բան գործեց սա. ոչինչ մեռնելու հանցանք չգտա սորանում. կպատժեմ սորան և կարձակեմ.

Բայց նորանք բարձր ձայնով ստիպում էին և խնդրում էին, որ նա խաչվի: . . .

Եվ Պիղատոսը վճռեց, որ նորանց խնդիրքը լինի.

. . . և Հիսուսին մատնեց նորանց կամքին» (Ղուկաս ԻԳ.13–14, 16–18, 20–25):

Լիահոնա, Ապրիլ 2011



ՈՒՂԵՐՁՆԵՐ

4 **Առաջին Նախագահության Ուղերձ. Այստեղ չէ, այլ հարություն առավ**
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

7 **Այցելող Ուսուցիչների Ուղերձ. Սփոփող Միության նպատակը**

ԸՆՏՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

20 **Միշտ հիշեք Նրան**
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Երեք եղանակ Փրկչին հիշելու համար:

28 **Ռեբեկա Սվեյն Վիլիամս. «Հաստատակամ և անսասան»**
Ջենիս Լին Ջոնսոն
Նա հավատարիմ մնաց ավետարանին, թեև ընդդիմության հանդիպեց իր սեփական ընտանիքի կողմից:

32 **Ճիշտ նավարկելով Մարշալյան կղզիներում**
Ջոշուա Ջ. Փերքի
Երբեմն մենք ուղիշների օգնության կարիքն ունենք՝ գտնելու համար դեպի ուղիղ ու նեղ ուղին տանող մեր ճանապարհը:

ԲԱԺԻՆՆԵՐ

8 **Փոքր և հասարակ բաներ**

11 **Ծառայել Եկեղեցում: «Այս ամենը օրհնում է ինձ»**
Մայքլ Ռ. Մորիս

12 **Ինչին ենք մենք հավատում: Հիսուս Քրիստոսը քավեց մեր մեղքերը**

14 **Մենք խոսում ենք Քրիստոսի մասին: Ապաշխարեք, եկեք դեպի Տերը և բժշկվեք**
Դեյվիդ Լ. Ֆրիշկնեխտ

16 **Ավետարանի դասականներ: Գեթսեմանի մաքրագործող զորությունը**
Երեց Բրուս Ռ. Մակքոնկի

38 **Վերջին Օրերի Սրբերի ձայները**

74 **Եկեղեցու նորությունները**

79 **Մտքեր ընտանեկան երեկոյի համար**

80 **Մինչև նոր հանդիպում: Փշե պսակ, հաղթանակի պսակ**
Լարի Հիլլեր

Շապկի վրա
Խաղաղություն եմ թողնում ձեզ, Վոլտեր Ռեյն, տրամադրել է Եկեղեցու Պատմության Թանգարանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՉԱՓԱՀԱՍՆԵՐ



42 Ուխտը հավերժական է
Մարթա Վալենսիա Վասկուեզ
Երիտասարդ կին լինելով ես որոշեցի, որ մի օր պետք է գնամ տաճար, թեև այդ ժամանակ Կոստա Ռիկայում տաճար չկար:

44 Վերջապես լսեցի
Անանուն
Մադլենի հետ հանդիպելու ընթացքում Հոգին շարունակ հուշում էր ինձ հանդիպել միայն նրանց հետ, ովքեր բարձր չափանիշներ ունեին:

Տեսեք, թե կարող եք գտնել այս համարում թաքնված Լիահոնան: Հուշում՝ գեղեցիկ արքայադուստր:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

46 Հարցեր և պատասխաններ
Ինչո՞ւ է մեր ընտանիքը խնդիրներ ունենում, թեև մենք գնում ենք եկեղեցի, անցկացնում ընտանեկան երեկո և աշխատում ապրել ավետարանով: Ի՞նչ մենք կարող ենք անել»:

48 Պաստառ: Միշտ հիշեք Նրան

49 Տող առ տող: Վարդապետություն և Ուխտեր 76.22-24

50 Վերակառուցման պարգևները
Էշլի Դայեր
Երկրաշարժի ավերակների մեջ ես զգա իմ անձնական արժեքի զգացումը:

52 Սուրբ գրությունների զորությունը
Ադամ Ս. Օլսեն
Թափթցի այդ երկու դեռահասներին հարկավոր էր միայն սուրբ գրությունների մեկ հնարավորություն տալ:

55 Միսիայից: Իմ օրհնության հուշումը
Սքոթ Թալբոթ

56 Միջնորդ Հիսուս Քրիստոսը
Նախագահ Բոյդ Կ. Փաքեր
Պարտատիրոջ և պարտապանի առակը օգնում է մեզ հասկանալ արդարադատությունը, ողորմությունը և Քավությունը:

ԵՐԵԽԱՆԵՐ

59 Նիյայի ընտրությունը
Մարսել Նիյունջի
Նա ընտրության առաջ կանգնեց, երբ հասկացավ որ վաճառողը իրեն ավելի շատ մանր է տվել քան պետք էր:

60 Զատկի շաբաթը
Թեև մենք տոնում ենք Զատիկը միայն մեկ օր, այն պարունակում է Փրկչի կյանքում շաբաթվա կշիռ ունեցող իրադարձություններ:

62 Ողջ աշխարհից երեխաների արվեստի գործերը
Ձկնորսներ, տաճարներ, միսիոներներ և ավելին:

65 Հատուկ վկա: Ինչպե՞ս կարող եմ ես պաշտպանվել աշխարհի վատ բաներից
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

66 Տուն բերենք Երեխաների խմբի դասը: Հիսուս Քրիստոսն Իմ Փրկիչն ու Քավիչն է
Անա Մարիա Քոբորն և Քրիստինա Ֆրանկո

68 Ուրախ՝ տանը
Չադ Ե. Ֆարես
Եղբայրն ու քույրը Կամբոջիայից պատմում են, թե ինչը նրանց երջանկացրեց:

70 Փոքր երեխաների համար

ԱՊՐԻԼ 2011 ՀԱՏ. 12 Հ. 1
ԼԻԱՀՈՆԱ 09684 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ջոզեֆ Բ. Վիրթլին, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քուենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Փոլ Բ. Փիփեր
Խորհրդատուներ. Սթեվլ Գ. Էլիս, Քրիստոֆել Գոլդեն Կրտս., Յոշիհիկո Կիկուչի

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Լ. Ֆրիշկնեխթ
Խմբագրական տնօրեն. Վինսենթ Ա. Վոն
Գրաֆիկայի տնօրեն. Ալլան Ռ. Լոյբորգ

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն
Գլխավոր խմբագրի օգնականներ. Ջենիֆեր Լ. Գրինվուդ, Ադամ Ս. Օլսոն
Խմբագրի տեղակալ. Ռայան Քար
Խմբագրի օգնական. Սյուզան Բարեթ
Խմբագրական կազմ. Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լառեն Պորտեր Գանտ, Լարի Հիլլեր, Քերի Կաստեն, Ջենիֆեր Մեդի, Մելիսա Մերիլ, Մայքլ Ռ. Մորիս, Սալի Ջ. Օդեկիրկ, Ջոշուա Ջ. Փերկի, Ջեդ Ե. Փարես, Յան Փինբորու, Ռիչարդ Մ. Ռոմնի, Ջանեթ Թոմաս, Փոլ Վանդենբերգ, Ջուլի Վորդել
Ավագ քարտուղար. Լոուրել Թոսչեր

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի գծով տնօրեն. Սքոթ Վան Քեմփեն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Դիզայնի և հրատարակչության կազմ. Կալի Ռ. Արոյո, Քոլեթ Նեբեկեր Օն, Հովարդ Գ. Բրաուն, Ջուլի Բարդեթ, Թոմաս Ս. Չայլդ, Ռեջինալդ Ջ. Քրիսչենսեն, Կիմ Ֆենսթերմեյքեր, Քեթլին Հովարդ, Էրիկ Փ. Ջոնսեն, Դենիս Կըրբի, Սքոթ Մ. Մուլ, Ջինի Ջ. Նիլսոն
Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ
Բաշխման տնօրեն. Էվան Լարսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար կապվեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոնի կամ ծխի/ճյուղի ղեկավարի հետ:

Ձեռագրերն ու հարցերն ուղարկեք հետևյալ հասցեով. *Liahona*, Room 2420, 50 East North Temple Street, Salt Lake City, UT 84150-0024, USA; կամ էլ-փոստով. liahona@ldschurch.org.

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլգարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թայերեն, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատվիերեն, լեհերեն, լիտվերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հաիթերեն, հայերեն, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, չվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբեր է ըստ լեզուների:)

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և նկարները կարելի է պատճենահանել առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: April 2011 Vol. 12 No. 1. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send address changes to Salt Lake Distribution Center, Church Magazines, PO Box 26368, Salt Lake City, UT 84126-0368.

Ինտերնետում

Liahona.lds.org

ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կարդա դարձի գալու պատմություններ Մարշալյան կղզիներից (էջ 32) և ավելի շատ լուսանկարներ տես www.liahona.lds.orgկայքում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երբ երկու թաիթցի դեռահասներ որոշեցին ուշադրությունը կենտրոնացնել սուրբ գրությունները սերտելու վրա, նրանց կյանքը փոխվեց (էջ 52): **Տես ավելին՝** www.seminary.lds.org կայքում:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տես արվեստի 23
աշխատանքներ արվեստի միջազգային ցուցահանդեսից, էջ 62–64 և այլ նմուշներ www.liahona.lds.org կայքում:

ՁԵՐ ԼԵԶՎՈՎ

Լիահոնան և Եկեղեցու այլ նյութերը տարբեր լեզուներով մատչելի են **www.languages.lds.org** կայքում:

ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Համարները ցույց են տալիս հոդվածի առաջին էջը:

Ազնվություն, *59*
Ակտիվացում, *32*
Աղոթք, *40*
Անհատական արժանավորություն, *50*
Աշխատանք, *9*
Ապաշխարություն, *12, 14, 32, 39*
Աստվածային էություն, *70, 72*
Արդարակեցություն, *65*
Արդարություն, *56*
Արվեստ, *62*
Բարոյականություն, *42, 44*
Բժշկում, *80*
Դարձ, *28, 32, 38*
Եկեղեցու ղեկավարներ, *9*
Եկեղեցու պատմություն, *8*
Ընտանիք, *46*
Ծառայություն, *11, 41, 50*
Հաղորդություն, *20, 48*
Հավատք, *32*
Հարություն, *4, 16, 49, 60*
Հիսուս Քրիստոս, *4, 12, 14, 16, 20, 48, 49, 56, 60, 66, 80*
Զախորդություն, *46*
Մարգարեներ, *10*
Միսիոներական աշխատանք, *28, 55*
Նոր Կտակարան, *60*
Ողորմածություն, *56*
Ուխտեր, *42*
Զափանիշներ, *44*
Սեմինարիա, *52*
Սեր, *41*
Սուրբ Հոգի, *44*
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, *52, 68*
Սփոփող Միություն, *7*
Տաղանդներ, *62*
Փրկության ծրագիր, *41*
Քավություն, *12, 14, 16, 39, 66*
Օրինակ, *32*

Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն



Այստեղ չէ, այլ հարություն առավ

Այսօր միայն Կափառնայումի ավերակներն են մնացել, լճափին գտնվող այդ քաղաքում, որը Փրկչի Գալիլեայան ծառայության սիրտն էր: Այստեղ Նա քարոզեց ժողովարանում, ուսուցանեց ծովափին և բժշկեց տներում:

Իր ծառայության սկզբում Հիսուսը վերցրեց Եսայիայի գրվածքից հատված. «Տեր Եհովայի Հոգին ինձ վրա է, ըստ որում Տերը օծել է ինձ. նա ուղարկել է ինձ ավետիք տալու, կոտրած սիրտ ունեցողներին բժշկելու, գերիներին ազատություն հրատարակելու և կապեալներին՝ արձակում» (Եսայիա ԿԱ.1; տես նաև Ղուկաս Դ.18)—, աստվածային ծրագրի մի պարզ հայտարարություն Աստծո որդիներին և դուստրերին ազատելու համար:

Սակայն Գալիլեայում Հիսուսի քարոզները սոսկ նախերգանքն էին: Մարդու Որդին միշտ առջևում ուներ սոսկալի հանդիպման վայրը՝ Գողգոթայի սարի վրա:

Վերջին Ընթրիքից հետո Գեթսեմանի Այգում Նա ձերբակալվեց, Նրան լքեցին Իր աշակերտները, Նրա վրա թքեցին, փորձեցին ու նվաստացրեցին, Հիսուսը կքված և երերալով տարավ Իր մեծ Խաչը դեպի Գագաթ: Նա հաղթանակից առաջ գնաց դեպի դավաճանություն, տառապանք և մահ՝ խաչի վրա:

«Սուրբ Քաղաքը» երգի բառերով.

Փոխվեց տեսարանը: . . .
Առավոտը ցուրտ էր ու սառը,
Երբ սարի վրա մեկուսի,
Բարձրացավ ստվերը խաչի: [1]

Մեզ համար մեր Երկնային Հայրը տվեց Իր Որդուն: Մեզ համար մեր Ավագ Եղբայրը տվեց Իր կյանքը:

Վերջին պահին Վարդապետը կարող էր ետ դառնալ: Սակայն Նա չընկրկեց: Նա ամեն ինչից վար իջավ, որ կարողանար փրկել ամեն ինչ՝ մարդկային ցեղը, երկիրը և ամեն կյանք, որ երբևէ բնակվել է այնտեղ:

Քրիստոնեության մեջ ոչ մի խոսք ավելի մեծ նշանակություն չունի, որքան հրեշտակի խոսքերը ուղղված սգացող Մարիամ Մագդաղենացուն և մյուս Մարիամին, երբ նրանք եկել էին գերեզման խնամելու իրենց Տիրոջ մարմինը. «Ի՞նչ եք կենդանին մեռելների մեջ որոնում: Այստեղ չէ, այլ հարություն առավ» (Ղուկաս ԻԴ.5–6):

Այս հայտարարությամբ փրկվել են բոլոր նրանք, ովքեր ապրել և մահացել են, ովքեր այժմ ապրում են և մի օր կմահանան, և նրանք, ովքեր դեռևս չեն ծնվել և դեռևս չեն մահացել:

Գերեզմանի հանդեպ Քրիստոսի տարած հաղթանակի շնորհիվ մենք բոլորս հարություն կառնենք: Սա հոգու փրկագնումն է: Պողոսը գրել է.

«Կան երկնավոր մարմիններ, և երկրավոր մարմիններ. բայց ուրիշ է երկնավորների փառքը, և ուրիշ է երկրավորների փառքը:

Ուրիշ է արեգակի փառքը, և ուրիշ է լուսնի փառքը, և ուրիշ է աստղերի փառքը. որովհետև մի աստղ մյուսից զանազանվում է փառքով:

Այնպես էլ մեռելների հարությունը» (Ա Կորնթացիս ԺԵ.40–42):

Դա սելեստիալ փառքն է, որ մենք

ՆԱ ԱՅՍՏԵՂ ՉԷ, ՀՈՒՏԵՐ ՈՒԵՅՆ, ՉԻ ԿԱՐԵԼԻ ԲԱՑՄԱՑՆԵԼ. ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՄԱՐԻԱՄԸ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄՈՏ. ՋՈՇԵՖ ԲՐԻԳԻՍ © 2004 IRI

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Լավ ուսուցիչները միաբանություն են խրախուսում իրենց ուսանողներին: Երբ մարդիկ կիսվում են իրենց ներըմռնումներով և հարգանքով լսում են միմյանց, նրանք ոչ միայն սովորելու համար լավ մթնոլորտ են ստեղծում, այլև դառնում են ավելի միասնական (տես *Teaching, No Greater Call* [1999], 63):

Միասնություն կզարգանա նրանց մեջ, ում դուք ուսուցանում եք, երբ դուք և նրանք ակնածանքով վկայեք Հիսուս Քրիստոսի Քավության և Նրա Հարության մասին: Այս միությունը կօգնի ընտանիքներին, հետևելով Նախագահ Մոնսոնի խորհրդին, դառնալ «հավերժական ընտանիք»:

փափագում ենք: Դա Աստծո ներկայությունն է, որում մենք ցանկանում ենք բնակվել: Դա հավերժական ընտանիքն է, որի անդամը մենք ցանկանում ենք լինել:

Նրա մասին, որ մեզանից յուրաքանչյուրին ազատեց անվերջ մահից, ես վկայում եմ՝ Նա ճշմարտության ուսուցիչն է, սակայն Նա ավելին է, քան ուսուցիչ: Նա կատարյալ կյանքի օրինակն է, սակայն Նա ավելին է, քան օրինակ: Նա մեծ բժիշկ է, սակայն Նա ավելին է, քան բժիշկ: Նա պարզապես աշխարհի Փրկիչն է, Աստծո Որդին, Խաղաղության Իշխանը, Իսրայելի Սուրբը, այսինքն հարություն առած Տերը, որ հայտարարեց. «Ես եմ առաջինը և վերջինը. ես նա եմ, ով ապրում է, ես նա եմ, ով սպանվել էր. ես ձեր բարեխոսն եմ Հոր մոտ» (ՎԿՈ 110.4):

«Գիտեմ, ապրում է Փրկիչն իմ, որից ցնծում է իմ հոգին»:[2]

Այս մասին ես վկայում եմ: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Frederick E. Weatherly, “The Holy City” (1892).
2. «Գիտեմ ապրում է Փրկիչն իմ», *Հիմներ և մանկական երգեր*, էջ 38:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Նա մեզ ցույց տվեց տունդարձի ճանապարհը

Փրկիչը եկավ երկիր ցույց տալու մեզ՝ ինչպես պետք է ապրել այն ծրագրով, որը կազմվել էր երկնքում, ծրագիր, ըստ որի եթե ապրենք, երջանկություն կունենանք: Նրա օրինակը մեզ ցույց տվեց դեպի տուն՝ մեր Երկնային Հոր մոտ վերադառնալու ճանապարհը: Ոչ ոք, ով երբևէ ապրել է, չի եղել այդքան «անսասան և անխախտ» (Մոսիա 5.15): Նա երբեք չշեղվեց: Նա միշտ կատարում էր Հոր կամքը, և Նա հավատարիմ մնաց Իր աստվածային առաքելությանը . . .

Դուք մի մասն եք այդ հրաշալի ծրագրի, որը ներկայացվեց նախամահկանացու աշխարհում: Այժմ ձեր աշխարհ գալը նախատեսված էր այն ժամանակ, երբ այդ ծրագիրն ընդունվեց: Պատահականություն չէ ձեր գալու ժամանակն ու վայրը: Այն ժամանակ ձեր «խիստ մեծ հավատքը ու բարի գործերը» (Ալմա 13.3) դրել են հիմքը այն բանի, որը դուք կարող եք կատարել այժմ, եթե հավատրիմ և հնազանդ լինեք . . . Դուք մեծ աշխատանք ունեք կատարելու: Ձեր աստվածային առաքելությունը իրագործելու և երջանկության ծրագրով ապրելու համար դուք ևս պետք է «հաստատակամ և անսասան լինեք»:

Էլեյն Ս. Դալտոն, Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ, «Բոլոր ժամանակներում, բոլոր բաներում և բոլոր տեղերում», *Լիահոնա,* մայիս 2008, 116:

ԵՐԵԽԱՆԵՐ

Մենք կարող ենք հավերժական ընտանիք լինել

Նախագահ Մոնսոնը ուսուցանում է, որ Փրկչի Քավության զորության շնորհիվ որպես ընտանիքներ մենք կարող ենք կրկին միասին լինել մահից հետո: Միավորեք այս ընտանիքին հետևելով ստորև տրված հրահանգներին:

Հրահանգներ. Զախում ընտանիքի անդամներին մահը առանձնացրել է միմյանցից և Փրկչից: Այս էջը բազմացրեք, տպելով այն www.lds.org կայքից, կամ դուք ինքներդ նկարեք ցույց տալով ինչպես կարող է Փրկիչը մեզ միացնել: Էջը ծալեք կետագծերով, որպեսզի էջի ներքևում աստղերը միանան՝ ծածկելով մուգ մասերը:

ՆԿԱՐՈՒՄԸ ՍԹԻՎ ԿՈՒՆԻ

Սփոփող Միության նպատակը

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Երբ մեր նախագահությունն առաջին անգամ կանչվեց, մեզ տրվեցին Սփոփող Միության պատմության վերաբերյալ որոշ նյութեր: Մենք աղոթքով ուսումնասիրեցինք դրանք, ցանկանալով իմանալ Սփոփող Միության նպատակը, և թե ինչ է Տերը ցանկանում, որ մենք անենք: Մենք սովորեցինք, որ ըստ Տիրոջ սահմանման՝ Սփոփող Միության նպատակն է կազմակերպել, ուսուցանել և ոգեշնչել Նրա դուստրերին, պատրաստելով նրանց հավերժական կյանքի օրհնություններին:

Սփոփող Միության այդ նպատակը իրագործելու համար Տերը յուրաքանչյուր քրոջ և ողջ կազմակերպությանը հանձնարարել է՝

1. Ավելացնել հավատքը և անձնական արդարակեցությունը:
2. Ամրացնել ընտանիքները և տները:
3. Գթասրտություն դրսևորել, ծառայելով Տիրոջը և Իր զավակներին:

Մենք կարող ենք Տիրոջ ձևով կատարել այս աշխատանքը, երբ փնտրենք ու ստանանք անձնական հայտնության և գործենք ըստ դրա: Առանց անձնական հայտնության մենք չենք կարող հաջողություն ունենալ: Եթե ուշադրություն ենք դարձնում անձնական հայտնությանը, մենք չենք ձախողվի: Մարգարե Նեփին ուսուցանել է մեզ, որ Սուրբ Հոգին մեզ ցույց կտա «բոլոր բաները, որ [մենք] պետք է անենք» (2 Նեփի 32.5): Մենք պետք է այնքան հանգիստ ու խաղաղ լինենք, որ լսենք Հոգու ձայնը:

Քույրեր, մենք կարևոր դեր ունենք՝ օգնելու կառուցել Աստծո արքայությունը և պատրաստվել Տիրոջ գալստին: Իրականում, Տիրոջ աշխատանքը չի կարող իրագործվել առանց Նրա դուստրերի օգնության: Այդ իսկ պատճառով Տերը ակնկալում է մեզ ավելացնել մեր ավանդը: Նա մեզանից ակնկալում է կատարել Սփոփող Միության նպատակը՝ առավել քան երբևէ:

Ջուլի Բ. Բեք, Սփոփող Միության գերագույն նախագահ:

Սուրբ Գրություններից

Երկրորդ Օրինաց Զ.5–7; Ղուկաս Ժ.30–37; Հակոբոս Ա.27; 2 Նեփի 25.26; Մոսիա 3.12–13

Եթե ցանկանում եք կարդալ այն կնոջ մասին, որը հավատքի և անձնական արդարակեցության օրինակ էր, տես էջ 28:

Ի՞նչ կարող եմ ես անել

1. Ի՞նչ ոգեշնչում եմ ես ստացել օգնելու իմ քույրերին՝ ավելացնել հավատքն ու անձնական արդարակեցությունը, և ամրացնել իրենց ընտանիքներն ու տները: Ինչպե՞ս կարող եմ ես օգնել:

2. Ինչպե՞ս ես կօգտագործեմ այս ուղերձը՝ ամրացնելու իմ հավատքը և մեծացնելու անձնական արդարակեցության իմ պարտավորվածությունը:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

Մեր պատմությունից

1842թ. հունիսի 9-ին Սփոփող Միության ժողովին Մարգարե Ջոզեֆ Սմիթը ուսուցանեց քույրերին, որ նրանց կազմակերպությունը «ոչ միայն պետք է օգներ աղքատներին, այլև հոգիներ փրկեր»:[1] Այս սահմանումը իր մեջ կրում էր հոգևոր և աշխարհիկ նպատակ, որը բնութագրել է Սփոփող Միությանը իր պատմության ընթացքում: 1906թ. Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը (1838–1918) ուսուցանել է. «[Սփոփող Միությունը] ոչ միայն պետք է զբաղվի աղքատների, հիվանդների և կարիքավորների կարիքները հոգալով, այլև իր պարտականության մեծագույն մասն է նաև հոգ տանել Սիոնի մայրերի և դուստրերի հոգևոր բարօրության և փրկության համար, վստահ լինել, որ ոչ ոք անտեսված չէ, բոլորը պաշտպանված են դժբախտությունից, աղետից, խավարի ուժերից և աշխարհում նրանց ահաբեկող չարից»:[2] 2001թ. Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը կրկնել է. «Այս Եկեղեցու յուրաքանչյուր քույր, ով ուխտեր է կապել Տիրոջ հետ, աստվածային պարտականություն ունի օգնելու փրկել հոգիներ, առաջնորդել աշխարհի կանանց, ամրապնդել Սիոնի տները և կառուցել Աստծո արքայությունը»:[3]

Հղումներ

1. Joseph Smith, in *History of the Church,* 1:78.
2. *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* (1998), 185.
3. M. Russell Ballard, “Women of Righteousness,” *Liahona,* Dec. 2002, 39.

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՔՐԻՍՏԻՆԱ ՍՄԻԹԻ

Փոքր և **հասարակ** բաներ

«Փոքր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է» (Վեր 64.33):

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԱԵԽԱՐՀՈՒՄ

Մարշալյան կղզիներ

Թեև Եկեղեցու անդամները այցելեցին Մարշալյան կղզիներ Երկրորդ Համաշխարհայինի տարիներին, պաշտոնական միսիոներական աշխատանքը սկսվեց 1977թ. փետրվարին: Այդ տարի Հավայիի Հոնոլուլու Միսիայից Երեց Վիլիամ Վարդելը և Երեց Սթիվեն Կուպերը նշանակվեցին աշխատելու այդ տարածքում: Եկեղեցու անդամ Էլդրեդ Ֆյուկեսի օգնությամբ, որը Մարշալյան կղզիներ էր տեղափոխվել աշխատանքի բերումով, նրանք սկսեցին Եկեղեցու ծառայություններն անցկացնել մեկ այլ եկեղեցու շենքում:

Այդ առաջին տարին միսիոներները մկրտեցին 27 նորադարձի: Երեք տարի անց Մարշալյան կղզիները դարձան Մայկրոնեզիա Գուամ Միսիայի մասը: 1984թ. Մարշալյան կղզիների Մաջուրո Շրջանը կազմակերպվեց: Եկեղեցու անդամությունը շարունակվեց աճել, որի արդյունքում 1991թ. Կվաջալեին կորալյան կղզիների վրա կազմակերպվեց երկրորդ շրջանը: 2006թ. Մարշալյան կղզիների Մաջուրո Միսիան ստեղծվեց: Հաջորդող երեք տարիներին ակտիվ անդամության աննախադեպ աճ նկատվեց, որը պայմանավորված էր ակտիվացման ջանքերի, նորադարձների մկրտությունների և տեղական ղեկավարների ամրացման հետ: Արդյունքում, 2009թ. հունիսի 14-ին Մարշալյան Կղզիների Մաջուրո Ցիցը կազմակերպվեց:

Մարշալյան կղզիների անդամների հավատքի և դարձի գալու մասին պատմությունները տես էջ 32-ում:

ԵԿԵՂԵՑԻՆ ՄԱՐՇԱԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐՈՒՄ	
Անդամների թիվը	4,486
Միսիաներ	1
Ցցեր	1
Շրջաններ	1
Ծխեր/ճյուղեր	11

Սովորել համաժողովից

Մեր երեխաներն այժմ մեծացել են և իրենց տներն ու ընտանիքները ունեն, սակայն մենք մարգարեների խոսքերից միասին սովորելու եղանակ ենք գտել: Յուրաքանչյուր գերագույն համաժողովին հաջորդող ամսվա ընթացքում ես ուսումնասիրում եմ ելույթները www.conference.lds.org կայքում և ընտրում եմ ուղղություն, առաջնորդություն և սփոփանք պարունակող հատվածներ: Ես հավաքում եմ հատվածներ առաջիկա վեց ամիսների ամեն օրվա համար: (Օրինակ, ապրիլին ես ընտրում եմ հատվածներ մայիսի 1-ից-հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի ամեն օրվա համար մեկ հատված:) Ապա ես այդ հատվածները տալիս եմ մեր երեխաներին:

Որպես համաժողովի անձնական ուսումնասիրության լրացում այդ ամենօրյա հատվածները հաճախ դառնում են զրույցի թեմա ընտանիքի անդամների համար: Հրաշալի փորձառություն է, երբ վերանայում ենք մարգարեների խորհուրդները գերագույն համաժողովին հաջորդող ամիսների ընթացքում, չնայած որ մենք ապրում ենք միմյանցից մղոններ հեռու:

Քրիստին Թիպետս, Յուտա, ԱՄՆ

ՁԱԽՈՒՄ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐ © ISTOCK; ԱՋԻՑ ՆԵՐՔԵՎՈՒՄ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Ջ. Ռուբեն Քլարկ կրտ.՝ բացառիկ պարգևի տեր մարդը

Ջոշուա Ռուբեն Քլարկ կրտսերը ծնվել է 1871թ. սեպտեմբերի 1-ին, Գրենսվիլում, Յուտա: Թեպետ նրա դպրոցական կրթությունը անավարտ էր մնացել, քանի որ նա հնարավորություն չէր ունեցել հաճախելու ավագ դպրոց, նրան սովորեցրել է մայրը, և նա սիրում էր սովորելը: Նա իր խմբում առաջինն է ավարտել Յուտայի Համալսարանը գիտության մեջ բակալավրի կոչում ստանալով և շարունակել է կրթությունը Նյու Յորքի Կոլումբիայի Համալսարանի իրավագիտության ֆակուլտետում ստանալով իրավաբանի կոչում:

Եղբայր Քլարկն ամուսնացել է 1898թ. Լյուասին Մնետ Սավաժի հետ Սոլթ Լեյքի Տաճարում, և նրանք ունեցան չորս զավակ:

Զինված իր իրավագիտական աստիճանով և փայլուն մտքով, Ջ. Ռուբեն Քլարկ կրտ.-ն ունեցել է ակնառու իրավաբանական և քաղաքացիական ծառայության կարիերա, որի գագթնակետը հանդիսացավ ԱՄՆ դեսպանի կոչումը Մեքսիկայում 1930թ.: Ինչևէ, այդ կարիերան ավարտվեց, երբ 1933թ. ապրիլի 6-ին Եղբայր Քլարկը հաստատվեց որպես Նախագահ Հեբեր Ջ. Գրանտի Երկրորդ Խորհրդական Առաջին Նախագահությունում: Թեպետ այդ ժամանակ քահանայապետ էր, նա Գերագույն Իշխանավոր չէր: Նա կարգվեց Առաքյալ, երբ ավելի ուշ հաստատվեց որպես Նախագահ Գրանտի Առաջին Խորհրդական 1934թ.

Նախագահ Քլարկը (ձախից) միսիայի նախագահ Լամոնթ Թորոնթոյի հետ:

Առաջին Նախագահությունը 1945 թվին (ձախից). Ջ. Ռուբեն Քլարկ կրտ., Հեբեր Ջ. Գրանտ և Դեյվիդ Օ. Մակքեյ:

հոկտեմբերին: Նախագահ Քլարկը շարունակել է որպես խորհրդական ծառայել Նախագահներ Ջորջ Ալբերտ Սմիթին և Դեյվիդ Օ. Մակքեյին:

Եկեղեցում ներդրած իր բազմաթիվ ավանդների շարքում նա աչքի է ընկնել իր խոնարհության օրինակով, երբ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը դարձավ Եկեղեցու Նախագահ: Նա կանչեց Նախագահ Քլարկին լինելու Երկրորդ Խորհրդական: Քանի որ Նախագահ Քլարկը նախորդ Առաջին Նախագահություններում ծառայել էր որպես Առաջին Խորհրդական, ոմանք ըստ երևույթին մտածեցին, թե նա անհարգալից վերաբերմունքի է արժանացել, սակայն Նախագահ Քլարկը բացատրել էր. «Տիրոջ ծառայության մեջ կարևոր է ոչ թե որտեղ ես ծառայում, այլ ինչպես ես ծառայում: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մարդը գրավում է այն պաշտոնը, որի համար պատշաճ կերպով կանչվում է, որին նա չի ձգտում և որը չի մերժում»:[1]

Նախագահ Քլարկը մահացել է 1961թ. հոկտեմբերի 6-ին:

ՀՂՈՒՄ

1. J. Reuben Clark Jr., in Conference Report, Apr. 1951, 154.

ՎՕՍ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՎՕՍ Զբաղվածության կենտրոնները առաջարկում են մասնագիտական քննարկումներ օգնելու համար նրանց, ովքեր աշխատանք են փնտրում, ցանկանում են կրթությունը շարունակել կամ բիզնես սկսել: Մասնագիտական քննարկումներն օգնում են մարդկանց որոշել իրենց կարիերայի նպատակները և վստահություն զարգացնել իրենց ունակություններում հաջողության հասնելու համար: Դրանք ուսուցողական են, ինտերակտիվ, խթանիչ և զվարճալի:

Մասնագիտական քննարկումները ընդգրկում են թեմաներ, ինչպիսիք են՝ բնորոշել կարիերայի նպատակները, նպատակներին հասնելու միջոցներ գտնել, ռեզյումե գրել և հաջողության հասնել նոր աշխատանքում:

Մասնագիտական քննարկումներ գտնելու համար, խնդրեք ձեր եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին, կամ էլ այցելեք **www.ldsjobs.org** և սեղմեք “Find a Center”:

«ՀԻՇԻՐ ՔՈ ՍՏԵՂԾՈՂԻՆ ՔՈ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՕՐԵՐՈՒՄԸ» (ԺՈՂՈՎՈՂ ԺԲ.1)

Սուրբ գրություններում ժամանակագրությամբ տրված են մարգարեների և առաքյալների ծառայությունները: Այդ ղեկավարներից շատերը ճանաչել են Աստծուն մանկուց ի վեր: Սա սուրբ գրության հինգ պատմություն, որտեղ նկարագրվում է այդ ապագա ղեկավարներից մի քանիսի պատմությունը:

- Հովհաննես Մկրտիչը, ով կանչվել էր պատրաստելու մարդկանց «Տիրոջ գալստի» համար, «դեռևս իր մանկության մեջ, ութ օրականում, Աստծո հրեշտակի կողմից կարգվել էր այս զորությանը» (ՎևՈւ 84.27–28):

- Ովսիա թագավորը թագադրվեց ութ տարեկանում, և իր թագավորելու 31 տարիների ընթացքում օգնում էր Հրեաներին դարձի գալ դեպի ավետարանը (տես Դ Թագավորաց ԻԲ):

- Մորմոնը 10 տարեկան էր, երբ Ամմարոնացիները ընտրեցին նրան, որ նա լինի հիշատակարանների (Նեփիի թիթեղների) հաջորդ պահապանը: Մոտ 16 տարեկանում Մորմոնը առաջնորդեց Նեփիացիների բանակները: (Տես Մորմոն 1.2–4; 2.1–2:)

- Դավիթը տակավին «պատանի էր» (երիտասարդ տղա), երբ սպանեց Գողիաթին, միգուցե Հելամանի զինվորների տարիքին (տես Ա Թագավորաց ԺԷ.49–56; Ալմա 53.22):

- Հովսեփը 17 տարեկան էր, երբ վաճառվեց Եգիպտոս, որտեղ «Եհովան Հովսեփի հետ էր» (տես Ծննդոց ԼԷ.2, 27–28; ԼԹ.2):

ՎԵՐԻՆ ՁԱԽՈՒՍ. ՆԿԱՐՆԵՐԸ ՓՈՂ ՍԱՆԱՆ, ՉԻ ԿԱՐԵԼԻ ԲԱԶՄԱՑՆԵԼ, ՍԱԿԱՆԸ ԲԵՐՈՒՄ Է ՀՐՇՍՏԱԿԱՐՆԱՆԵՐԸ ՈՎՍԻԱՅԻՆ, ՈՐԲԵՈՏ ԲԱՐԵԹ © 1990, ՉԻ ԿԱՐԵԼԻ ԲԱԶՄԱՑՆԵԼ, ՍՈՐՄՈՆԸ ՀԱՍԱՐԱՏԱԳՐՈՒՄ Է ԹՈՓԹՐՈՒՆԵՐԸ, ԹՈՂ ԼՈՒԵԼԻ © IRI; ԴԱՎԻԹԸ ԵՎ ԳՈՂԻԱԹԸ, ՍԼԻՄԿ ՆԵԹԵՐԲՈՒՄ, ՉԻ ԿԱՐԵԼԻ ԲԱԶՄԱՑՆԵԼ. ՀԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ/ՆՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ, ՋԵՖ ԿՈՒՄՐՈՆ

«Այս ամենը օրհնում է ինձ»

Մայքլ Ռ. Մորիս
Եկեղեցու ամսագրեր

Շաբաթ օրերին դուք կգտնեք Էլվիրա Գուագլիարելոյին իր տան խոհանոցում ժրաջան աշխատելիս: Նա ապրում է Պուերտո Մադրինում, որը գտնվում է Արգենտինայի Նուէվո Գալֆ ծովափին, Չուբաթ հարավային նահանգում:

Նա չափում է ալյուրը և ջուրը, ապա վերցնում է այլ բաղադրիչները: Նա աշխատելիս շատ քիչ է խոսում, նրա շարժումներն ավելի բարձրաձայն են խոսում: Ի վերջո, նա Տիրոջ աշխատանքի մեջ է:

«Ես ինձ լավ եմ զգում, որովհետև գիտեմ, որ լավ գործ եմ կատարում»,- ասում է Քույր Գուագլիարելոն, խառնելով բաղադիչները: Նա աշխատելիս մտածում է Փրկչի մասին, ուրախանալով այն մտքից, որ իր ծառայության արդյունքը կօգնի Եկեղեցու մյուս անդամներին հիշել Նրան:

82-ամյա Քույր Գուագլիարելոն հաճույքով է ծառայում որպես այցելող ուսուցիչ, օգնում է վարել երաժշտությունը իր ծխում և հաց է թխում հաղորդության արարողության ժամանակ օգտագործելու համար, կոչում, որը նա մեծարում է արդեն 10 տարի: Նա շաբաթվա ընթացքում հաց է թխում իր համար, սակայն շաբաթ օրերին նա ժամանակ է հատկացնում, որպեսզի հաց թխի «հատուկ Եկեղեցու համար»,- ասում է նա: «Ես ինքս ինձ ասում եմ՝ ես պետք է հաց թխեմ և գնամ եկեղեցի: Ես չեմ ուզում թերանալ»:

Երբ առողջությունը ներում է նա նաև այցելում է տաճար՝ ամեն տարի ավտոբուստով 20 ժամ ճամփորդելով դեպի հյուսիս՝ Բուենոս Այրես Արգենտինա Տաճար:

«Քույր Գուագլիարելոն իր կարողության սահմանում միշտ ուրախությամբ ծառայում է,- ասում է նրա եպիսկոպոսը Ջիսուս Մանթոս Գումիելը,- ծխի անդամները գիտեն, որ կարող են նրան վստահել: Չնայած իր տարիքին նա ամեն շաբաթ օր պատրաստակամորեն պատրաստում է հացը և ամեն կիրակի եկեղեցի է գալիս: Նա լավ օրինակ է»:

Քույր Գուագլիարելոն հանդիպել է լիաժամկետ միսիոներներին 1962թ. Մար դել Պլատայում,

Էլվիրա Գուագլիարելո

Բուենոս Այրեսից հարավ, երբ աշխատում էր հանրակացարանում, որտեղ նրանք էին ապրում: Երբ 15 տարի անց Պուերտո Մադրին տեղափոխվելուց հետո տեսավ նրանց դռներ թակելիս, նա մասնակցեց զրույցներին, մկրտվեց և սկսվեց Եկեղեցում նրա ծառայությունը:

Այսօր նա մենակ է ապրում, սակայն իրեն միայնակ չի զգում: Նա ունի սուրբ գրությունները և իր ծխի ընտանիքը, և նա հաճախ է աղոթքով հաղորդակցվում իր Երկնային Հոր հետ: Նա նաև վայելում է Հոգու ընկերակցությունը, որը Տերը խոստացել է նրանց, ովքեր մյուսներին ծառայելով ծառայում են Իրեն:[1]

«Այս ամենն օրհնում է ինձ,- ժպիտը դեմքին ասում է Քույր Գուագլիարելոն,- Եկեղեցին մեզ գործի է դնում և դա ինձ երջանկություն է պարգևում: Ես միշտ ուրախություն եմ գտել մեր Երկնային Հորը ծառայելու մեջ»: ■

ՀՂՈՒՄ

1. Տես Henry B. Eyring, "In the Strength of the Lord," *Liahona,* May 2004, 19; տես նաև Հովհաննես ԺԴ.16–18; Վարդապետություն և Ուխտեր 88.3:



ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ ԿԱՏԱՐԵԼ ՄԵԾ ՏԱՐԻՔՈՒՄ

Օգտակար զգալու և միայնակությունը հաղթահարելու համար կարևոր է, որ փնտրեք կարիքավորներին օգնելու ուղիներ: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը (1899–1994) առաջարկել է Եկեղեցու տարեց անդամներին մտածել Ծառայելու հետևյալ ուղիների մասին.

1. Տաճարում աշխատել և հաճախ տաճար այցելել:
2. Հավաքել և գրել ընտանիքի պատմություններ:
3. Ներգրավվել միսիոներական ծառայության մեջ:
4. Ընտանիքում միասնություն խթանել:
5. Ընդունել և կատարել Եկեղեցու կոչումները:
6. Կատարել Քրիստոսանման ծառայություն:
7. Ֆիզիկապես առողջ և ակտիվ մնալ:

From Ezra Taft Benson, "To the Elderly in the Church," *Ensign,* Nov. 1989, 4–6.

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ
ՔԱՎԵՑ ՄԵՐ ՄԵՂՔԵՐԸ

Այստեղ երկրի վրա գտնվելու նպատակներից մեկն է՝ սովորել հնազանդվել Աստծո պատվիրաններին: Բացի Հիսուս Քրիստոսից, որը կատարյալ կյանքով ապրեց, ամեն ոք, ով ապրել է երկրի վրա, մեղանչել է (տես Հռովմայեցիս Գ.23; Ա Հովհաննես Ա.8): Մեղք ենք գործում, երբ գիտակցաբար խախտում ենք Աստծո պատվիրանները, իսկ ամեն մեղք ունի իրեն կցված պատիժ: Երբ մենք մեղանչում ենք, արդարադատությունը պահանջում է, որ կրենք մեր պատիժը (տես Ալմա 42.16–22):

Ի վերջո, մեղքի հետևանքը Աստծուց հեռանալն է (տես 1 Նեփի 10.21): Այդ հեռացումը այնքան խիստ է, որ մենք չենք կարող ինքնուրույն վերականգնել այն:

Այդ բաժանումը հաղթահարելու համար, մեր Երկնային Հայրը Իր Միածին Որդու, Հիսուս Քրիստոսի համար ուղի պատրաստեց՝ Իր վրա վերցնելու մեր մեղքերը, մեզ հնարավորություն տալով դառնալ հոգեպես մաքուր և Նրա հետ վերամիավորված: Սա ողորմության ծրագիր է:

Փրկիչն ուսուցանել է. «Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն. բայց եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես» (ՎևՈւ 19.16–17):

Որպես Իր Քավության մաս, Հիսուսը տառապեց մեր մեղքերի համար Գեթսեմանի այգում և Գագաթի խաչի վրա: Մեր մեղքերից ապաշխարելով՝ մենք կարող ենք Նրա Քավության զորությունը բերել մեր կյանք:

Հիսուս Քրիստոսը, որը ինքնակամ քավեց մեր մեղքերը, ասել է.

«Ինձ մոտ եկեք, ամեն

«Միայն Հիսուս Քրիստոսը՝ որպես Աստծո Միածին Որդի և երկրի վրա ապրած միակ անմեղ մարդ, կարող էր քավություն կատարել ողջ մարդկության համար» (Bible Dictionary, “Atonement”):



Քավությունը նաև պարգևում է հետևյալ օրհնությունները.

1. Հարություն բոլորին, ովքեր ծնվել են երկրի վրա (տես Ալմա 11.42–45):

2. Հավերժական կյանք Աստծո ներկայության մեջ բոլոր զավակների համար, ովքեր մահացել են նախքան պատասխանատվության տարիքը՝ ութ տարեկան դառնալը (տես Մոսիա 3.16; 15.24–25; Մորոնի 8.8–12):

վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:

Ձեզ վրա առեք իմ լուծը և ինձանից սովորեցեք. որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք:

Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթեոս ԺԱ.28–30): ■

Լրացուցիչ տեղեկության համար, տես *Ավետարանի սկզբունքներ* (2009), 59–66; և *Հավատքին հավատարիմ* (2004), 14–20:

3. Փորձության ժամերին խաղաղություն գտնելու կարողություն, քանի որ Հիսուսը Իր վրա է վերցրել մեր ցավերն ու հիվանդությունները (տես Հովհաննես ԺԴ.27; Ալմա 7.11–12):

4. Արդարակյացներին փոխհատուցում՝ այս կյանքի անարդարությունների համար (տես Քարոզիր իմ ավետարանը *[2004], 52):*

«Ահա, ես եկել եմ աշխարհ՝ փրկագնում բերելու աշխարհին, փրկելու աշխարհը մեղքից:

Հետևաբար, ով որ ապաշխարում է և գալիս ինձ մոտ ինչպես մի փոքր երեխա, նրան ես կընդունեմ, քանզի այդպիսիներինն է Աստծո արքայությունը: Ահա, այդպիսիների համար եմ ես իմ կյանքը ցած դրել, և վերցրել այն կրկին. ուստի ապաշխարե՛ք և եկե՛ք ինձ մոտ, դո՛ւք, աշխարհի՛ ծայրեր, և փրկվե՛ք» (3 Նեփի 9.21–22):

Ս՝, ԻՄ ՀԱՅՐ, ԱԱՅՄՈՆ ԴՅՈՒՌ, ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱՅԵՑԵԼՈՎ Է ԱՄԵՐԻԿԱՆԵՐ, ՋՈՆ ԱՅԶՈՆ © IRI;
ՍԱՆԿԱՆՆԵՐԻՆԵՐԸ՝ ԱՅԼ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՄՈՒԹԻ
© GETTY IMAGES; ԱՅԼ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝

Ապաշխարիր, դարձիր դեպի Տերը և բժշկվիր

«Սիա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք» (ՎԱՌ 58.42):

Դեյվիդ Լ. Ֆրիշկնեխտ
Ծրագրերի Բաժանմունք

Վերջերս իմ ծանոթ մի լավ և հավատքով կին ավտովթարի հետևանքով լուրջ վնասվածքներ էր ստացել: Կոտրվել էին նրա կողերը և ողը: Նրա վերականգնումը պահանջում էր, որ նա հագներ ձգող գոտի մեջքին և վզին, որպեսզի դրանք անշարժ վիճակում լինեին: Գոտին շատ անհարմար էր երևու, սակայն անհրաժեշտ էր հագնել այն: Դա ապահովելու էր մեջքը և վիզը ապաքինվելու համար անհրաժեշտ պայմաններ:

Ապաշխարությունը գոտու նման է: Երբ մեղանչում ենք, մենք վնասում ենք մեր հոգին, և աստվածային բժշկում է անհրաժեշտ կրկին առողջանալու համար: Ապաշխարությունն ապահովում է պայման, որը թույլ է տալիս, որ Փրկիչը Քավության զորության շնորհիվ *բժշկի* մեզ (տես 3 Նեփի 9.13): Եթե ապաշխարության ինչ-որ մաս անհարմար է, կոտրված մեջքին հագցված գոտու նման, ամեն դեպքում մենք պետք է ապաշխարենք:

Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը ուսուցանել է. «Անկեղծ ապաշխարությունը մեզ վերադարձնում է անելու այն, ինչ ճիշտ է: Որպեսզի անկեղծորեն ապաշխարենք, մենք պետք է ընդունենք մեր մեղքերը և զղջանք, կամ զգանք աստվածային տրտմություն, և խոստովանենք այդ մեղքերն Աստծուն: Եթե մեր մեղքերը լուրջ են, մենք պետք է նաև խոստովանենք դրանք մեր լիազորված քահանայության ղեկավարին: Մենք պետք է խնդրենք Աստծուն, որ ների մեզ և անենք այն ամենը, ինչ կարող ենք, որ ուղղենք մեր գործողությունների արդյունքում պատճառված վնասը: Ապաշխարությունն նշանակում է մտքի ու սրտի փոփոխություն՝ մենք դադարում ենք անել այն ամենը, ինչը սխալ է, և սկսում ենք անել այն, ինչ ճիշտ է: Դա նորոգում է Աստծո, մեր և ընդհանրապես կյանքի հանդեպ մեր մոտեցումը»:[1]

Երբ մենք հաջողությամբ ավարտում ենք ապաշխարության ընթացքը, արդյունքը բժշկումն է, սփոփանքը և երջանկությունը: Դորոթի Ջ. Ռ. Վայթը գրել է.

Արցունքները, որ հոսում են արտաքուստ,
Մաքուր լվանում են ներքուստ:[2]

Տերը աղերսում է համառելով, սիրով և համոզումով, որ մենք ապաշխարենք, որովհետև Նա ցանկանում է բժշկել մեզ: Նա Իր մարմնով և հոգով տառապել է վճարելով մեր մեղքերի համար պատիժը, եթե մենք ապաշխարենք: Նա բացատրում է.

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Մեղքը աստվածային օրենքը գիտակցաբար զանց առնելն է: Հիսուս Քրիստոսի Քավությունը Աստծո պարգևն է Իր զավակներին, որը հնարավորություն է տալիս ուղղել կամ հաղթահարել մեղքի հետևանքները: . . .

Հիսուս Քրիստոսի Քավության պարգևը միշտ և ցանկացած վայրում մեզ ապաշխարության և ներման օրհնություններ է բերում»:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական, «Ապահով վերադարձի կետ», *Լիահոնա*, մայիս 2007, 99, 101.

Անառակ որդին խոնարհաբար վերադարձավ իր հոր մոտ և ասաց. «Հայր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առաջին, և այլևս արժանի չեմ քո որդի կոչվելու» (Ղուկաս ԺԵ.21): Հայրը նրան տուն ընդունեց: Նմանապես մեր Երկնային Հայրն է ընդունում մեզ, երբ մենք ապաշխարում ենք:

«Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն.

Բայց եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես.

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե՛ մարմնով, թե՛ ոգով,- և ես ցանկացա, որ գուցե չխմեմ դառը բաժակը և ընկրկեմ,-

Այնուամենայնիվ, փա՛ռք լինի Հորը, և ես ճաշակեցի ու ավարտեցի իմ նախապատրաստությունները մարդկանց զավակների համար:

Ուստի, ես կրկին պատվիրում եմ քեզ ապաշխարել» (ՎևՈ 19.16–20):

Թող որ մենք ապաշխարենք այժմ, դառնանք դեպի Տերը և բժշկվենք: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Ապահով վերադարձի կետ», *Լիահոնա,* մայիս 2007, 100:
2. Dorothy J. R. White, “Repentance,” *Ensign,* July 1996, 27.

Որո՞նք են ապաշխարության և ներման օրհնությունները:

- Սուրբ Հոգին կհաստատի մեզ, որ մենք ներված ենք:
- Աստված կհեռացնի մեր մեղավորության զգացողության բեռը:
- Մենք ավելի շատ կզգանք Սուրբ Հոգու ազդեցությունը:

Այս թեմայի մասին լրացուցիչ տեղեկության համար, տես Եզեկիել ԼԳ.15–16; Ալմա 12.33–34; 36.13, 17–20; և Բոյդ Կ. Փաքեր, “The Brilliant Morning of Forgiveness,” *Ensign,* Nov. 1995, 18–21:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԺՇԿՈՒՄ ՄԵԶ:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենը օգնում է պատասխանել այս հարցին գերագույն համաժողովի իր ելույթում՝ «Ապաշխարեք . . . որ ես կարողանամ ձեզ բժշկել» (*Լիահոնա,* նոյ. 2009, 40–43): Ալմա մարգարեն ևս օգնում է մեզ հասկանալ ապաշխարությունը և Քավությունը (տես Ալմա 42):

1. Ապաշխարությունը մեր կյանք է բերում Քրիստոսի Քավությունը և մենք բժշկվում ենք: Գեթսեմանում և Գողգոթայում Քրիստոսի կրած տառապանքը քավեց բոլորիս մեղքերը: Նա կարող է և ցանկանում է ներել մեր մեղքերը:
2. Երբ մեղք ենք գործում, մենք շրջվում ենք Աստծուց: Դա վնասում է մեր հոգին:
3. Երբ ապաշխարում ենք, մենք «վերա-դառնում» ենք դեպի Աստված: Դա օգնում է, որ մեր խղճի խայթը անցնի: Ներումը նաև հեռացնում է «հանցանքը մեր սրտից» (Ալմա 24.10) և «խղճի խաղաղություն» է պարգևում (Մոսիա 4.3), այդպիսով բժշկելով մեզ:

Կարող եք ինչ-որ մեկի հետ կիսվել վկայելով ապաշխարության արդյունքում ձեր ունեցած օրհնությունների մասին:

ԳԵԹՍԵՄԱՆԻ մաքրագործող զորությունը

Երեց Բրուս Ռ. Մակքոնկի (1915–85)

Տասներկու Առաքյալների Քվորումից

Բրուս Ռ. Մակքոնկին ծնվել է 1915թ. հուլիսի 29-ին, Միչիգանում, ԱՄՆ: Նա հաստատվել է Յոթանասունի Առաջին Խորհրդում 1946թ. հոկտեմբերի 6-ին, կարգվել է Առաքյալ 1972թ. հոկտեմբերի 12-ին: Նա մահացել է 1985թ. ապրիլի 19-ին, Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա: Այս ելույթը նա հղել է 1985թ. ապրիլի 6-ին:

Ես զգում եմ, և Հոգին կարծես հաստատում է, որ ամենակարևոր վարդապետությունը, որ կարող եմ հայտարարել և ամենազորավոր վկայությունը, որ կարող եմ բերել, Տեր Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության մասին է:

Նրա Քավությունը այն անգերազանցելի իրադարձությունն է, որ երբևէ եղել է կամ կարող է լինել Արարումից ի վեր անվերջ հավերժության բոլոր դարերի ընթացքում:

Դա մեծահոգության և շնորհի գերագույն արարք էր, որ միայն աստված կարող էր կատարել: Դրա շնորհիվ ուժի մեջ մտան Հոր փրկության հավերժական ծրագրի բոլոր ժամկետներն ու պայմանները:

Դրա շնորհիվ իրականացավ մարդու անմահությունը և հավերժական կյանքը: Դրա շնորհիվ բոլոր մարդիկ փրկվեցին մահից, դժոխքից, դևից և անվերջ տանջանքից:

Եվ դրա շնորհիվ, ովքեր հավատում և հնազանդվում են Աստծո փառահեղ ավետարանին, ովքեր ճշմարիտ ու հավատարիմ են և հաղթում են աշխարհին, ովքեր տառապում են Քրիստոսի և Նրա խոսքի համար, ովքեր պատժվում և խարազանվում են Նրա գործում, որին մենք նվիրված ենք, նրանք բոլորը կդառնան ինչպես իրենց Արարիչը և կնստեն Նրա հետ Նրա գահին և Նրա հետ հավետ կթագավորեն հավիտենական փառքի մեջ:

Այդ զարմանահրաշ բաների մասին խոսելով ես կօգտագործեմ իմ բառերը, թեպետ գուցե մտածեք, թե դրանք աստվածաշնչի խոսքերն են, խոսքեր, որ խոսվել են առաքյալների և մարգարեների կողմից:

Ճիշտ է, դրանք սկզբում հնչել են նրանց կողմից, սակայն դրանք այժմ իմն են, քանզի Աստծո Սուրբ Հոգին ինձ վկայել է, որ դրանք ճշմարիտ են, և այժմ կարծես Տերը առաջինն է հայտնել դրանք ինձ: Դրա շնորհիվ ես լսել եմ Նրա ձայնը և գիտեմ Նրա խոսքը:

Գեթսեմանի այգում

Երկու հազար տարի առաջ, Երուսաղեմից դուրս Գեթսեման անունը կրող մի գեղեցիկ պարտեզ կա, որտեղ Հիսուսը և Նրա մտերիմ ընկերները սովորություն ունեին հանգստանալու՝ խորհելով և աղոթելով:

Այնտեղ Հիսուսն ուսուցանում էր Իր աշակերտներին արքայության

ՀԱՅՏՆՎԱԾ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄԻ ԿԱՅՔԻ ՀԱՄԱՐ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ



վարդապետությունները, և նրանք բոլորը հաղորդակցվում էին Նրա հետ, ով մեր բոլորի Հայրն է, որի ծառայության մեջ նրանք ընդգրկվել էին և որի գործում նրանք ծառայում էին:

Սա սուրբ տարածք է, ինչպես Եդեմը, որտեղ Ադամն էր ապրում, ինչպես Սինայը, որտեղ Եհովան տվեց Իր օրենքները, ինչպես Գագաթը, որտեղ Աստծո Որդին տվեց Իր կյանքը որպես փրկագին շատերի համար, այս սուրբ վայրում Հավիտենական Հոր անմեղ Որդին Իր վրա վերցրեց բոլոր մարդկանց մեղքերը՝ ապաշխարության պայմանով:

Մենք չգիտենք, մենք չենք կարող ասել, ոչ մի մահկանացու միտք չի կարող լիովին ընկալել այն, ինչ Քրիստոսն արեց Գեթսեմանում:

Մենք գիտենք, որ Նրա յուրաքանչյուր ծակոտիից արյուն էր հոսում, երբ Նա խմում էր այդ դառը բաժակից, որը Նրան տվել էր Իր Հայրը:

Մենք գիտենք, որ Նա տառապեց թե մարմնով և թե հոգով, ավելի քան հնարավոր էր մարդու համար կենդանի վիճակում:

Մենք գիտենք, որ ինչ-որ կերպ մեզ համար անըմբռնելի ձևով Նրա տառապանքը բավարարեց արդարադատության պահանջները, ազատեց մեղավոր հոգիներին ցավից ու մեղքի պատժից, և ողորմածությունը ուժի մեջ մտավ նրանց համար, ովքեր հավատում են Նրա սուրբ անվանը:

Մենք գիտենք, որ Նա ուժասպառ ընկած էր գետնին, երբ ցավի և տանջանքների անսահման ծանրության տակ Նա դողում էր և ցանկանում, որ չխմեր այդ դառը բաժակը:

Մենք գիտենք, որ փառքի արքունիքից հրեշտակը եկավ զորացնելու Նրան Իր չարչարանքներում, և մենք կարծում ենք, որ դա հզոր Միքայելն էր, որը առաջինն ընկավ, որ մարդը լիներ:

Որքանով որ մենք կարող ենք դատել, այդ անսահման տառապանքները, այդ անհամեմատելի տանջանքները շարունակվեցին երեք թե չորս ժամ:

Ոչ մի մահկանացու ուղեղ չի կարող ընկալել Գեթսեմանում Քրիստոսի կատարածի ողջ կարևորությունը:

Նրա ձերբակալումը, դատը և խարազանումը

Դրանից հետո Նրա մարմինը պրկվեց և ուժասպառ եղավ, Նա դիմակայեց Հուդաներին և այլ մարմնավորված դևերին, մի քանիսին հենց Սանեդրինից, և պարանը գցած վիզը Նրան քարշ տվեցին ինչպես մի սովորական հանցագործ, որպեսզի դատվի գեր-հանցագործների կողմից, ովքեր որպես Հրեաներ նստած էին Ահարոնի աթոռին և որպես հռոմեացիներ գործածում էին Կեսարի իշխանությունը:

Նրանք Նրան տարան Աննայի, Կայափայի, Պիղատոսի, Հերովդեսի և կրկին Պիղատոսի մոտ: Նրան մեղադրեցին, անիծեցին և չարչարեցին: Նրանց կեղտոտ թուքը հոսում էր Նրա դեմքի վրայով, երբ դաժան հարվածները էլ ավելի էին թուլացնում Նրա ցավից կեղեքված մարմինը:

Եղեգի մտրակներով նրանք հարվածում էին Նրա մեջքին: Արյունը հոսում էր Նրա դեմքի վրայով, երբ փշեպսակը խրվեց Նրա դողացող ճակատի մեջ:

Սակայն այդ ամենից բացի Նրան «40-ից մեկը պակաս» մտրակի հարված հասցրեցին, մտրակելով բազմափոկ մտրակով, որի կաշվի վրա սուր ոսկորներ և կտրող մետաղներ էին հյուսված:

Շատերը մահանում էին միայն մտրակելուց, սակայն Նա բարձրացավ մտրակի տառապանքներից, որպեսզի անարգ մահ կրի Գագաթի սոսկալի խաչի վրա:

Ապա Նա կրեց Իր խաչը, մինչև որ ընկավ այդ ամենի ծանրությունից, ցավից և ահագնացող հոգևարքից:

Խաչի վրա

Վերջապես Գողգոթայի սարի վրա, որը Երուսաղեմից դուրս էր գտնվում, մինչ անօգնական աշակերտները նայում էին և զգում հոգևարքի տառապանքները իրենց իսկ մարմիններում, հռոմեացի զինվորները Նրան դրեցին խաչի վրա:

Մեծ թակերով նրանք երկաթե մեխերը խփեցին Նրա ոտքերի, ձեռքերի և դաստակների մեջ: Իսկապես Նա վիրավորվեց մեր զանցանքների համար և ծեծվեց մեր անօրինությունների համար:

Այնուհետև խաչը բարձրացվեց, որպեսզի բոլորը տեսնեն, նայեն, անիծեն ու ծաղրեն: Դա նրանք արեցին չար մաղձով երեք ժամ շարունակ՝ 9:00-ից մինչև կեսօր:

Ապա երկինքը մթնեց: Երեք ժամ խավարը պատեց ողջ երկիրը, դա եղավ նաև Նեփիացիների մոտ: Մեծ փոթորիկ բարձրացավ, քանի որ ինքը՝ բնության Աստվածը հոգևարքի մեջ էր:

Նա իսկապես հոգևարք էր ապրում, և քանի դեռ Նա կախված էր խաչի վրա ևս երեք ժամ՝ կեսօրից մինչև ժամը 15-ը, Գեթսեմանի բոլոր անսահման տառապանքները և անողորմ ցավերը վերադարձան:

Եվ վերջապես, երբ քավող հոգևարքը ավարտին էր մոտեցել, երբ հաղթանակը ձեռք էր բերվել, երբ Աստծո Որդին կատարել էր Իր Հոր կամքը ամեն ինչում, այդ ժամանակ Նա ասաց. «Կատարուած է» (Հովհաննես ԺԹ.30), և ինքնակամ ավանդեց Իր հոգին:

Հոգևոր աշխարհում

Երբ ողորմած մահվան խաղաղությունը և մխիթարությունը ազատեց Նրան մահկանացու ցավից ու տառապանքներից, Նա մտավ Աստծո դրախտ:

Երբ Նա Իր հոգին մատուցեց մեղքի դիմաց, Նա պատրաստ էր տեսնելու Իր սերունդը՝ ըստ մեսիայական խոսքի:

Նրանք բոլոր սուրբ մարգարեներն ու հավատարիմ Սրբերն էին անցած դարերից ի վեր, նրանց թվին են պատկանում նրանք, ովքեր իրենց վրա են վերցրել Նրա անունը, և ովքեր հոգով ծնված լինելով Նրա կողմից, դարձել էին Նրա որդիներն ու դուստրերը, ինչպես մենք, նրանք բոլորը հավաքվել էին հոգևոր աշխարհում, այնտեղ՝ տեսնելու Նրա դեմքը և լսելու Նրա ձայնը:

Մոտ 38-40 ժամ անց, երեք օր հետո, ինչպես Հրեաներն էին չափում ժամանակը, մեր օրհնյալ Տերը եկավ Արիմաթիացու գերեզմանի մոտ, որտեղ Իր մասամբ օծված մարմինը դրվել էր Նիկոդեմոսի և Արիմաթիացի Հովսեփի կողմից:

Նրա Քավությունը

Այնուհետև, մեզ համար անըմբռնելի ձևով Նա վերցրեց այդ մարմինը, որը դեռևս չէր ապականվել և բարձրացավ այդ փառահեղ անմահություն, որը Նրան դարձրեց Իր հարություն առած Հոր պես:

Ապա Նա ստացավ երկնքի և երկրի ողջ զորությունը, ձեռք բերեց հավերժական վեհացում, հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն և շատ շատերին, և համբարձվեց երկինք, որպեսզի նստի Ամենազոր Հայր Աստծո աջ կողմում և հավետ թագավորի հավերժական փառքի մեջ:

Երրորդ օրը Նրա մահից բարձրանալը պսակեց Քավությունը: Կրկին, մեզ համար անըմբռնելի կերպով Նրա Հարության պտուղները կհասնեն բոլոր մարդկանց, որպեսզի բոլորը բարձրանան գերեզմաններից:

Ինչպես Ադամը մահ բերեց, այնպես էլ Քրիստոսը կյանք բերեց, ինչպես Ադամը մահկանացու կյանքի հայրն է, այնպես էլ Քրիստոսը անմահության հայրն է:

Եվ առանց այդ երկուսի՝ մահկանացու կյանքի և անմահության, մարդը չի կարող գործել իր փրկությունը և համբարձվել բարձունքներ՝ երկնքից այն կողմ, որտեղ աստվածները և հրեշտակները հավետ ապրում են հավերժական փառքի մեջ:

Քավության գիտելիքը

Արդ, Քրիստոսի Քավությունը ավետարանի ամենակարևոր և հիմնական վարդապետությունն է, և դա մեր բոլոր հայտնված ճշմարտություններից ամենաքիչ ըմբռնելին է:

Մեզանից շատերը մակերեսային գիտելիքներ ունեն և ապավինում են Տիրոջը և Նրա մեծահոգությանը, որպեսզի մեզ դուրս բերի փորձություններից և կյանքի վտանգներից:

Սակայն եթե մենք ցանկանում ենք Ենովքի և Եղիայի պես հավատք ունենալ, մենք պետք է հավատանք այն ամենին, ինչին նրանք հավատացին, իմանանք այն, ինչ նրանք իմացան, և ապրենք այնպես, ինչպես նրանք ապրեցին:

Ես ձեզ հրավիրում եմ միանալ ինձ և ձեռք բերել



Քավության հիմնավոր և վստահելի գիտելիքը:

Մենք պետք է մի կողմ դնենք մարդկանց փիլիսոփայությունները և իմաստունների իմաստությունը, և ականջ դնենք Հոգուն, որը տրվել է մեզ որպես ուղեցույց դեպի ամեն ճշմարտություն:

Մենք պետք է քննենք սուրբ գրքերը, ընդունենք դրանք որպես Տիրոջ միտք, կամք, ձայն և Աստծո զորություն՝ ի փրկություն:

Կարդալով, խորհելով և աղոթելով մեր միտք կգան Աստծո երեք պարտեզները՝ Եդեմի Պարտեզը, Գեթսեմանի Պարտեզը և Դատարկ գերեզմանի պարտեզը, որտեղ Հիսուսը հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն:

Արարում, Անկում և Քավություն

Եդեմում մենք կտեսնենք այն ամենը, ինչ ստեղծվեց իր դրախտային վիճակում՝ առանց մահ, առանց ծնունդ, առանց փորձող փորձառություններ:

Մենք կիմանանք, որ նման արարումը, այժմ մարդու համար անհայտ, Անկում ապահովելու միակ ուղին էր:

Այնուհետև մենք կտեսնենք Ադամին և Եվային, առաջին տղամարդուն և առաջին կնոջը, որոնք իջան իրենց անմահ վիճակից և դրախտային փառքից՝ դառնալով առաջին մահկանացու մարմինը երկրի վրա:

Մահկանացու կյանքը, ներառյալ ծնունդ տալը և մահը, եկան աշխարհ: Եվ մեղքի պատճառով, սկսվեց փորձության և փորձվելու վիճակը:

Այնուհետև Գեթսեմանում մենք կտեսնենք, ինչպես է Աստծո Որդին փրկագնում մարդուն աշխարհիկ և հոգևոր մահից, որոնք մեզ մոտ էին եկել Անկման պատճառով:

Եվ վերջապես, դատարկ գերեզմանի առաջ կանգնած մենք կիմանանք, որ մեր Տեր Քրիստոսը կոտրեց մահվան կապանքները և հավետ հաղթանակ տարավ գերեզմանի հանդեպ:

Նրա Հարության պտուղները կհասնեն բոլոր մարդկանց, որպեսզի բոլորը բարձրանան գերեզմաններից:

Ուստի, Արարումը Անկման հայրն է. Անկումով եկավ մահկանացու կյանքն ու մահը, իսկ Քրիստոսով եկավ անմահությունը և հավերժական կյանքը:

Եթե չլիներ Ադամի Անկումը, որով մահը եկավ, չէր կարող լինել Քրիստոսի Քավությունը, որով կյանքը եկավ:

Նրա Քավող արյունը

Եվ այժմ, այս կատարյալ Քավության վերաբերյալ, որը գործվեց Աստծո արյունը հեղվելով, ես վկայում եմ, որ դա տեղի ունեցավ Գեթսեմանում և Գողգոթայում, իսկ Հիսուս Քրիստոսի վերաբերյալ, ես վկայում եմ, որ Նա կենդանի Աստծո Որդին է և խաչվեց աշխարհի մեղքերի համար: Նա մեր Տերն է, մեր Աստվածը և մեր Թագավորը: Սա ես ինքս գիտեմ՝ անկախ որևէ մեկից:

Ես Նրա վկաներից մեկն եմ, և մի գալիք օր ես կշոշափեմ Նրա ձեռքերի ու ոտքերի վրայի մեխերի տեղերը, և իմ արցունքներով կթրջեմ Նրա ոտքերը:

Սակայն այդ օրը, ոչ առավել քան այսօր, ես կիմանամ, որ Նա Աստծո Ամենազոր Որդին է, որ Նա է մեր Փրկիչն ու Քավիչը, և որ այդ փրկությունը գալիս է ոչ այլ կերպ, քան Նրա քավող արյունով:

Աստված շնորհում է, որ մենք բոլորս քայլենք լույսի միջով, ինչպես մեր Հայր Աստվածն է լույսի մեջ, որպեսզի համաձայն խոստումների՝ Նրա Որդի Հիսուս Քրիստոսի արյունը մաքրագործի մեզ բոլոր մեղքերից: ■

Ենթավերնագրերն ավելացված են, մեծատառերը, կետադրությունը և ուղղագրությունը ստանդարտեցված են:

ՀՍՏԻՍՈՒՄ Կ ՄԻԱՄԻՏ ՄԻԱՄԻՏ ՄԻԱՄԻՏ ՄԻԱՄԻՏ ՄԻԱՄԻՏ 8. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ ԲԱՆԻ. ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱԶԴԱՆՇԱՆԵՐ ՊԱՏՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՍԱԼՈՆԻԿԻ ԹԻՖԵԼՍՈՒԹՅԱՄԲ

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

ՄԻՇՏ ՀԻՇԵՔ ԱՄԱՆ

Երբ միշտ հիշում ենք Փրկչին, մենք կարող ենք «ուրախությամբ անել ամեն բան, որ մեր ուժի սահմաններում է»՝ վստահ, որ Նրա զորությունը և մեր հանդեպ սերը կօգնի մեզ:

Հաղորդության աղոթքները հաստատում են, որ Տեր Հիսուս Քրիստոսի կողմից հիմնված հաղորդության հիմնական նպատակներից մեկն է՝ «միշտ հիշել նրան» (ՎևՈւ 20.77, 79): Փրկչին հիշել նշանակում է հիշել Նրա Քավությունը, որը խորհրդանշաբար ներկայացվում է հացով և ջրով որպես Նրա տառապանքի և մահվան խորհրդանիշներ: Մենք պետք է երբեք չմոռանանք ինչ է արել Նա մեզ համար, քանզի առանց Նրա Քավության և Հարության կյանքը նշանակություն չէր ունենա: Ինչևէ, Նրա Քավությամբ և Հարությամբ մեր կյանքը ունի հավերժական, աստվածային հնարավորություններ:

Ես ցանկանում եմ կանգ առնել «միշտ հիշել նրան» արտահայտության երեք պարզաբանումների վրա. առաջինը՝ փնտրենք իմանալ Նրա կամքը և հետևենք դրան, երկրորդ՝ հասկանանք և ընդունենք ամեն մտքի, խոսքի և գործի համար Քրիստոսին հաշվետու լինելու մեր պարտականությունը, և երրորդ, ապրենք հավատքով և աներկյուղ, որ միշտ անհրաժեշտության դեպքում ակնկալենք Փրկչի օգնությունը:

ԽԱՄՈՒՄՈՎՔՈՎ ԵՍ ԹՈՂՆՈՒՄ ՀՅԴ, ՎՈՒՏԵՐ ՈՒԵՅՆ, ՏՐԱՄԱՐՈՒԵԼ Է ԵՎԵՐԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐՈՒՆԸ BROKEN BREAD, ՎՈՒՏԵՐ ՈՒԵՅԱՐ

Դուք և ես կարող ենք Քրիստոսին մեր կյանքի առանցքը դարձնել և մեկ դառնալ Նրա հետ, ինչպես Նա է մեկ Հոր հետ: Մենք կարող ենք մեր կյանքում ամեն ինչ դուրս հանել և ապա այդ ամենը վերադասավորել ըստ առաջնահերթությունների՝ կենտրոնում ունենալով Փրկչին:



ՔՐԻՍՏՈՍԸ ԳԵԹՍԵՄԱՆՈՒՄ, ՀԵՆՐԻ ՀՈՍՍԱՆ, ՏՐՍՍՈՒՐԵԼ Է

1. Փնտրենք իմանալ Քրիստոսի կամքը և հետևենք դրան, ճիշտ ինչպես Նա էր փնտրում Հոր կամքը:

Հաղորդության մեջ հացի օրհնությունը պարտավորեցնում է մեզ պատրաստակամորեն վերցնել մեզ վրա Որդու անունը, «և միշտ հիշել նրան և (ՎևՈւ 20.77): Նաև ճիշտ կլինի այս ուխտը կարդալ որպես՝ «միշտ հիշել Նրան՝ *պահելու* Նրա պատվիրանները»: Ահա թե ինչպես է Նա միշտ հիշել Հորը: Ինչպես Նա է ասել. «Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել. ինչպես լսում եմ՝ այնպես էլ դատում, և իմ դատարանն արդար է. որովհետև իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հոր կամքը» (Հովհաննես Ե.30):

Հիսուսը կատարյալ միասնության հասավ Հոր հետ՝ Իրեն մարմնով և հոգով ենթարկելով Հոր կամքին: Ի նկատի ունենալով Իր Հորը, Հիսուսն ասել է. «Ես միշտ նրան հաճելի բաներն եմ անում» (Հովհաննես Ը.29): Որովհետև Հոր կամքն էր, որ Հիսուսը նույնիսկ ենթարկվեց մահվան, «Որդու կամքը կուլ գնացած լինելով Հոր կամքին» (Մոսիա 15.7): Հիսուսի ծառայությունը յուրովի պարզ ու զորեղ էր, քանի որ Նա ուշադրության կենտրոնում էր պահում Հորը:

Նույնկերպ դուք և ես կարող ենք Քրիստոսին մեր կյանքի առանցքը դարձնել և մեկ դառնալ Նրա հետ, ինչպես Նա է մեկ Հոր հետ (տես Հովհաննես ԺԷ.20–23):

Մենք կարող ենք մեր կյանքում ամեն ինչ դուրս հանել և ապա այդ ամենը վերադասավորել ըստ առաջնահերթությունների՝ կենտրոնում ունենալով Փրկչին: Մենք պետք է առաջին տեղում դնենք այն ամենը, ինչը օգնում է միշտ հիշել Նրան, օրինակ՝ հաճախ աղոթել և սուրբ գրություններն ուսումնասիրել, խորապես ուսումնասիրել առաքելական ուսմունքները, ամեն շաբաթ պատրաստվել արժանիորեն ճաշակելու հաղորդությունից, Կիրակնօրյա երկրպագությանը մասնակցել և գրել ու հիշել, թե ինչ է Հոգին ու փորձառությունն ուսուցանում մեզ աշակերտ լինելու մասին:

Այլ բաներ ևս կարող են գալ ձեր միտք, որոնք հատկապես պետք են ձեզ ձեր կյանքում այս պահին: Երբ մենք բավարար ժամանակ և միջոցներ ենք տրամադրում այդ ամենին մեր կյանքի կենտրոնում պահելով Քրիստոսին, մենք կարող ենք սկսել ավելացնել այլ պատասխանատվություններ և արժեքավոր բաներ, օրինակ՝ կրթություն և ընտանեկան պատասխանատվություններ: Այսպիսով, ուղղակի լավ բաները մեր կյանքից դուրս չեն մղի կարևոր բաներին, և ավելի քիչ արժեք ներկայացնող բաները ցածր առաջնահերթություն կունենան կամ ընդհանրապես կանհետանան:

Ես հասկանում եմ, որ այնքան էլ հեշտ չէ մեր կանքը Հիսուս Քրիստոսի կամքին համապատասխանեցնելը, ինչպես որ Նա է Իր կամքը Հոր կամքին համապատասխանեցնում: Նախագահ Բրիգամ Յանգը (1801–77) մեր դժվարությունների մասին ասել է.

«Այն ամենից հետո, ինչ ասվել և արվել է, չե՞ք կարծում, որ մեր Աստծո հանդեպ վստահության պակաս կա, չնայած որ նա այս ժողովրդին այսքան երկար առաջնորդել է: Չե՞ք զգում դա ձեր մեջ: Դուք կարող եք հարցնել. Եղբայր Բրիգամ, դուք զգո՞ւմ եք դա ձեր մեջ: Այո, ես գիտակցում եմ, որ ինչ-որ չափով դեռևս լիարժեքորեն չեմ վստահում նրան, ում ես ապավինում եմ: Ինչո՞ւ: Որովհետև ես զորություն չունեմ ինձ վրա անկման հետևանքների պատճառով. . .

. . .Երբեմն ինչ-որ բան է բարձրանում իմ մեջ, որը նկատելիորեն բաժանիչ գիծ է քաշում իմ շահի և իմ Երկնային Հոր շահի միջև. Ինչ-որ բան, որի պատճառով իմ շահը և իմ Երկնային Հոր շահը ճշգրտորեն չեն համատեղվում:

Ես գիտեմ, որ մենք պետք է զգանք և հասկանանք, որքան որ հնարավոր է, որքան ընկած վիճակը թույլ է տալիս մեզ, որքան մենք կարող ենք հավատք և գիտելիք ստանալ ինքներս հասկանալու, որ այդ Աստծո շահը, որին մենք ծառայում ենք, մեր շահն է, և որ մենք այլ շահ չունենք ոչ ժամանակի, ոչ էլ հավերժության մեջ»:[1]

Թեպետ դա հեշտ չի լինի, մենք կարող ենք հաստատակամորեն առաջ մղվել Տիրոջ հանդեպ հավատքով: Ես կարող եմ հաստատել, որ ժամանակի ընթացքում Փրկչին միշտ հիշելու մեր ցանկությունն ու կարողությունը կաճի: Մենք կարող ենք համբերատար աշխատել այդ ուղղությամբ և միշտ աղոթել մեզ համար անհրաժեշտ խորաթափանցության և աստվածային օգնության համար: Նեփին խորհուրդ է տվել. «Ես ասում եմ ձեզ, որ դուք միշտ պետք է աղոթեք և չթուլանաք. որ դուք չպետք է կատարեք որևէ բան Տիրոջ համար, մինչև առաջին հերթին չաղոթեք Հորը՝ Քրիստոսի անունով, որպեսզի նա սրբագործի ձեր կատարումը ձեզ համար, որպեսզի ձեր կատարումը կարողանա լինել ձեր հոգու բարօրության համար» (2 Նեփի 32.9):

Ես նմանտիպ աղոթքի պարզ օրինակի ականատեսն եմ եղել, երբ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսին և ինձ հանձնարարվել էր վիդեոհամաժողովի հարցազրույց վարել մեկ այլ երկրից մի զույգի հետ: Ստուդիա գնալուց առաջ ես մեկ անգամ ևս վերանայեցի այն տեղեկությունը, որ մենք հավաքել էինք այդ զույգի մասին և զգացի, որ ես պատրաստ եմ հարցազրույցին: Նշանակված ժամից մի քանի րոպե առաջ ես տեսա Երեց Օուքսին նստած միայնակ՝ գլուխը խոնարհած: Մի պահ նա բարձրացրեց գլուխը և ասաց. «Ես արդեն վերջացնում էի աղոթքս այս հարցազրույցին պատրաստ լինելու համար: Մենք խորաթափանցության պարգևի կարիքը կունենանք»: Նա չանտեսեց ամենակարևոր պատրաստությունը՝ աղոթքը, որը պետք է սրբագործեր մեր խոսքը հոգուտ մեզ և Տիրոջ փառքի»:

Երբ էլ որ մենք կյանքում «անվնաս դուրս ենք եկել» կամ մեզ հաջողվել է ինչ-որ բան թաքցնել մյուսներից, միևնույն է մենք դեռ պատասխան կտանք, երբ անխուսափելի օրը գա, և մենք կկանգնենք Հիսուս Քրիստոսի՝ մաքուր ու կատարյալ արդարադատության Աստծո առջև:

Պատրաստվենք հաշվետու լինելու Քրիստոսին յուրաքանչյուր մտքի, խոսքի և գործի համար:

Սուրբ գրությունները պարզաբանում են, որ կլինի դատաստանի մեծ օր, երբ Տերը կկանգնի դատելու ազգերին (տես 3 Նեփի 27.16) և երբ ամեն ծունկ կծալվի և ամեն լեզու կխոստովանի, որ Նա է Քրիստոսը (տես Հռովմայեցիս ԺԴ.11; Մոսիա 27.31; ՎԵՈՒ 76.110): Այդ դատաստանի անհատական բնույթը և մեծությունը նկարագրվում է Ալմայի կողմից Մորմոնի Գրքում.

«Քանզի մեր խոսքերը կդատապարտեն մեզ, այո, բոլոր մեր գործերը կդատապարտեն մեզ. մենք չենք համարվի անբիծ. և մեր մտքերը նույնպես կդատապարտեն մեզ. և այս սոսկալի վիճակում մենք չենք համարձակվի նայել վեր՝ առ Աստված. և մենք միանգամայն ուրախ կլինեինք, եթե կարողանայինք հրամայել ժայռերին ու լեռներին ընկնել մեզ վրա՝ թաքցնելու մեզ նրա ներկայությունից:

Բայց այս չի կարող լինել. մենք պետք է առաջ գանք և կանգնենք նրա առջև՝ նրա փառքի մեջ, և՛ նրա իշխանության, և՛ նրա զորության, վեհափառության, և՛ տիրապետության մեջ, և ընդունենք ի հավիտենական համոթս մեզ, որ բոլոր նրա դատաստաններն արդար են. որ նա արդար է իր բոլոր գործերում, և որ նա ողորմած է հանդեպ մարդկանց զավակները, և որ նա ունի ողջ զորությունը փրկելու ամեն մի մարդու, ով հավատում է նրա անունին ու առաջ բերում ապաշխարությանը վայել պտուղ» (Ալմա 12.14–15):

Երբ Փրկիչը ներկայացրեց Իր ավետարանը, նրանում այս դատաստանը կենտրոնական դեր ուներ: Նա ասաց.

«Ահա, ես տվել եմ ձեզ իմ ավետարանը, և այս է ավետարանը, որ ես տվել եմ ձեզ, որ ես եկա աշխարհ՝ կատարելու իմ Հոր կամքը, որովհետև իմ Հայրն ուղարկեց ինձ:

Եվ իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ. իսկ հետո, երբ խաչի վրա էի բարձրացվել, որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց ձգել դեպի

ԱՐՎԵՍՏ ՏԱՐԱՆՈՒՄ. ՏԵՍՈՒՄԸ ԵՎՍԻՈՒՄԸ © IRI

ինձ, որպեսզի ինչպես ես բարձրացվեցի մարդկանց կողմից, ճիշտ նույնպես մարդիկ բարձրացվեն Հոր կողմից՝ կանգնելու իմ առջև, դատվելու ըստ իրենց գործերի՝ լինեն դրանք բարի, թե լինեն դրանք չար,

Եվ այս պատճառով եմ ես բարձրացվել. հետևաբար, համաձայն Հոր զորությանը, ես բոլոր մարդկանց կձգեմ դեպի ինձ, որպեսզի նրանք կարողանան դատվել՝ համաձայն իրենց գործերի» (3 Նեփի 27.13–15)։

«Խաչի վրա բարձրացված» լինելը հիարկե Հիսուս Քրիստոսի Քավությանը անդրադառնալու խորհրդանշական ձևն է, որով Նա բավարարեց այն պահանջները, որոնք արդարադատությունը կարող էր դնել մեզանից յուրաքանչյուրի առաջ։ Այլ խոսքերով, Գեթսեմանում և Գողգոթայի վրա Իր տառապանքով և մահով Նա վճարեց այն ամենը, ինչը արդարադատությունը կարող էր պահանջել մեզանից մեր մեղքերի համար։ Ուստի, Նա կանգնած է արդարադատության փոխարեն և արդարադատության մարմնավորումն է։ Ճիշտ ինչպես Աստված սեր է, Աստված նաև արդարադատություն է։ Այժմ մենք պարտք ենք և պարտական ենք Հիսուս Քրիստոսին։ Հետևաբար, Նա իրավունք ունի մեզ դատելու։

Նա սահմանում է, որ այդ դատաստանը հիմնված է մեր գործերի վրա։ Նրա ավետարանի հատկապես «բարի ավետիսը» այն է, որ Նա առաջարկում է ներման պարգևը՝ պայմանավորված մեր ապաշխարությամբ։ Ուստի, եթե մեր գործերի թվում ընդգրկված են ապաշխարության գործերը, Նա ներում է մեր մեղքերն ու սխալները։ Եթե մենք մերժում ենք ներողությունը մերժելով ապաշխարելը, ապա պարտադիր են դառնում արդարադատության պատիժները, որ Նա այժմ ներկայացնում է։ Նա ասել է. «Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն. բայց եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես» (ՎևՈ 19.16–17)։

Ուստի, միշտ Նրան հիշել նշանակում է միշտ հիշել, որ ոչինչ թաքնված չէ Նրանից։ Մեր կյանքում չկան բաներ, լինի գործ, խոսք կամ անգամ միտք, որը կարելի է պահել Հորից և Որդուց։ Քննության ժամանակ որևէ խարդախություն, խանութից ապրանք գողանալու որևէ դեպք, հեշտասեր երևակայություն կամ հանդուրժողականություն, և որևէ սուտ չի անտեսվում, թաքնվում կամ մոռացվում։ Երբ էլ որ մենք կյանքում «անվնաս դուրս ենք եկել» կամ մեզ հաջողվել է ինչ-որ բան թաքցնել մյուսներից, միևնույն է մենք դեռ պատասխան կտանք, երբ անխուսափելի օրը գա, և մենք կկանգնենք Հիսուս Քրիստոսի՝ մաքուր ու կատարյալ արդարադատության Աստծո առջև։

Այս իրականությունը օգնել է ինձ տարբեր ժամանակներում առաջ շարժվել, թե ապաշխարելով կամ թե խույս տալով մեղքից ընդհանրապես։ Մի առիթով տան վաճառքի հետ կապված սխալ կար փաստաթղթերում, և ես կարող էի օրինական ձևով ավելի շատ փող ստանալ գնորդից։ Անշարժ գույքի իմ գործակալը հարցրեց, թե արդյոք ցանկանում եմ պահել գումարը, քանի որ դա իմ իրավունքն էր։ Ես մտածեցի Տիրոջ առաջ կանգնելու, արդարադատության անձնավորման մասին, և պատկերացրեցի ինչպես եմ փորձում բացատրել, որ ես օրինական իրավունք ունեի օգտվել գնորդից և նրա սխալից։ Ես չկարողացա ինձ տեսնել բավականաչափ համոզիչ, հատկապես երբ ես միևնույն ժամանակ հավանաբար պետք է ողորմածություն խնդրեի ինձ համար։ Ես ասացի գործակալին, որ մենք կկանգնենք խոստացված գնի վրա, ինչպես պայմանավորվել էինք սկզբում։ Ինձ համար ցանկացած չափի գումարից ավելի կարևոր է այն, որ ես ապաշխարելու կարիք չունեմ այդ գործարքի համար։

Իմ պատանեկության տարիներին մի անգամ իմ անփութության պատճառով եղբայրներիցս մեկը մի փոքր վնասվածք ստացավ։ Ես այդ ժամանակ իմ հիմարության պատճառով չխոստովանեցի, և ոչ ոք այդպես էլ չիմացավ իմ դերը տվյալ դիպվածում։ Տարիներ անց ես աղոթում էի, որ Աստված ինձ հայտներ իմ կյանքում տեղի ունեցած այն բաները, որոնք շտկելու կարիք ունեին, որպեսզի Նրա համար ավելի ընդունելի լինեի, և իմ միտք եկավ այդ դեպքը։ Ես այդ մասին մոռացել էի, սակայն Հոգին շշնջաց, որ դա չլուծված զանցանք է, որը պետք է խոստովանեի։ Ես զանգահարեցի եղբորս, ներողություն խնդրեցի և խնդրեցի նրա ներողամտությունը, որը նա անմիջապես և մեծահոգաբար տվեց։ Իմ շփոթվածությունը և զղջումը ավելի քիչ կլիներ, եթե ես ներողություն խնդրած լինեի այդ դեպքը տեղի ունեցած պահին։

Ինձ համար հետաքրքրական և կարևոր էր այն, որ Տերը չէր մոռացել այդքան վաղուց տեղի ունեցած այդ դեպքի մասին, թեպետ ես մոռացել էի։ Մեղքերը իրենք իրենց չեն լուծվում կամ պարզապես անհետանում։ Մեղքերը թաքցվելով չեն մոռացվում հավերժական տնտեսության մեջ։ Դրանք պետք է լուծել, իսկ հրաշալին այն է, որ Փրկչի քավող շնորհով դրանք կարելի է լուծել ավելի թեթև և ավելի քիչ ցավալի ձևով, քան ուղղակիորեն ինքնուրույն բավարարելով արդարադատության պահանջները։

Մենք նաև պետք է քաջալերվենք դատաստանի մասին մտածելիս, որի ժամանակ ոչինչ չի անտեսվի, որովհետև դա նաև նշանակում է, որ հնազանդության, բարության ամեն մի դրսևորում և ամեն բարի գործ, որքան էլ փոքր լինի, երբեք չի մոռացվի, և ոչ մի

Մենք գիտենք, որ դժվարությունները, հիասթափությունները և վշտերը կգան մեզանից յուրաքանչյուրին տարբեր կերպ, սակայն մենք նաև գիտենք, որ վերջում՝ մեր աստվածային Բարեխոսի շնորհիվ բոլոր բաները միասին կգործեն մեր բարիքի համար:

համապատասխան օրինություն երբևէ ետ չի պահվի:

Մի երկյուղիր, այլ օգնության համար նայիր Փրկչին:

Վերականգնման վաղ օրերին Հիսուսը խորհուրդ տվեց և սփոփեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին, ովքեր աշխատում էին Մորմոնի Գրքի թարգմանության վրա և որոնց շուտով քահանայություն շնորհվեց: Այդ ժամանակ Ջոզեֆը 23 տարեկան էր, իսկ Օլիվերը՝ 22: Եթե ոչ մշտապես, ապա նրանք հաճախ էին հանդիպում հալածանքի և այլ խոչընդոտների: Այդ ժամանակ, 1829թ. ապրիլին Տերն այս խոսքերն ասաց նրանց.

«Ուստի, մի վախեցիր, փոքրի՛կ հոտ. բարիք գործիր. թող երկիրն ու դժոխքը միանան քո դեմ, քանզի, եթե դու կառուցված ես իմ վեմի վրա, նրանք չեն կարող գերիշխել:

Ահա, ես ձեզ չեմ դատապարտում. գնացեք ձեր ճամփով և այլևս մի մեղանչեք. լրջմտորեն կատարեք այն գործը, որը պատվիրել եմ ձեզ:

Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք:

Տեսեք խոցվածքը, որ ծակեց իմ կողը, և նաև բևեռների նշանները՝ իմ ձեռքերի ու ոտքերի վրա. եղեք հավատարիմ, պահեք իմ պատվիրանները և դուք կժառանգեք երկնքի արքայությունը: Ամեն» (ՎևՈ 6.34-37):

Մեր ամեն մի մտքով Փրկչին նայելը, իհարկե, այլ կերպ ասած «միշտ նրան հիշելն» է: Դա անելիս մենք չպետք է կասկածենք կամ վախենանք: Փրկիչը հիշեցրեց Ջոզեֆին և Օլիվերին, ինչպես հիշեցնում է մեզ, որ Իր Քավության շնորհիվ Նրան է տրվել երկնքի և երկրի ողջ զորությունը (տես Մատթեոս ԻԸ.18) և Նա ունակություն ու կամք ունի պաշտպանելու մեզ և բավարարելու մեր կարիքները: Մենք պետք

ԱՄՈՐԵՑԻ ԿԻՆՈՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ԿՈՒՏԵՐ ՈՒՆԵՆ, ՏՐՄԱՆՈՐԵԼԻ ԵՎԵՐՆՅՈՒՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

է միայն հավատարիմ լինենք, և կարող ենք անվերապահորեն ապավինել Նրան:

Նախքան Ջոզեֆի և Օլիվերի սփոփող հայտնություն ստանալը, Մարգարեն տանջալից և ցավալի փորձառություն ունեցավ, որը սովորեցրեց նրան նայել Փրկչին և չվախենալ մարդկանց կարծիքներից, ճնշումներից և սպառնալիքներից:

1828թ. հունիսին Ջոզեֆը թույլ տվեց, որ Մարտին Հարիսը վերցնի Մորմոնի Գրքի 116 ձեռագիր էջերը Հարմոնիից, Պենսիլվանիա, և տանի Պալմիրա, Նյու Յորք, այնտեղ ապրող իր ընտանիքի անդամներին ցույց տալու նպատակով: Երբ Մարտինը չվերադարձրեց ձեռքագրերը ինչպես որ խոստացել էր, վրդովված Ջոզեֆը փոստակառքով գնաց իր ծնողների տուն Մանչեսթր ավան, Նյու Յորք: Մարգարեն անմիջապես մարդ ուղարկեց Մարտինի ետևից: Երբ Մարտինը եկավ, նա խոստովանեց, որ ձեռագրերն իր մոտ չեն և չգիտի որտեղ են:

Ջոզեֆը բացականչեց. «Ո՜վ, իմ Աստված, իմ Աստված . . . Ամեն ինչ կորած է, կորած է: Ի՞նչ պիտի անեմ: Ես մեղանչել եմ: Այդ ես բերեցի Աստծո ցասումը նրան խնդրելով այն, ինչ իրավունք չունեի խնդրելու . . . Ես արժանի եմ ամեն հանդիմանության, որ Բարձրյալի հրեշտակը կբերի ինձ վրա»:

Հաջորդ օրը Մարգարեն վերադարձավ Հարմոնի: Այնտեղ հասնելով նա ասաց. «Ես խոնարհեցրեցի ինձ հզոր աղոթքով Տիրոջ առաջ . . . որ հնարավորության դեպքում կարողանամ ողորմածություն ստանալ և ներվել այն ամենի համար, ինչ ես արել եմ հակառակ նրա կամքի»:[2]

Ավելի շատ ոչ թե Աստծուց, այլ մարդուց վախենալու համար Ջոզեֆին հանդիմանելուց հետո, Տերն ասաց նրան.

«Ահա, դու Ջոզեֆն ես, և դու ընտրվել ես Տիրոջ գործը կատարելու, սակայն, օրինազանցության պատճառով, եթե դու աչալուրջ չլինես, ապա կընկնես:

Սակայն հիշիր, Աստված ողորմած է. ուստի, ապաշխարիր այն բանից, ինչ դու արել ես, ինչը դեմ է այն պատվիրանին, որը ես տվել էի քեզ, և դու դեռևս ընտրված ես և կրկին կանչված այս գործին» (ՎևՈւ 3.9–10):

«Որոշ ժամանակով Տերը Ջոզեֆից վերցրեց Ուրիմն ու Թումիմը և թիթեղները: Սակայն այդ ամենը կրկին վերադարձվեց նրան: «Հրեշտակը հրճվում էր Ուրիմն ու Թումիմը ինձ վերադարձնելիս,- հիշում էր Մարգարեն,- և ասաց, որ Աստված գոհ է իմ հավատարմությունից և հնազանդությունից, և սիրում է ինձ իմ ապաշխարելու և ջանասիրաբար աղոթելու համար, որով ես այդքան լավ կատարել էի իմ պարտականությունը . . . որպեսզի կրկին սկսեի թարգմանչական աշխատանքը»: Ջոզեֆը առաջ էր գնում մեծ աշխատանքում այժմ արդեն զորանալով՝ Տիրոջ ներողամտությանը արժանանալու քաղցր զգացողություններով և Նրա կամքը կատարելու նորովի վճռականությամբ»:[3]

Այս փորձառությունից հետո Մարգարեն վճռականորեն որոշեց Աստծուն ապավինել և չվախենալ մարդկանց վերաբերմունքից: Ուստի, Նրա կյանքը դարձավ վառ օրինակ, թե ինչ է նշանակում հիշել Քրիստոսին, ապավինելով Նրա զորությանը և ողորմածությանը: Ջոզեֆն այսպիսի խոսքերով արտահայտեց այդ հասկացողությունը Միսուրիի Լիբերթի բանտում իր ամենադժվարին և ծանր ձերբակալության ժամանակ.

«Դուք գիտեք, եղբայրնե՛ր, որ մի շատ մեծ նավ փոթորիկի ժամանակ մեծապես օգտվում է մի շատ փոքր ղեկից, անհրաժեշտ դիրքում պահվելով քամու և ալիքների դեմ:

Հետևաբար, շատ սիրելի՛ եղբայրներ, եկեք ուրախությամբ անենք ամեն բան, որ մեր ուժի սահմաններում է. և հետո, թող մենք կանգնենք հանգիստ, ամենայն համոզվածությամբ՝ տեսնելու Աստծո փրկությունը և նրա բացահայտվող բազուկը» (ՎևՈւ 123.16–17):

Այսինքն, «միշտ հիշել նրան» նշանակում է վախենալով չապրել: Մենք գիտենք, որ դժվարությունները, հիասթափությունները և վշտերը կգան մեզանից յուրաքանչյուրին տարբեր կերպ, սակայն մենք նաև գիտենք, որ վերջում՝ մեր աստվածային Բարեխոսի շնորհիվ բոլոր բաները միասին կգործեն մեր բարիքի համար (տես ՎևՈւ 90.24; 98.3): Դա այն հավատքն է, որ այնքան պարզ արտահայտել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին, (1910–2008) երբ ասել է. «Ամեն ինչ լավ կլինի»:[4] Երբ միշտ հիշում ենք Փրկչին, մենք կարող ենք «ուրախությամբ անել ամեն բան, որ մեր ուժի սահմաններում է»՝ վստահ, որ Նրա զորությունը և մեր հանդեպ սերը կօգնի մեզ:

Թող որ մենք միշտ հիշենք Նրան, «որպեսզի [մենք] Նրա Հոգին միշտ [մեզ] հետ ունենանք» (ՎևՈւ 20.77): Ես իմ վկայությունն եմ բերում Հիսուս Քրիստոսի Քավության զորության մասին: Ես վկայում եմ կենդանի, հարություն առած Տիրոջ իրականության մասին: Ես վկայում եմ մեզանից յուրաքանչյուրի հանդեպ Հոր և Որդու անսահման և անձնական սիրո մասին և աղոթում եմ, որ մենք ապրենք մշտապես հիշելով այդ սերը՝ իր բոլոր դրսևորումներով: ■

Բրիգամ Յանգ Համալսարանի Այդահո ճյուղում տրված ելույթից, 27 հունվարի, 2009թ.: Ելույթը անգլերեն լեզվով լսելու համար, այցելեք web.byui.edu/devotionalsandspeeches/default.aspx:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Brigham Young, "Discourse," *Deseret News,* Sept. 10, 1856, 212.
2. Տես *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 64:
3. *Teachings: Joseph Smith,* 71.
4. In Jeffrey R. Holland, "President Gordon B. Hinckley: Stalwart and Brave He Stands," *Liahona,* June 1995 special edition, 6.

Ռեբեկա Սվեյն Վիլիամս.

ՀԱՍՏԱԿԱՄ ԵՎ ԱՆՍԱՍԱՆ

Չնայած Եկեղեցու հանդեպ իր ընտանիքի թշնամանքին, վաղ օրերի այս նորադարձը հավատարիմ և նվիրված մնաց աշխատանքին:

Ջենիս Լին Ջոնսոն

1834թ. հունիսին երիտասարդ մայրը, որին հայրը զրկեց ժառանգությունից, համարձակ և սրտաշարժ նամակ գրեց Վերականգնման մասին իր համոզվածության վերաբերյալ: Թեպետ նա գիտեր, որ հոր միտքը փոխելու հեռանկարը աղոտ է, Ռեբեկա Սվեյն Վիլիամսը ամուր կանգնեց չնայած անխուսափելի հետևանքներին: Նա իր հորը՝Իսահակին, հայտարարեց, որ Մորմոնի Գիրքը և Եկեղեցին ճշմարիտ էին: Ինչպես Մարգարե Ջոզեֆ Սմիթն էր նկարագրել, և լսել էր Երեք Վկաներից, որոնք «հայտարարել էին հասարակական հավաքում, որ նրանք տեսել էին մի Սուրբ Հրեշտակ իջավ երկնքից և [բերեց] թիթեղները, դնելով նրանց աչքերի առջև»:[1]

Ռեբեկայի վկայությունը հուզիչ է ոչ միայն իր զորությամբ, այլև իր անսասան վկայությամբ և անսանձ կամքով: Չնայած իր հայրը մնաց անդրդվելի և իր ամուսինը Ֆրեդերիկ Գ. Վիլիամսը որոշ ժամանակ դժգոհում էր Եկեղեցուց, Ռեբեկայի հավատքը երբեք չսասանվեց: Անխոնջ և անսասան Ռեբեկան կանգնած է որպես օրինակ մեզ համար այսօր, ցույց տալով, թե ինչպես կարող ենք ամուր և անսասան մնալ կյանքի ամենամեծ դժվարությունների դիմաց, անգամ երբ մեր հարազատ մարդիկ, հնարավոր է, չընդունեն մեր հավատքը և արհամարհեն մեզ:

Դարձ դեպի Եկեղեցի

Ծնված լինելով Պենսիլվանիայում, ԱՄՆ, 1798թ., Ռեբեկա Սվեյնը 10 երեխաներից ամենափոքրն էր:[2] Երբ նա մոտ ինը տարեկան էր, նրա ընտանիքը տեղափոխվեց Նիագարա, ԱՄՆ-ի և Կանադայի սահմանի մոտ: Նրանք այնքան մոտ էին Նիագարայի ամրոցին, որ լսում էին հրանոթների ձայնը, երբ ամրոցը հարձակման էր ենթարկվում 1812թ. պատերազմի ժամանակ: Լինելով փոքր աղջիկ Ռեբեկան դրսևորեց իր արիությունը: Մի անգամ անտառի միջով անցնելիս արահետի վրա նա դիմաց արջ հայտնվեց: Ձեռքում ունենալով հովանոց, նա մի քանի անգամ այն բացեց ու փակեց արջի երեսի մոտ, և արջը փախչեց:[3]

Երբ Ռեբեկան 17 տարեկան էր, նա անցավ Օնտարիո լիճը՝ այցելելու իր քրոջը Դեթրոյտում: Նավով ուղևորության ժամանակ նա հանդիպեց նավի ղեկակալ՝ բարձրահասակ, սևաչյա Ֆրեդերիկ Գրանգեր Վիլիամսին: Նրանց հաճախակի այցերը հրապուրանքը արագ վերածեցին սիրո, և նրանք ամուսնացան 1815թ. վերջին: Վիլիամսները տեղափոխվեցին մեծ Օհայոյի Արևմտյան Բնակավայրի մոտ, որից հետո 1828 թվին վերջնականապես բնակություն հաստատեցին Կիրթլենդում: Նրա ամուսինը բժիշկ էր աշխատում և հայտնի դարձավ իր ունակությունների շնորհիվ, իսկ Ռեբեկան դարձավ նրա օգնականը: Միասին նրանք ունեցան չորս զավակ:

1830թ. աշնանը առաջին Մորմոն միսիոներները ժամանեցին Կիրթլենդ: Ռեբեկան հետաքրքրությամբ լսեց նրանց և մասնակցեց միսիոներների հետ բոլոր հանդիպումներին, նա նույնիսկ բերում էր իր երեխաներին: Ֆրեդերիկը հաճախում էր, որքանով իր բժշկական գործն էր թույլ տալիս: Նրանք երկուսն էլ ուսումնասիրում, քննարկում և սովորում էին միասին, սակայն Ֆրեդերիկը այդքան էլ հաստատ չէր իր նվիրվածության մեջ: Միևնույն ժամանակ Ռեբեկան համոզվեց ավետարանի

ճշմարտացիության մեջ:

Ավելի ուշ ընտանիքի կենսագիրը նկարագրեց Ռեբեկային՝ նրան նմանեցնելով Եդեմի Պարտեզի Եվային. նա «առաջինն էր, որ տեսավ» լիովին ավետարանի ուխտի մեջ մտնելու «անհրաժեշտությունը»:[4] Նա մկրտվեց 1830թ. հոկտեմբերին:

Ֆրեդերիկը դեռևս տատանվում էր: Երբեմն նա ցանկանում էր թողնել Եկեղեցին, սակայն ի վերջո չէր կարողանում, որովհետև նրան ձգում էր այդ նոր սուրբ գիրքը՝ Մորմոնի Գիրքը: Հոգին ներգործեց նրա վրա, նա ընդունեց ավետարանի ճշմարտացիությունը և, հետևելով Ռեբեկայի օրինակին, մկրտվեց:

Նվիրված ծառայություն

Եկեղեցին արագ կենտրոնական տեղ զբաղեցրեց Ռեբեկայի և Ֆրեդերիկի կյանքում, ինչն անմիջապես ազդեցություն գործեց նրանց ընտանիքի վրա: Իր մկրտությունից և հաստատումից հետո Ֆրեդերիկը կարգվեց որպես երեց: Հաջորդ օրը նա խանդավառությամբ ընդունեց Օլիվեր Քաուդերիի հետ մի քանի շաբաթով միսիա ծառայելու հանձնարարությունը: Նրանք ակնկալում էին, որ միսիան կտևի երեք շաբաթ, սակայն իրականում այն դարձավ 10-ամսվա ճամփորդություն Միսսուրի: Ռեբեկայի համար դա տնից ամուսնու առաջին երկար բացակայությունն էր նմանատիպ բազմաթիվ բացակայությունների թվում: Ֆրեդերիկը ներգրավված լինելով միսիոներական աշխատանքում և Առաջին Նախագահություն կանչվելով հաճախ էր տնից բացակայում: Ռեբեկան Մորմոն մյուս կանանց պես երկար ամիսներ էր անցկացնում առանց ամուսնու օգնության, պահելով տունը և մեծացնելով իրենց երեխաներին:

Չնայած աշխատանքին, Ռեբեկան հավատարմորեն շարունակում էր և պատրաստակամորեն ծառայում էր: Մարգարե Ջոզեֆ Սմիթը և նրա ընտանիքը որոշ ժամանակ

ապրեցին Վիլիամսների տանը, երբ տեղափոխվեցին Կիրթլենդ: Ռեբեկան հավատարիմ մնաց Մարգարեին և իր ընտանիքին, երբ նա հոգ էր տանում նրանց համար փորձության օրերին: Մի անգամ ամբոխը եկավ և շրջապատեց տունը, փնտրելով Ջոզեֆին: Ռեբեկան քողարկեց Ջոզեֆին, հագցնելով նրան իր գլխարկն ու վերարկուն: Ջոզեֆը դուրս եկավ տնից և անցնելով ամբոխի միջով ապահով հեռացավ:

1832թ. մարտին Ռեբեկան կրկին անգնահատելի օգնություն ցուցաբերեց Մարգարեին, երբ ամբոխը ներխուժեց Ջոն Ջոնսոնի ագարակ Հայրամում, Օհայո, և դաժանաբար հարձակվեց Ջոզեֆ Սմիթի և Սիդնի Ռիգդոնի վրա: Սիդնիին անզգամորեն ծեծելուց հետո և փորձելով թույն լցնել Ջոզեֆի բերանը, ամբոխը ձյութով և փետուրներով պատեց Մարգարեին: Երբ Էմմա Սմիթը տեսավ իր ամուսնուն, նրան թվաց, թե ձյութը արյուն է և ուշաթափվեց:[5] Ռեբեկան և Ֆրեդերիկը այդ գիշերն անցկացրեցին ձյութը պոկելով Ջոզեֆի արյունահոսող և մաշկված մարմնից և խնամելով Սմիթների երեխաներին: Նրանց օգնության շնորհիվ Ջոզեֆը ուժ գտավ քարոզելու հաջորդ առավոտյան:

Համոզմունքով կիսվել ավետարանով

Ռեբեկայի ամենահաստատուն հույսերից մեկն այն էր, որ իր ընտանիքը, հատկապես իր հայրը, կընդուներ վերականգնված ավետարանը և կստանար հավատքի բերկրալի օրհնությունները: Նա Լեքիի պես, ճաշակեց Աստծո սիրուց և ցանկանում էր կիսվել դրանով իր հարազատների հետ (տես 1 Նեփիին 8.12): Այդ նպատակով Ռեբեկան մեծ փափագով գրում էր իր ընտանիքին իր դարձի, վկայության և այն մեծ ուրախության մասին, որ նա զգում էր որպես Եկեղեցու անդամ:

Ինչևէ, Ռեբեկայի դարձի գալը կատաղեցնում էր իր հորը: Իր հակիրճ պատասխանով նա պահանջում էր, որ Ռեբեկան թողնի Եկեղեցին: Սակայն Ռեբեկան անհողդողդ էր: Նա պատասխանում էր, ինչպես ընտանիքի պատմաբանն է նկարագրում, որ «ինքն առավել քան երբևէ ամուր է Մորմոնական վարդապետությունների ճշմարտացիության հանդեպ իր համոզվածության մեջ» և նաև ավելացնում էր իր զորավոր վկայությունը:[6] Նա ցավում էր, որ իր այդ նամակը ոչ մի արդյունքի չհանգեցրեց: Նրա հայրը վախեցնում էր, որ չի ճանաչի իրեն, և երդվում էր, որ այլևս չի հաղորդակցվի նրա հետ, եթե նա չհեռանա Եկեղեցուց:

Սակայն, Ռեբեկան տեղի չէր տալիս և շարունակում էր ավետարանով կիսվելու իր ջանքերը: 1834թ. նա իր հորը գրեց ևս մեկ նամակ, միակը, որ պահպանվել է, հայտնելով իր հավատքի խորության և այն ցավի մասին, որ հայրը չի ցանկանում ընդունել Մորմոններին:

Նրա հայրը կարդացել էր թերթերում Եկեղեցու վրա հարձակումների մասին, հատկապես Մորմոնի Գրքի և Երեք Վկաների վկայության հետ կապված, և փորձում էր այդ հոդվածների վրա հիմնվելով տարհամոզել Ռեբեկային:

«Ինձ ցավ է պատճառում, որ դու այդքան շատ վրդովվում ես Մորմոնի Գրքի համար»,- գրել է նա: Մեջբերելով Մորմոնի Գրքից և Ջոզեֆ Սմիթի նոր հայտնություններից, Ռեբեկան կիսվում էր Մորմոնի Գրքի մասին իր վկայությամբ: Նա նաև բացատրում էր, որ այդ գիրքը մարգարեացել է իր երեք վկաների ընտրության մասին: Որպես ապացույց նա մեջբերում էր հին մարգարե Եթերին, որն ասել է, որ «երեք վկաների բերանով կհաստատվի» այս գրքի մասին ճշմարտությունը (Եթեր 5.4):[7]

Այնուհետև Ռեբեկան նկարագրել է, թե ինչպես էր անձնապես տեսել Երեք Վկաներին՝ Դեյվիդ Վիթմերին, Մարտին Հարիսին և Օլիվեր Քաուդերիին, և լսել նրանց վկայությունը հրեշտակի և ոսկե թիթեղները տեսնելու մասին: Նրանց վկայությունները պաշտպանելով և բնութագրելով նրանց նա հորդորում էր իր հորը ավելի մանրամասն ուսումնասիրել այդ աշխատությունը: Եվ նա գրել էր իր հորը, որպեսզի «դու և մայրիկը իմանաք հանգամանքները, ինչպես մենք գիտենք կապված այս աշխատանքի հետ, ես համոզված եմ, որ դու կհավատաս դրան»:[8]

Արձագանքելով Մորմոնի Գրքի վերջում Մորոնիի խոստումը, Ռեբեկան աղերսում է, որ իր ընտանիքը խնդրի Աստծուն, որ «նա լուսավորի [իրենց] միտքը ի ճշմարտություն»: Եվ ապա նա պլանավորել էր հետագայում նրանց օգնելու համար միսիոներ ուղարկել, «ունակ ուսուցանելու Ավետարանը, ինչպես որ այն կա Հիսուսում»:[9] Ի վերջո, հայրը չցանկացավ որևէ կապ ունենալ դրա հետ:

Նույնիսկ նրա նամակները ուղարկված եղբորը՝ Ջոնին, որի հետ Ռեբեկան հատկապես մոտ էր, վերադառնում էին չբացված: Նրան վերադարձված նամակներից մեկի վրա Ջոնը գրել էր. «Հայրիկը արգելում է ինձ կարդալ քո նամակները կամ գրել քեզ: Ցտեսություն և թող միշտ Աստված օրհնի քեզ: Քո եղբայր՝ Ջոն»:[10]

Ինչևէ, Ռեբեկայի միսիոներական ջանքերը հաջողությամբ պսակվեցին իր ավագ քրոջ Սառա Սվեյն Քլարկի հետ: Սառան միացավ Եկեղեցուն Միչիգանում 1832թ.: Սառայի դուստրերը նույնպես միացան Եկեղեցուն և հավատարիմ մնացին իրենց կյանքի ընթացքում:

Հավատարիմ մինչև վերջ

Չնայած հոր ընտրությունների պատճառով Ռեբեկայի սրտի կսկիծին և ցավին, նա դեռևս սիրում էր նրան: Նա գրել է. «Իմ սիրտը ցավում է իմ ազգականների

համար՝ մարմնի համաձայն . . . Ես աղոթում եմ Տիրոջը, որպեսզի սփոփի քեզ քո վերջին օրը Իր Սուրբ Հոգով և թող որ դրանք լինեն քո լավագույն օրերը . . . Հուսով եմ, քո միտքը կխաղաղվի այս աշխատանքի հետ կապված: Վստահ եղիր, որ մենք ամուր ենք մեզ զգում այս գործում, իմանալով, որ Տերն է այն ղեկավարում»:[11]

Ռեբեկան ստիպված էր պայքարել ոչ միայն իր հոր անհավատության, այլև իր ամուսնու հավատքից խոտորումների համար: 1837-1838թթ. նրա ամուսինը՝ Ֆրեդերիկը, այն ժամանակ լինելով Առաջին Նախագահության անդամ, մշտապես տարաձայնությունների մեջ էր Եկեղեցու այլ ղեկավարների հետ: Նա անգամ մի որոշ ժամանակով հեռացավ Եկեղեցուց և նրան անդամությունից զրկեցին: Ինչևէ, մի կարճ ժամանակ անց նա խոնարհեցրեց իրեն, կրկին միացավ Եկեղեցուն և մահացավ լինելով անդամ: Մենք ոչ մի տեղեկություն չունենք այդ ժամանակ Ռեբեկայի ապրումների մասին, սակայն նա չի զրջացել Սրբերի հետ իր հավատարմության համար և մնացել է նվիրված:

Երբ Ֆրեդերիկի հեռանալու մասին լուրը հասավ Ռեբեկայի հորը Նյու Յորքում, Իսահակը հույս էր տածում, որ Ռեբեկան ևս կմերժի հավատը: Սակայն Ռեբեկան նամակ ուղարկեց նրան, դրսևորելով իր մշտական հավատարմությունը: Նրա պատասխանը կարդալով, Իսահակը դանդաղ տարուբերեց գլուխը և ասաց. «Չկա ապաշխարության և ոչ մի խոսք»:[12]

Ռեբեկան մինչև վերջ անվեհեր պաշտպանեց Ջոզեֆ Սմիթին և վերականգնված Եկեղեցին: Չնայած հորից առավել Եկեղեցին ընտրելու համար իր կատարած զոհաբերություններին, Ռեբեկան շարունակում էր պատվել նրան: Նա բարձր էր գնահատում այն, ինչ իր հայրը սովորեցրել էր իրեն, և իր սերն ու երախտագիտությունն էր հայտնում նրան: Նա եզրափակել է իր 1834թ. նամակը նշելով. «Ես միշտ կհիշեմ ուսուցումը . . . որ ստացել եմ իմ սիրելի Հորից»:[13]

1839թ. Ռեբեկայի հայրը մահացավ: Երեք տարի անց նա կորցրեց իր ամուսնուն: Այդ ցավալի դեպքերից հետո Ռեբեկան հավատքով ու քաջությամբ տոկաց: Երբ Սրբերը գաղթեցին դեպի արևմուտք Յուտա, նա ճամփորդեց իր որդի Էզրայի ընտանիքի հետ և վարեց իր սեփական լծվածքը: Նա ավելի ուշ ազարակ վերցրեց Միլ Քրիքում: Երբ Սոլթ Լեյքի Թաբերնաքլը ավարտվել էր և Սրբերին խնդրվեց նվիրաբերել ինչ կարող էին, նա տվեց արծաթե գդալների հավաքածուն, որպեսզի օգտագործվեր հաղորդության սեղանի համար մատուցարաններ պատրաստելու համար: Եվ վերջապես 1960թ. թեպետ նա շատ թույլ էր, երբ Նախագահ Բրիգամ Յանգը նրա ընտանիքին կոչ արեց բնակություն հաստատել հեռավոր Քեշ Վելիում, Յուտա, նա պատրաստակամորեն մեկ անգամ ևս տեղափոխվեց, կրկին վարելով իր լծվածքը:

Ռեբեկան մահացավ Սմիթֆիլդում, Յուտա, սեպտեմբերի 25, 1861թ.: Նա հավատարիմ մնաց իր համոզմունքներին, ճշմարտության մասին իր գիտելիքին և իր փորձությունններին: Նա մինչև վերջ «հաստատակամ և անսասան» մնաց (Մոսիա 5.15): ■

Ուղղագրությունն ու կետադրությունը արդիականացվել են:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռեբեկա Սվեյն Վիլիամսը Իսահակ Ֆիշեր Սվեյնին, հունիսի 4, 1834, Եկեղեցու Պատմության Գրադարան, Սոլթ Լեյք Սիթի:
2. Կենսագրական տեղեկությունը տրամադրել է Նենսի Կլիմենտ Վիլիամսը, *Meet Dr. Frederick Granger Williams . . . and His Wife Rebecca Swain Williams: Read Their True Story in the First Introduction—after 100 Years* (1951); and Frederick G. Williams, "Frederick Granger Williams of the First Presidency of the Church," *BYU Studies,* vol. 12, no. 3 (1972): 243–61.
3. Williams, *Meet Dr. Frederick Granger Williams*, 5.
4. Williams, *Meet Dr. Frederick Granger Williams,* 55.
5. *History of the Church,* 4:605.
6. Williams, *Meet Dr. Frederick Granger Williams,* 63.
7. Տես նաև Ռեբեկա Վիլիամսի նամակը, հունիսի 4, 1834:
8. Ռեբեկա Վիլիամսի նամակը, հունիսի 4, 1834:
9. Ռեբեկա Վիլիամսի նամակը, հունիսի 4, 1834:
10. In Williams, *Meet Dr. Frederick Granger Williams,* 63.
11. Ռեբեկա Վիլիամսի նամակը, հունիսի 4, 1834:
12. Ջորջ Սվեյնի նամակը, մարտ 17, 1839, տպագրված, Եկեղեցու Պատմության Գրադարան, Սոլթ Լեյք Սիթի:
13. Ռեբեկա Վիլիամսի նամակը, հունիսի 4, 1834:

Ճիշտ նավարկելով

ՄԱՐՇԱԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐՈՒՄ

Ջոշուա Ջ. Փերքի
Եկեղեցու ամսագրեր

Հին ծովագնացները ծովերով նավարկում էին առաջնորդվելով արևի, լուսնի և աստղերի դիրքով: Գիշերը նրանք իրենց աչքը պահում էին Բևեռային Աստղի վրա, որի անխախտ դիրքը երկնային խարիսխ է նավաստիների համար՝ օգնելով նրանց մնալ իրենց նպատակակետ տանող ճիշտ ուղու վրա:

Խաղաղ օվկիանոսի Մարշալյան կղզիներում նավաստիները հայտնագործել են մեկ այլ տեխնիկա: Այնտեղ ալիքների ձևը, բարձրությունը կամ օվկիանոսի ալեկոծությունները կորալյան կղզիների մեջ հաստատուն ձևով է փոխվում: Լավ վարժված ծովագնացը կարող է հարյուրավոր մղոններ նավարկել հետևելով ալեկոծությունների բարդ հոսանքներին՝ որոնցից յուրաքանչյուրը նման է մեկ ուղղությամբ փողոցի՝ մի կղզուց մյուսը: Ովքեր գիտեն, թե որտեղ են ալեկոծությունները և որ կողմ է հոսանքը գնում, կարող են մյուս ճանապարհորդներին ապահով ուղեկցել դեպի իրենց նպատակակետ:

Եկեղեցու անդամների համար Հիսուս Քրիստոսը մեր կատարյալ օրինակն է, որի ճշմարիտ լույսը ուղեկցում է մեզ: Նրա օրենքներն ու արարողությունները, օվկիանոսի հոսանքների նման կարող են մեզ ապահով առաջնորդել դեպի մեր երկնային տուն: Սակայն մեզանից շատերի համար կան մարդիկ, ում ծառայությունն ու աջակցությունը նման է Մեծ Ծովագնացի դերին: Հետևյալ պատմություններում մարշալացի երեք անդամներ կիսվում են, թե ինչպես են մյուսներն օգնել իրենց նավարկել կյանքի քարքարոտ ծանծաղուտներով և փոթորիկների միջով՝ առաջնորդելով իրենց դեպի Քրիստոսը:

Արդարակյաց կնոջ ազդեցությունը

Հիրոբո Օբեկետանգը նստած իր բազմոցին ժպտում է: Նա և իր կինը, Լինդան, նոր են ավարտել ընտանեկան երեկոն իրենց չորս զավակների և քույր միսիոներների հետ: Նրանք նաև միսիոներներին հյուրասիրել են ձկան ապուր, որտեղ ձուկը եփվում է ամբողջովին աչքերով և պոչով, դա ավանդույթ է

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՋՈՇՈՒԱ Ջ. ՓԵՐՔԻԻ, ԲԱՑԻ ՆՇՎԱԾԻՑ, ԼԱՍՏԱՍԱՓԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ © GETTY IMAGES

Երբ մենք նավարկում ենք կյանքի քարքարոտ ծանծաղուտներում, մեզանից յուրաքանչյուրը օգտվում է հավատարիմ անդամների առաջնորդությունից, որն օգնում է մեր ճանապարհը հարթել դեպի մեր երկնային տուն:

Մաջուրոյում՝ Մարշալյան կղզիների մայրաքաղաքում: Երբ Հիրոբոն նկարագրում է իր կյանքը, նա իր երախտագիտությունն է հայտնում Եկեղեցու, ավետարանի և իր ընտանիքի, հատկապես իր կնոջ համար:

2009թ. հունիսին էր: Մեկ օր առաջ էր ստեղծվել Մարշալյան կղզիների Մաջուրո ցիցը, և Հիրոբոն կանչվեց ծառայելու որպես առաջին ցցի գործադիր քարտուղար: Հիրոբոն, ինչպես նոր ցցի նախագահ Արլինգտոն Տիբոնն է նկարագրում նրան, «շատ, շատ ուժեղ է», և կղզիների հավատարիմ ղեկավարներից մեկն է:

Սակայն Հիրոբոն առաջինն է նշում, որ այդպես չէր մինչև վերջերս: Իրականում, նա ասում է, որ իր կինն է շատ ուժեղ, նա փոխեց իր կյանքը: Նա բացատրում է. «Ես մկրտվեցի, երբ ութ տարեկան էի, սակայն արդեն 16 տարեկանում ակտիվ չէի»:

Մի քանի տարի անց նա և Լինդան սկսեցին միասին ապրել, թեև ամուսնացած չէին: Լինդան Եկեղեցու անդամ չէր: 2000թ. երբ Լինդան պարզեց, որ Հիրոբոն մկրտվել է դեռ մանուկ հասակում, նա հետաքրքրվեց Եկեղեցով և սկսեց հանդիպել քույր միսիոներներին:

«Նա երկու տարի ուսումնասիրեց և որոշեց, որ ցանկանում է մկրտվել,- հիշում է Հիրոբոն,- մենք նախ պետք է ամուսնանայինք, սակայն ես հետաքրքրված չէի ամուսնությամբ: Ես շփոթված էի, ես իսկապես ընկել էի աշխարհի գայթակղությունների գիրկը: Ես չէի հասկանում ընտանիքի կարևորությունը, և իրականում հոգ չէի տանում կամ լսում ինչ-որ որևէ մեկին»:

Լինդան, թեև մկրտված չէր, սակայն իրենց երեխաներին մեծացրեց Եկեղեցում: Ամեն տարի նա խնդրում էր Հիրոբոյին ամուսնանալ իր հետ, որպեսզի ինքն էլ մկրտվեր, և ամեն անգամ նա մերժում էր: Տարիների ընթացքում նրանց երկու դուստրերը մկրտվեցին, սակայն Հիրոբոն չմասնակցեց նրանց մկրտություններին:

Ապա, 2006թ. նրանց իննամյա որդին, Տակառն, մահացավ ջերմից և տենդից: Մաջուրոյի շրջանից մոտ 300 անդամներ էին եկել թաղմանը՝ աջակցելու ընտանիքին:

«Նրանց աջակցությունը իսկապես մեծ բան էր ինձ համար,- ասում է Հիրոբոն,- ես սկսեցի մտածել, որ Աստված միգուցե ինչ-որ բան է ասում ինձ»:

Նա սկսեց մտածել, որ թեպետ ինքը Եկեղեցու անդամ էր, սակայն իր պատճառով կինը չէր կարողանում մկրտվել: «Կինս դառնում էր ավելի ու ավելի ուժեղ: Նա իսկապես ոգեշնչում էր ինձ»,- պատմում է նա:

«Այսպիսով ես նստեցի և մտածեցի, որ արդեն իմ կյանքի կեսճանապարհին եմ: Ես ինքս ինձ հարցրեցի՝ արդյո՞ք ցանկանում եմ այսպես շարունակել: Արդյոք հնարավորություն ունե՞մ իմ կյանքի երկրորդ կեսը Աստծո համար աշխատել: Ես սկսեցի աղոթել և մտածել եկեղեցի վերադառնալու և Աստծո համար աշխատելու մասին»:

Հիրոբոն սկսեց դասեր անցնել միսիոներների հետ և կրկին սովորել վարդապետությունը: Մարշալյան կղզիների Մաջուրո Միսիայի Նախագահ Նելսոն Բլիքը ընկերացավ նրան, նրա հետ ընկերացան նաև մյուս անդամները, շրջանի նախագահ Արլինգտոն Տիբոնը: Վերջապես, Հիրոբոն որոշեց վերադառնալ, և նա գիտեր, որ պետք է ոչ միայն հաճախեր հաղորդության ժողովին, այլև Կիրկնօրյա Դպրոցին և քահանայության ժողովին: Ի վերջո, Հիրոբոն ինքն իր մեջ վճռեց:

«Երբ վերադարձա, ես ասացի՝ «Սա է, որ կա, որոշված է, թե ինչ եմ ես անելու: Եվ դա փոխեց իմ կյանքը»:

Հիրոբոն և Լինդան ամուսնացան 2008թ. օգոստոսի 30-ին: Շուտով նա ստացավ Ահարոնյան Քահանայություն և մկրտեց իր կնոջը: Երկու ամիս անց Հիրոբոն ստացավ Մելքիսեդեկյան Քահանայություն և կանչվեց որպես շրջանի գործադիր քարտուղար:

Հիրոբոն նայում է կնոջը և ժպտում: «Նա չէր հավատում, որ ես կմկրտեի իրեն,- ասում է նա,-պատկերացրեք, նրա համար ութ տարի պահանջվեց՝ 2000-2008 թիվը: Նա հրաշալի կին է»:

Արդարակյաց հոր օրինակը

Երբեմն մեր ուղեկցողը, օրինակ, ծովագնացը, մեզ հետ սերտորեն աշխատում է սովորեցնելով, թե ինչ պետք է իմանանք կյանքում հաջող ճամփորդելու համար: Շատ դեպքերում ծովագնացը դա կատարում է մեզ համար օրինակ ծառայելով: Այսպես եղավ Պատրսիա Հորիուչիի հոր՝ Ֆրենկի դեպքում:

Միսիոներներին հանդիպելուց հետո Ֆրենկը սկսեց հաճախակի նրանց ճաշի հրավիրել: Շուտով նա սկսեց դասերն անցնել: Սակայն նրա ընտանիքից ոչ ոք չէր ցանկանում Եկեղեցու հետ որևէ առնչություն ունենալ: «Երբ մենք տեսնում էինք միսիոներները գալիս են,- ասում է Պատրիսիան,- ես և փոքր եղբայրներս ու քույրերս վազելով հեռանում էինք»:

2007թ. հուլիսին Ֆրենկը մկրտվեց, նրան մկրտեց միսիայի նախագահը՝ Նելսոն Բլիքը: Դա որոշիչ պահ էր Պատրիսիայի և ընտանիքի երեխաների համար:

«Ես տեսա ինչպես է հայրս փոխվում,- ասում է նա,- ես հասկացա, որ եթե ավետարանը դիպչել է հորս սրտին, ուրեմն այն կդիպչի իմ սրտին և կփոխի իմ կյանքը: Եվ ես որոշեցի քույր միսիոներների հետ դասեր անցնել և նրանք ինձ հանձնարարեցին ուսումնասիրել Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը: Դրանից առաջ, ես և եղբայրս վիճել էինք, և ես չէի ներում նրան: Այդ ժամանակ սուրբ գրություններում ես կարդացի, որ եթե ներես մյուսներին, Աստված էլ քեզ կների»: (Տես 3 Նեփի 13.14–15:)

Պատրիսիան հասկացավ, որ պետք է ների իր եղբորը, որպեսզի իր կյանքը փոխվի, լինի մաքուր և խաղաղություն ունենա: Եվ նա ներեց:

«Երբ իմ միջից հանեցի վատ վերաբերմունքը և դարձա նոր անձնավորություն պահելով պատվիրանները, ես անչափ ոգևորված էի: Ես գիտեի, որ պետք է մկրտվեմ, որպեսզի կարողանամ լինել ճշմարիտ Եկեղեցում,- ասում է նա,- Եկեղեցին ինձ ճիշտ ուղու վրա դրեց: Ինձ հեռացրեց վատ ազդեցություններից, սովորեցրեց ինձ հարգել իմ ծնողներին, շարունակել կրթությունը և մնալ ճիշտ ուղու վրա»:

Արդարակյաց տղամարդու ազդեցությունը

Լիդիա Կամինագան, Հիրոբո Օբեկետանգի պես, ծնվել էր Եկեղեցում, սակայն դեռահաս տարիքում դարձել էր պասիվ: Սակայն նրա ետդարձի ճանապարհը որքան նշանակալի, այնքան էլ յուրահատուկ է:

Լիդիան և նրա ամուսինը՝ Կամինագա Կամինագան, մեծացել են Եկեղեցում:

Վերևի ձախում՝ Հիրոբո Օբեկետանգ (նաև նրա նկարները իր ընտանիքի հետ նախորդ էջերում) աշխատում է որպես հյուրանոցի տնօրեն: Ներքևում՝ Պատրիսիա Հորիուչին 2009թ. հունիսին Մարշալյան Կղզիներում երիտասարդ ամուրիների համաժողովի ղեկավարն էր:

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չնայած որ աշխարհագրական դիրքը, մշակույթը և մեծ հեռավորությունը նրանց բաժանում են մյուս Վերջին Օրերի Սրբերից, Մարշալյան կղզիների անդամները բացատրում են, որ հիմնականում իրենք անցնում են նույն դժվարությունների միջով, ինչ որ բոլոր անդամները:

Գարի Զակիուսը՝ ցցի երիտասարդ ամուրիների ղեկավարը ասում է, որ «մարդիկ գալիս են և ասում. «Մենք այսօր մարգարեի կարիք չունենք, և մենք այլ սուրբ գրությունների կարիք չունենք»: Որոշ անդամներ իրականում չեն կարդում սուրբ գրությունները և չեն հասկանում դրանք: Երբ ինչ-որ մեկն ասում է մի բան, որը թուլացնում է իրենց համոզմունքը, նրանք ետ են քաշվում իրենց իմացած ճշմարտությունից»:

Գարիի համար լուծումը պարզ է. «Ինձ միսիոներները հանձնարարել էին աղոթել Մորմոնի Գրքի, Հարության և Ջոզեֆ Սմիթի մասին, որպեսզի համոզվեի, որ այդ ամենը ճշմարիտ է: Մի գիշեր ես աղոթում էի ծնկի իջած և զգացի Հոգին: Դա մի զգացողություն էր, որ մինչ այդ երբեք չէի ունեցել: Ես գիտեմ՝ այն ինչ սովորեցրել են միսիոներները, ճշմարիտ է: Որպես նորադարձ Մորմոնի Գիրքը ընթերցելը ամրացրեց իմ վկայությունը»: Իր մկրտությունից մինչև միսիա և առ այսօր, Գարին ասում է. «Իմ վկայությունը աճել է Մորմոնի Գիրքը, սուրբ գրությունները և մարգարեների խոսքերը կարդալու և ուսումնասիրելու արդյունքում»:

Էրնեստ Միան (աջից), որը Մարշալյան կղզիներում Գարիի հետ աշխատում է որպես Եկեղեցու թարգմանիչ, ասում է, որ շատ երիտասարդներ են ընկնում անբարոյականության ծուղակը: Նա շարունակում է առաջ գնալ նեղ ու անձուկ ճանապարհով՝ համախոհ ընկերների հետ մասնակցելով առողջ միջոցառումներին: «Նախքան իմ միսիան, մենք եկեղեցում բասկետբոլ էինք խաղում ամեն օր, բացի կիրակի և երկուշաբթի օրերից»,- ասում է նա:

Ջենրոկ ծխից Մայքլ Իոնեն (աջից) 2006թ. Եկեղեցուն միանալու համար գին վճարեց՝ նա չկարողացավ շարունակել ապրել տանը: Հավատք և համոզմունք դրսևորելով՝ նա միևնույն է մկրտվեց:

Մեկ տարի անց նա կանչվեց միսիա ծառայելու Մարշալյան կղզիներում: Միայն վերջերս է Մայքլի ընտանիքը սկսել հետաքրքրություն ցուցաբերել Եկեղեցու հանդեպ և դասեր անցնել միսիոներների հետ:

«Ես երբեք Եկեղեցու ուսմունքների վերաբերյալ կասկածներ չեմ ունեցել,- ասում է Կամինագան,- ես միշտ հավատացել եմ դրանց»:

Սակայն կյանքը այլ կերպ դասավորվեց Լիդիայի համար: Նա ասում է. «Յոթերորդ դասարանում սովորելիս, ես միակ Մորմոնն էի իմ դպրոցում, և ես արհամարված էի զգում: Ես սկսեցի անել ինչ իմ ընկերներն էին անում: Ես առաջնահերթություններ փոխվեցին»:

Լիդիայի ծնողները նրան ուղարկեցին Պրովո, Յուտա, ապրելու ընտանիքում, հուսալով, որ նրանց ազդեցությունը կոգեշնչի Լիդիային ապրել ավետարանով: Նա սովորեց բաներ, որ իրեն օգնեցին հետագա կյանքում, սակայն այդ ժամանակ նա ամենևին հետաքրքրված չէր Եկեղեցով:

Լիդիան վերադարձավ Մարշալյան կղզիներ 2002թ. հունվարին, իսկ այդ ժամանակ Կամինագան արդեն մեկ ամիս էր ինչ վերադարձել էր Ճապոնիայում ծառայած միսիայից: Դրանից հետո նրանք հանդիպեցին մի որոշ ժամանակ: Թեպետ Լիդիան չէր ապրում Եկեղեցու չափանիշներով, Կամինագան շարունակում էր գալ իրենց տուն, ձևացնելով թե այցելում է նրա քեռու որդուն՝ Գարի Զակիուսին:

Ի վերջո, Կամինագան վճռեց հարցնել նրա ծնողների թույլտվությունը Լիդիայի հետ ժամադրվելու համար, որոնք պետք է լինեին մաքուր ու պարկեշտ հանդիպումներ: Թեպետ սկզբում նրան փորձեցին տարհամոզել, Կամինագան ասում է. «Վերջապես ասացի նրանց, որ նա դեռևս հնարավորություն ունի փոխվելու»: Երբ ես ասացի դա, ողջ սենյակում զգացողությունը փոխվեց: Նրա հայրը արտասվեց և ասաց. «Ես միշտ ցանկացել եմ, որ նա վերադառնա Եկեղեցի: Դու կարող ես փորձել»:

Սկզբում Լիդիան լուրջ չէր ընդունում Կամինագային: Ի վերջո, նա նոր վերադարձած միսիոներ էր, իսկ ինքը ակտիվ չէր եղել:

«Բայց նա տեսնում էր մի բան, որ ես չէի տեսնում»,- բացատրում է Լիդիան: Քանի որ նա ոչ մեկի հետ չէր ժամադրվում, համաձայնեց հանդիպել նրա հետ: «Նա

«Ես ապաշխարության մասին ամուր վկայություն ունեմ»,- ասում է Լիդիա Կամինագան, որը այստեղ նկարում իր ամուսնու Կամինագայի և իրենց դստեր՝ Վելիսայի հետ է:

ինձ ետ բերեց: Նրա ընկերուհին լինելով ես պետք է իմ չափանիշները շտկեի: Նա ինձ հիշեցնում էր մկրտության ժամանակ կապած իմ ուխտերը, այն ամենը, ինչ ես իրոք շատ կարոտում էի, օրինակ սուրբ գրություններն ընթերցելը և ընտանեկան երեկոները: Կամինագայի հետ մենք միասին ծառայության ծրագրեր էինք իրականացնում: Ես կարդացի Մորմոնի Գիրքը: Մենք գնում էինք հավաքների: Նա ինձ ցույց տվեց, ինչպես կարելի է այլ կերպ ապրել: Եկեղեցի գնալը ոչ թե միայն հաղորդության ժողովն էր, այլև Կիրակնօրյա Դպրոցը և Սփոփող Միությունը»:

Միասին ժամանակ անցկացնելով ժամադրություններին, որոնք պարկեշտ և ոգեշնչող էին, Լիդիայի կյանքը փոխվեց և նրա վկայությունը աճեց: Ինչևէ, նա դեռևս պետք է որոշ բաներ շտկեր:

«Դժվար էր վերադառնալը,- ընդունում է նա,- ապաշխարությունը հեշտ չէ, սակայն ապաշխարության մասին ես իսկապես ամուր վկայություն ունեմ: Հիմնականում մեր ժամադրությունը օգնեց ավելի լավ ճանաչել միմյանց, ինձ օգնեց վերադառնալ եկեղեցի և ամեն ինչին այլ կերպ նայել»:

«Կարևորը՝ հարաբերություններն են»,- ավելացնում է Կամինագան:

Լիդիան և Կամինագան ամուսնացան 2002թ. նոյեմբերի 28-ին: Մեկ տարի անց նրանք կնքվեցին Լեի Հավայի Տաճարում և հաճախեցին Բրիգամ Յանգ Համալսարանի Հավայի ճյուղ: Այժմ նրանք ապրում են Մարշալյան կղզիներում իրենց երեք երեխաներով: Լիդիան ծառայում է որպես իրենց ծխի Կիրակնօրյա Դպրոցի ուսուցիչ երիտասարդների համար, իսկ Կամինագան ծառայում է որպես Երիտասարդ Տղամարդկանց նախագահ:

Ինչպես Հիրոբոն, Պատրիսիան և Լիդիան են վկայում, երբ մենք համբերություն և հաստատակամություն ենք դրսևորում և փնտրում ենք Տիրոջ օրհնությունները, շատ բաներ են հնարավոր: Ովքեր հետևում են Փրկչին և լսում են Սուրբ Հոգու հուշումները, կարող են հնում ծովայինների պես առաջնորդել ճամփորդողներին դեպի տուն, մյուս անձնավորության կյանք փոփոխություն բերելով: ■

ԱՌԱՋԻՆ ՑԻՑԸ ՄԱՐՇԱԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐՈՒՄ

Տարիներ շարունակ Մարշալյան կղզիների Եկեղեցու անդամները ցանկացել են ցից ունենալ: 2009թ. հունիսի 14-ին նրանց ցանկությունը իրականացավ: Յոթանասունից Երեց Դեյվիդ Ս. Բաքսթերը, որը կազմակերպեց ցիցը, բացատրում է. «Վերջին տարիներին անդամությունն աննախադեպ աճել է: Եկեղեցու զարգացումը այդտեղ անխուսափելի դարձրեց ցցի կազմակերպումը: Սակայն երկար ժամանակ է պահանջվել դրա համար: Անդամները պետք է հաղթահարեին բազմաթիվ դժվարություններ»:

Մարշալյան կղզիների ցցի նախագահ Արլինգտոն Տիբոնը (վերևում), երբ ծառայում էր շրջանի նախագահությունում, ուսուցանում էր անդամներին, որ եթե ցանկանում են ցից ունենալ, պետք է աշխատեն այդ ուղղությամբ: Նա շրջանի ղեկավարներին հրահանգեց ուսուցանել անդամներին Մաղաքիայի Գ և 3 Նեփի 24 գլուխներից տասանորդ վճարելու օրհնությունների մասին: Ղեկավարները նաև խրախուսում էին երիտասարդներին և մեծերին ուսումնասիրել Մորմոնի Գիրքը: Նրանք նույնիսկ մի հաջողված միջոցառում կազմակերպեցին, որի ժամանակ երիտասարդները ուղիղ 12 ժամ կարդում էին Մորմոնի Գիրքը:

Նախագահ Տիբոնը նաև նպատակ էր դրել օգնելու անդամներին հասկանալ, թե «որքան կարևոր է կնքվել տաճարում», բացատրելով, որ «օժտում ստանալը կօգնի իրենց հաղթահարել շատ բաներ, կփոխի իրենց և իրենց կյանքը»:

Նախագահ Տիբոնի ղեկավարության ներքո Մարշալյան կղզիների անդամները այցելել են երկու տաճար՝ Թոնգայում և Հավայիում: Յուրաքանչյուր այցելություն կատարվել է մեծ զոհաբերությամբ: Սակայն, ինչպես նախագահ Տիբոնի կինը, Անգելա Տիբոնն է ասում, այդ ճամփորդությունները «մեծ ազդեցություն են ունեցել Երկնային Հոր և Եկեղեցու հանդեպ անդամների նվիրվածության վրա»:

«Այո,- արձագանքում է Նախագահ Տիբոնը,- այստեղ Մաջուրոյում մենք հոգևոր կյանքի վերելքի ականատեսն ենք եղել»:

ԵՍ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ ՉԵՄ ԵԿԵՂԵՑՈՎ

Ես չէի ուզում Եկեղեցու հետ որևէ առնչություն ունենալ, երբ կինս հարցրեց, թե կարո՞ղ են արդյոք միսիոներները ուսուցանել մեր որդիներին: Սակայն ես չմերժեցի, քանի որ նա արդեն անդամ էր:

Երբ միսիոներները սկսեցին շաբաթը երկու անգամ գալ մեր տուն, ես գնում էի ընկերոջս տուն, որը մեր հարևանն էր: Ընկերս մեկ այլ Քրիստոնյա Եկեղեցու հավատարիմ անդամ էր: Ամեն անգամ, երբ ես այցելում էի նրան, նա ցանկանում էր խոսել Աստվածաշնչի մասին: Ես ասում էի նրան, որ ինձ չեն հետաքրքրում նման բաները և չեմ ցանկանում կրոն ուսումնասիրել: Սակայն նա փորձում էր համոզել ինձ, և ի վերջո ես տեղի տվեցի: Այսպիսով, երկար ժամանակ ես Աստվածաշունչ էի ուսումնասիրում ընկերոջս հետ, մինչ միսիոներները ուսուցանում էին իմ տղաներին:

Մի օր միսիոներների գալու ժամն էր, սակայն տնից գնալու փոխարեն, ես որոշեցի մնալ մյուս սենյակում: Երբ միսիոներները սկսեցին ուսուցանել իմ որդիներին, ես զգացի, որ ավելի եմ ցանկանում լսել: Ես ավելի ու ավելի էի մոտենում դռանը, որպեսզի կարողանայի լավ լսել: Նրանք ուսուցանում էին իմ որդիներին առաքյալների և մարգարեների մասին:

Ավելի ուշ ես հասկացա, որ ուզում եմ ավելին իմանալ: Ես խոսեցի միսիոներների հետ և որոշեցի նրանց հետ անցնել զրույցները՝ առանձին: Կինս միշտ ներկա էր, սակայն ուրիշ ոչ ոք չգիտեր այդ մասին:

Երբ միսիոներները սկսեցին շաբաթը երկու անգամ գալ մեր տուն, ես գնում էի ընկերոջս տուն, որը մեր հարևանն էր:

Այսպիսով, երբ միսիոներները գալիս էին շաբաթը երկու անգամ ուսուցանելու տղաներիս, ես գնում էի ընկերոջս տուն: Այնուհետև, մեկ այլ օր նրանք ուսուցանում էին ինձ:

Մի օր երբ ընկերս վատ բան ասաց Եկեղեցու մասին, ես պաշտպանեցի Եկեղեցին: Մարշալյան կղզիների շատ մարդկանց նման նա շատ բան չգիտեր Եկեղեցու մասին և սխալ էր հասկանում որոշ բաներ, որոնց հավատում են Վերջին Օրերի Սրբերը: Երբ նա կրկին բացասական կարծիք հայտնեց, ես կրկին պաշտպանեցի Եկեղեցին:

Այդպես շարունակվեց յոթ ամիս: Ապա մի օր ես հասկացա, որ Սուրբ Հոգին հաստատում էր ինձ, որ այն, ինչ միսիոներները ուսուցանում էին, ճշմարիտ էր: Ես հասկացա, որ պետք է մկրտվեմ, թեպետ դեռևս շատ քիչ գիտեի ավետարանի մասին:

2007թ. մկրտվելուց հետո ես անչափ ուրախ էի: Մենք սկսեցինք գումար հավաքել Հավայի տաճար գնալու համար, որտեղ կինս, մեր երեք երեխաները և ես կնքվեցինք 2008թ. դեկտեմբերին:

Եկեղեցու անդամ լինելը մեծապես ազդեց իմ կյանքի վրա: Ես որոշեցի թողնել իմ երկրորդ աշխատանքը ռեստորանում, որովհետև ես ուշ էի տուն գալիս և իմ ներքնահագուստը ներծծված էր լինում ծխախոտի ծխով: Չնայած այդ հավելյալ եկամտի կորստին, Տերը հոգ տարավ մեզ համար:

Ես գիտեմ, որ Եկեղեցին ճշմարիտ է, և Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն է՝ Հոգու շնորհիվ, որ զգացել եմ, և օրհնությունների՝ որ ստացել եմ: ■

Թանինտոա Սեքստոն, Մարշալյան կղզիներ

ԱՎՈՒՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲՅՈՒՐ.ԹՈՐՎԵԼՍՈՆԻ

ԻՄ ԽԱՉԿԱՐՈՎ ՊՈՆԻՆԵՐԸ

Ես ունեմ խաչկարով ասեղնագործած երկու պոնիների նկար, որի վրա աշխատել եմ մոտ մեկ տարի: Այն գրեթե ավարտել էի, երբ հասկացա, որ պոնիներից մեկի գույնը սխալ էի ընտրել: Քանի որ ձիու մաշկը կարող էր այդ գույն լինել, ես չէի նկատել իմ սխալը, մինչև որ տեսա՝ կտավի վրա պոնիի գույնը չէր համընկնում իր կողքի գույների հետ:

Ես հուսահատված էի: Այդ ամբողջ ժամանակը ես ծախսել էի, աշխատելով նկարի վրա, և սխալ գույնով արված խաչկարերը հանելը շատ ընկճող էր: Արցունքն աչքերիս ես նկարը գցեցի աղբամանը:

Ես նստեցի սեղանի առաջ, որտեղ պահում էի իմ կարելու պարագաները, տխրելով իմ կորցրած գեղեցիկ պոնիի նկարի համար և փորձելով անցնել մյուս գործերին: Սակայն չկարողացա աշխատել, ես պարզապես չկարողացա հրաժարվել մի գործից, որի վրա այդքան տքնաջան աշխատել էի: Ես բացեցի աղբամանը և հանեցի պոնիով կտավը: Ես սխալ գույնի թելի մի հանգույց գտա և զգուշորեն այն կտրեցի, ապա նկարը շրջելով ես սկսեցի դուրս քաշել թելը:

Երբեմն թելը հանելը արագ էր ստացվում, երբեմն էլ այն գտնելը այդքան էլ հեշտ չէր: Ես վստահ չէի, թե ինչպես պետք է քանդեմ իմ արած կարերը: Երբեմն ստիպված էի լինում ամեն անգամ մեկ կար կտրել: Որդիս տեսնելով դա ապշեց, որ այդքան շատ աշխատանք եմ կատարում իմ սխալը ուղղելու համար: Վերջիվերջո, դա միայն խաչկարով նկար էր:

Կարերը հանելիս ես սկսեցի մտածել ապաշխարության մասին, և թե որքան դժվար էր ուղղել իմ կատարած սխալները: Իսկական ապաշխարությունը պահանջում է ուժգին ցանկություն, աշխատանք և տառապանք, սակայն դրա համար արժե ջանք գործադրել:

Երբ արդեն վերականգնում էի պոնին, ինձ հիշեցվեց, որ ապաշխարությունը թույլ է տալիս, որ Հիսուսի Քավությունը հեռացնի մեղքի բիծը իմ կյանքից և օգնի ինձ վերստին սկսել: Իմ տան պատից կախված իմ «ապաշխարության պոնիները» մեղմ, սակայն կենդանի հիշեցնում են, որ պետք է ճիշտ գործեմ, անհաջողություն կրելիս երբեք անձնատուր չլինեմ, և հիշեմ, որ ապաշխարության միջոցով Քավությունը կվերականգնի տարբերությունը: ■

Սանդրա Ջենինգս, Նյու Մեքսիկո, ԱՄՆ

Այդ ամբողջ ժամանակը ես ծախսել էի, աշխատելով նկարի վրա, և սխալ գույնով արված խաչկարերը հանելը շատ ընկճող էր:

ԲԱՅՑ ԱՅՍՏԵՂ ԵԿԵՂԵՑԻ ՉԿԱ

Կոկիկ հագնված կոստյումով մի տղամարդ թեքվեց անկյունից: Նա նման էր Եկեղեցու անդամի, և ես զգացի, որ պետք է մոտենամ նրան:

Միջերկրածովյան ճամփորդության ժամանակ հնարավորության դեպքում ես ջանասիրաբար հաճախում էի Եկեղեցու ժողովներին: Իսպանիայի Սևիլիա քաղաքում ես թերթելով հյուրանոցի հեռախոսի տեղեկատու գիրքը և ուսումնասիրելով քաղաքի քարտեզը, փորձեցի գտնել մոտակա Վերջին Օրերի Սրբերի հավաքատունը: Ես արտագրեցի հասցեն և իսպաներենով Եկեղեցու անունը: Շաբաթ երեկոյան ես աղոթեցի, որպեսզի իմանամ, թե որ ժամին էին ժողովները սկսվում, և ուժեղ տպավորություն ունեցա, որ պետք է այնտեղ լինեմ ժամը 10:00-ին մոտ:

Կիրակի առավոտյան նախքան 9:30-ին կճանապարհվեի եկեղեցի, աղոթեցի կրկին, որ կարողանամ գտնել հավաքատունը: Իմ քարտեզին նայելով, ես սկեցի քայլել նեղ փողոցների լաբիրինթոսով: Ուրախ առավոտ էր: Ես անցա սրճարանների և ճռվողյունով լի թռչունների շուկայի կողքով:

Հասնելով իմ նշած հասցեի մոտ ոչինչ չգտա, որը կարող էր ինչ-որ կերպ եկեղեցի հիշեցնել: Ես փողոցով բարձրացա, ապա իջա ապարդյուն փնտրելով: Ես շփոթված էի և անհանգիստ, իսկ ժամը արդեն 10:00-ն էր:

Ի վերջո, ես աղոթեցի իմ Երկնային Հոր. «Դու ինձ պատվիրել ես եկեղեցի գնալ, ահա եկել եմ, սակայն այստեղ եկեղեցի չկա»:

Հենց այդ պահին կոկիկ հագնված կոստյումով մի տղամարդ թեքվեց անկյունից: Նա նման էր Եկեղեցու անդամի, և ես զգացի, որ պետք է մոտենամ նրան: Մի փոքր շփոթված ես ասացի նրան, որ եկեղեցի եմ փնտրում: Նա ինչ-որ բան ասաց, որ ես չհասկացա, և շվարած նայեցի: Նա բացեց իր պայուսակը և ես կաշվե կազմով երկու գիրք տեսա, որոնք նման էին սուրբ գրությունների: Ես նրան տվեցի իմ թղթի կտորը, որի վրա իսպաներենով գրել էի "La Iglesia de Jesucristo" (Հիսուս Քրիստոսի Եկեղեցի): Նա ժպտաց և ցույց տվեց այն ճանապարհը, որտեղից ես եկել էի, և միասին մենք քայլեցինք դեպի եկեղեցի: Շենքը գտնվում էր մեկ այլ հասցեում, մենք պետք է մի քանի րոպե քայլեինք, իսկ տեղանքին անծանոթ մարդը կարող էր այն չնկատել: Եկեղեցին գտնվում էր փողոցից ներս ընկած մի փոքր հրապարակում՝ մեծ դարպասների ետևում:

Հավաքատանը ես շուտով պարզեցի, որ ինձ օգնող տղամարդը ծխի եպիսկոպոսն էր, իսկ ժողովները սկսվում են 10:30, և ես մի փոքր շուտ էի հասել:

Ծխի ծոմի և վկայության ժողովին ես զգացի, որ պետք է բերեմ իմ վկայությունը: Իմ խոսքերը անգլերենից իսպաներեն թարգմանող միսիոների օգնությամբ ես բերեցի իմ վկայությունը և նկարագրեցի, թե ինչպես Տերը օգնեց ինձ գտնել եկեղեցին: Այնուհետև Եպիսկոպոսը բերեց իր վկայությունը, բացատրելով, որ նա ստիպված էր այդ առավոտ մեքենան կայանել հեռու տեղում, և այդ օրը սովորականից ավելի ուշ էր հասնում եկեղեցի: Ինձ տեսնելով նա մտածել էր, որ նման եմ Եկեղեցու անդամի, և կանգ էր առել օգնելու: Այնուհետև նա խոսեց այն անդամների մասին, ովքեր կորած են հոգևոր առումով և ասաց, որ մենք պետք է օգնենք նրանց գտնել Եկեղեցին:

Տարիների ընթացքում Սևիլիայի տեսարժան վայրերի մասին հիշողություններս խունացել են, սակայն եկեղեցին գտնելու իմ հիշողությունը վառ է: Ինձ համար այդ հիշողությունը վկայություն է մեր հանդեպ մեր Երկնային Հոր մեծ սիրո մասին, և որ իմ կյանքում ես տեսնում եմ Նրա ձեռքը, եթե փնտրում եմ այն բոլոր բաները, որ ինձ համար «գործակից են լինում դեպի բարին» (Հռովմայեցիս Ը.28): ■

Ջուլի Իսմայիլ, Արևմտյան Ավստրալիա, Ավստրալիա

ՆՐԱ ՏԱՌԱՊԱՆՔԸ ԹԵԹԵՎԱՑՆՈՒՄ Է ՄԵՐ ՏԱՌԱՊԱՆՔԸ

Որպես բուժքույր նորածինների վերակենդանացման բաժանմունքում, ես խնամում եմ հիվանդ, երբեմն շատ փոքր մանչուկներին: Մի գիշեր ինձ նշանակեցին մի փոքրիկ տղա, որը ծնվել էր 17 շաբաթ առաջ և կշռում էր կես կիլոգրամ: Նրա ձեռքերը շատ փոքր էին, նրա ոտքերը իմ մատի երկարության էին, իսկ ոտնաթաթերը իմ բութ մատի չափ էին: Նա շնչառական ուղիների հետ կապված լուրջ խնդիրներ ուներ, և բժիշկները հույս չէին հայտնում, որ նա կապրի մինչև լուսաբաց:

Ամբողջ բաժանմունքում լռություն է տիրում, երբ նորածինը պայքարում է կյանքի համար: Բոլորն ավելի լարված են դառնում, հատկապես այդ մանչուկի բուժքույրը, որն այդ գիշեր ես էի: Նրա ծնողները նրա կողքին էին ամբողջ օրը, և նրանք ուժասպառ էին արդեն: Նրա մայրը գնաց իր սենյակ մի փոքր հանգստանալու:

Երեխայի առանձին սենյակում կար ինկոբատոր, էկրաններ, օդափոխիչ, և IV պոմպեր, որոնք նրան կենդանի էին պահում: Քանի որ նա շատ թույլ էր և մշտական ուշադրության կարիք ուներ, ինձ ուրիշ երեխա չէին նշանակել այդ գիշեր: Ես նրա կողքին պետք է լինեի ամբողջ գիշեր՝ նշանակված բուժումներին հետևելով և ստուգումներ կատարելով:

Երբ գիշերը եկավ, ես փորձեցի պատկերացնել, ինչպես կզգայի ինձ, եթե ես նրա մայրը լինեի: Սրտի կսկիծն անտանելի կլիներ:

Ես զգուշորեն լվացի նրա երեսը, շոշափեցի նրա փոքրիկ ձեռքերն ու ոտքերը, զգուշորեն փոխեցի նրա դիրքը դնելով փափուկ նոր վերմակի վրա: Ես մտածում էի, ուրիշ ինչ կարող եմ անել իմ փոքրիկ հիվանդի համար: Ի՞նչ կաներ նրա մայրը: Ի՞նչ կուզենար Երկնային Հայրը, որ ես անեի:

Այդ թանկ, անմեղ փոքրիկ հոգին շուտով վերադառնալու էր իր Երկնային Հոր մոտ: Ես մտածում էի, արդյոք նա վախենում էր: Ես մտածեցի իմ երեխաների մասին: Երբ նրանք փոքր էին և վախենում էին, ես երգում էի նրանց համար: «Աստծո զավակն եմ» նրանց սիրելի երգն էր: Արցունքները զսպելով ես երգեցի այդ մանչուկի համար:

Ես տեսա խողովակները և արյունը, հաշվեցի նրա կրծքի բարձրացումներն ու իջեցումները, լսեցի նրա սրտի զարկերը, և նայեցի զարկերի թիվը էկրանի վրա: Որպես Վերջին Օրերի Սուրբ ես տեսա սելեստիալ հոգի և հիացա փրկության ծրագրով:

Որքան գիշերը խորանում էր, նրա վիճակն ավելի էր ծանրանում: Որոշ ժամանակ անց, նրա վիճակն այնքան վատթարացավ, որ սկսեց ականջներից արյուն գալ:

Առավոտյան իմ փոքրիկ հիվանդը հանդարտ անցավ վարագույրի այն կողմը: Նա հեռացավ իր մոր գրկից և «տարվեց տուն՝այն Աստծո մոտ, որը [նրան] կյանք էր տվել» (Ալմա 40.11):

Այդ գիշեր ես ավելի մոտեցա Փրկչին և Երկնային Հորը: Ես ավելի մեծ հասկացողություն ձեռք բերեցի ողջ մարդկության և նաև իմ հանդեպ Տիրոջ սիրո մասին: Ինձ հիշեցվեց, անգամ ապշեցի, թե որքան խորն է Նրա հանդեպ իմ սերը: Եվ ես ցանկություն զգացի օր-օրի և ամեն սրտի զարկով լինել ավելի բարի, ավելի հեզ, ավելի ներող, ավելի կարեկցող՝ ավելի Նրա պես: ■

Բարբարա Վինթեր, Արիզոնա, ԱՄՆ



Արցունքները զսպելով ես այդ մանչուկի համար երգեցի «Աստծո զավակն եմ»:

ՈՒԽՏԸ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ Է

Երբ հարցը վերաբերում է որոշումներին, որ ես կայացրել եմ որպես սիրելի Երկնային Հոր հետ ուխտի մաս, կարևոր չէ, թե ինչ է ասում աշխարհը:

Մարթա Վալենսիա Վասկուեզ

Երբ ես դեռահաս էի, մեր Երիտասարդ Կանանց նախագահը յուրաքանչյուր երիտասարդ կնոջ տվեց մի նվեր՝ տաճարի նկարը: Նա մեզ հետ խոսեց ուխտերի և մաքուր կյանքով ապրելու մասին: Այնուհետև նա խրախուսեց մեզ նպատակ դնել՝ մեկ օր տաճար գնալու համար:

Ես սրտանց ընդունեցի այդ քրոջ խորհուրդը և որոշեցի պատրաստվելը դարձնել առաջնահերթություն: Այդ ժամանակ Կոստա Ռիկայում տաճար չկար, սակայն ես գիտեի ինչ է ուխտը, քանի որ նոր էի մկրտվել, և անհամբեր սպասում էի Տիրոջ հետ ավելի շատ ուխտեր կապելու հնարավորությանը:

Այդ ժամանակ իմ ընտանիքից ոչ ոք Եկեղեցու անդամ չէր, այնպես որ ավետարանը չէր ուսուցանվում մեր տանը: Սակայն ես որոշեցի, որ ինքնուրույն կարող եմ սովորել ավետարանի չափանիշները և հետևել դրանց: Իմ պատրաստությունը ներառում էր սեմինարիա հաճախելը, թեև դասերն անցկացվում էին վաղ առավոտյան: Դա նշանակում էր չժամադրվել մինչև 16 տարեկան, և ապրել ողջախոհության օրենքով, որը իհարկե ընդունված չէ իմ հասակակիցների շրջանում: Սակայն ես գիտեի, որ կարող էի անել դա, որովհետև ուխտ էի կապել Տիրոջ հետ:

Սուրբ գրությունները թե ինքնուրույն և թե սեմինարիայում ուսումնասիրելը ամրապնդեց մաքուր, պարկեշտ կյանքով ապրելու իմ վճռականությունը: Հիշում եմ, ես հատկապես ոգեշնչվել էի 2000 քաջարի զինվորներով: Ինչպես ասվում է Ալմա 53.20–21-ում, այդ երիտասարդները «անսահման անվեհեր էին՝ խիզախության մեջ, և նաև՝ ուժի և գործունեության մեջ. բայց ահա, այս բոլորը չէր, նրանք տղաներ էին, որոնք հավատարիմ էին՝ բոլոր դեպքերում, ինչ բան

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԶՈՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Ես միայն մեկ հարց ունեմ. դուք հետևելո՞ւ եք ճշմարիտ և կենդանի մարգարեներին, թե՞ ոչ: Դա այլևս այդքան բարդ չէ: Բարոյականության վերաբերյալ Եկեղեցու չափանիշը պարզորոշ տրված է «Երիտասարդներին զորացնելու համար» գրքույկում, որի համար դուք չեք մեծացել, թեպետ ձեզանից շատերը այլևս Երիտասարդ Տղամարդկանց և Երիտասարդ Կանանց շարքում չեն: Եթե դուք կարդում եք նյութեր, որոնք հակասում են Եկեղեցու բարոյական չափանիշներին, ապա դուք ձեզ և ձեր իմաստությունը դնում եք Աստծո մարգարեների խորհրդից վեր, ապա կհայտնվեք շատ անխոհեմ արարքների ուղու վրա: Երբ մարդիկ սկսում են մտածել, որ իրենք Աստծուց կամ նրա պատգամներից ավելի լավ գիտեն, կամ տրված խորհուրդը իրենց չի վերաբերում, նրանք իրենց դնում են սայթաքուն լանջի վրա, որտեղ արդեն բազմաթիվ զոհեր են եղել: Պահանջվում է հավատք, իսկական, պարզ ու շիտակ հավատք, մարգարեական խորհուրդը ընդունելու և ըստ դրա ապրելու համար, անգամ երբ դուք լիովին չեք հասկանում այն: Նման պարզ հավատքը զորություն ունի ապահով ուղեկցելու ձեզ՝ կյանքում ձեր դիմաց ծառացած ցանկացած դժվարության միջով»:

Elder M. Russell Ballard of the Quorum of the Twelve Apostles, "When Shall These Things Be?" in *Brigham Young University 1995–96 Speeches* (1996), 189.



էլ որ նրանց վստահվում էր . . . նրանք ճշմարտության և լրջամտության տղաներ էին, քանզի նրանց սովորեցվել էր պահել Աստծո պատվիրանները և քայլել ուղիղ՝ նրա առաջ»: Ես ևս ցանկանում էի հավատարիմ լինել նրանում, ինչ ինձ էր վստահվել, ներառյալ՝ իմ մկրտության ուխտերը:

Ուխտերի վերաբերյալ լրացուցիչ հասկացողություն եկավ, երբ ես կանչվեցի ծառայելու Էլ Սալվադոր Սան Սալվադոր Արևելյան Միսիայում: Երբ տաճարում ստացա իմ օժտումը, միտքս եկավ Վարդապետություն և Ուխտեր 82.10 հատվածը. «Ես՝ Տերս, կապված եմ, երբ դուք անում եք այն, ինչ ես ասում եմ. բայց երբ դուք չեք անում այն, ինչ ես ասում եմ, դուք խոստում չունեք»: Իմ միսիայի ընթացքում ուխտերի գաղափարը, երբ մենք կատարում ենք մեր մասը, իսկ Տերը կատարում է Իր մասը, ինձ ոգեշնչեց լավագույնս կատարել իմ մասը: Այդպիսով, իմ զուգընկերներն ու ես օրհնվեցինք մեր աշխատանքում:

Ուխտերը, որ կապել եմ մկրտության ժամանակ և տաճարում, այսօր նույնքան վավերական են, որքան դրանք կապելու օրը:

Իմ միսիան եղել է տարիներ առաջ, սակայն իմ ուխտերը պահելով ես շարունակում եմ ուժ ստանալ: Դրանից հետո ես օրհնվել եմ յոթ տարի ծառայելով Սան Հոզե Կոստա Ռիկայի Տաճարում: Ծառայելով որպես տաճարային աշխատող ես հնարավորություն եմ ունեցել մշտապես հիշելու իմ կապած ուխտերը: Ես նման հիշեցումներ եմ ունեցել ծառայելով Երիտասարդ Կանանց կազմակերպությունում, որտեղ փորձել եմ ուսուցանել ուխտերի կարևորությունը, ինչպես իմ ղեկավարներն էին ուսուցանել ինձ:

Մեր ուխտերը միշտ պահելը հեշտ չէ: Օրինակ, շատ մարդիկ հնացած են համարում ողջախոհության օրենքը (կամ որոշ դեպքերում, կրոնական վարքը ընդհանուր առմամբ): Բարեբախտաբար, ժամանակի ընթացքում ինձ վրա ավելի մեծ ճնշում չեմ զգացել նրանց կողմից, ովքեր չեն կիսում իմ համոզմունքները: Ետ նայելով ես հիշում եմ, թե ինչ զգացողություն ունեցա որպես երիտասարդ կին, երբ մեր ղեկավարը խրախուսեց մեզ պատրաստվել տաճարային ուխտերին և ապրել դրանց համար: Այն ժամանակ կայացրած իմ որոշումը ես պահում եմ առ այսօր:

Ես կարող եմ հաստատուն մնալ իմ որոշումներում, որովհետև ես որոշումները չեմ կայացրել ինքնուրույն, պարզապես ինձ համար: Այլ դրանք եղել են որոշումներ, որ կայացրել եմ որպես սիրող Երկնային Հոր հետ ուխտի մաս: Կարևոր չէ, թե ինչ է աշխարհն ասում: Ես խոստացել եմ Տիրոջը, որ կհնազանդվեմ Նրա պատվիրաններին: Դա պատվի հարց է: Ուխտերը, որ կապել եմ մկրտության ժամանակ և տաճարում, այսօր նույնքան վավերական են, որքան դրանք կապելու օրը: Աստծո հետ ուխտը հավերժական է:

Հեշտ չէ ապրել այնպես, ինչպես Աստված է մեզ պատվիրել, սակայն ես վկայում եմ, որ դա հնարավոր է: Մեր ուխտերով ապրելու արդյունքում մենք կարող ենք վստահություն և ուժ ձեռք բերել, և կարող ենք վստահ լինել, որ Երկնային Հայրը մեզ երբեք միայնակ չի թողնի: Երբ Նա մեր կողքին է, մենք կարող ենք ամեն ինչ անել (տես Մորոնի 7.33): ■

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԻ ԳԻՐՔԻ

ՎԵՐՋԱՊԵՍ ԼՍԵՑԻ

Անանուն

Քոլեջում ուսանելու տարիներին ես օրինվել եմ բարդ պրակտիկա անցնելով տնից հեռու մի քաղաքում: Իմ վաղեմի ընկերը այնտեղ էր ապրում և թեև մենք նույն հավատքը չունեինք, մեր տարբերությունները չխանգարեցին մեզ սովորական ընկերներ լինել:

Երբ առաջին անգամ հանդիպեցի Մադլենին (անունը փոխված է), մենք երկուսս էլ աշխատում էինք մեկ այլ երիտասարդ աղջկա հետ, որը Վերջին Օրերի Սրբի հրաշալի օրինակ էր: Ես հիշում եմ, ինչպես էր Հոգին նշում այն նուրբ տարբերությունները այդ երիտասարդ աղջիկների մեջ, բացատրելով, թե ինչպես կարող են փոքր ընտրություններն ազդել հետագա կյանքի ընթացքի վրա: Տարիների ընթացքում ես միշտ հիշել եմ այդ հոգևոր տպավորությունները:

Այժմ տարիներ անց կրկին հանդիպելով, Մադլենը և ես որոշեցինք ժամանակ անցկացնել միասին: Երբ երեկոն մոտենում էր, ես տարօրինակ կերպով նյարդայնանում էի: Ես նստեցի նրա քաղաք ուղևորվող գնացքը և որքան ավելի էի մոտենում, այնքան իմ ներքին ձայնը իմ մտքում և սրտում ասում էր. «Դու պետք է ժամադրվես միայն բարձր չափանիշներ ունեցող մարդկանց հետ»:

«Սա ժամադրություն չէ,- մտածեցի ես,- ես ուղղակի հանդիպում եմ հին ընկերոջ»: Հոգին կրկնում էր զգուշացումը, դրդելով ինձ, մինչև որ ես հասկացա, որ դա իսկապե ժամադրություն էր, և ես սկսեցի մտածել նրա ներկայիս չափանիշների և ապրելակերպի մասին: «Նա գիտի, որ ես ՎՕՍ եմ,- ընդհանրացրեցի ես,- նա ծանոթ է իմ չափանիշներին, և ոչ մի խնդիր չի լինի»:

Ինչևէ, ես սկսեցի մտածել, որ մի գուցե նախկինում նկատած այդ «նուրբ տարբերությունների» պատճառով էր, որ մեր ճանապարհները իրարից հեռացել էին ավելի, քան ես սպասում էի: Այնպես որ ես հետևեցի Հոգու հուշումներին և զանգահարեցի, որ հրաժարվեի հանդիպումից: Ես վախենում էի, որ չվիրավորեմ նրան: Ինչպե՞ս կարող էի հոգևոր տպավորությունների մասին ասել մի ընկերջ, որը չի գնահատում Սուրբ Հոգու առաքելությունը:

Ես բացատրեցի, որ ես ինձ հանգիստ չեի զգում մեր պլանավորած միջոցառումներից մեկի առումով, և հույս ունեի, որ դա ընդունելի պատճառ կլիներ այդ երեկոյից խույս տալու համար: Նա հուսահատվեց և առաջարկեց փոխել մեր պլանները: Ես հանգստացա և համաձայնեցի այդ փոփոխության հետ մտածելով, որ. «Մի գուցե այդ միջոցառման համար էր Հոգին զգուշացնում ինձ»:

Մենք ուրախ ժամանակ էինք անցկացնում այդ երեկո, սակայն ժամանակ առ ժամանակ Հոգին ասում էր, որ նախկին զգուշացումը կարևոր էր: Նախ կարծես մտահոգվելու կարիք չկար, սակայն որքան գիշերը մոտենում էր, այնքան պարզ էր դառնում, որ թեպետ մենք նույն դաստիարակությունն ու փորձն ունեինք, սակայն լրիվ տարբեր ուղիներով էինք առաջ գնում: Մեր չափանիշները նույնը չէին՝ անգամ մանրուքներ թվացող բաներում: Երբ նա գինի պատվիրեց, ես բացատրեցի, որ հավանաբար չեմ կարող վճարել ոգելից խմիչքի

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՋԵՖ ՎՈՒԱՐԴԻ

ՃԱՆԱՊԱՐ-ՀԻՑ ԱՆՆՇԱՆ ՇԵՂՈՒՄԸ

«Շատ հաճախ . . . մենք ճանապարհ ենք ընկնում, հուսալով հետաքրքիր ճամփորդություն կատարել, սակայն շատ ուշ ենք հասկանում, որ ճանապարհից աննշան շեղումը մեզ դրել է հոգևոր աղետի ուղու վրա»:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական, «Մի քանի աստիճանի տարբերությունը», *Լիահոնա*, մայիս 2008, 58–59:

«Նա հին ընկեր է, իսկ սա ժամադրություն չէ»,- ասացի ինքս ինձ: Որեմն ինչո՞ւ է Հոգին անընդհատ զգուշացնում ինձ, որ չպետք է գնամ այնտեղ:

համար: Նա հարգեց իմ ցանկությունը և ինքը վճարեց:

Իմ հոգու անհանգստությունը ահագնանում էր, որքան երեկոն շարունակվում էր: Երբ ընթրիքն ավարտեցինք, ես արդեն աթոռի ծայրին պատրաստ էի գնալու, որովհետև գիտեի, որ վերջին գնացքը շուտով մեկնելու է, իսկ ես շատ հեռու էի ապրում, որպեսզի տաքսի նստեի: Իմանալով իմ անհանգստության պատճառը, ընկերուհիս ասաց, որ կարող եմ իր տանը գիշերել: Այժմ արդեն Հոգին ինձ հանգիստ չէր տա, հաստատելով այն, ինչ արդեն գիտեի. գիշերելը ճիշտ ընտրություն չէ:

Նրան տուն ճանապարհելիս ես փորձում էի հանգիստ երևալ: «Իսկապե՞ս չես ուզում գիշերել»,- հարցրեց նա: Իհարկե, չէի ուզում: Նա չպնդեց և չվիրավորեց, սակայն Հոգին հանդարտ խոսում էր ավելի պարզ, քան ամպրոպի ձայնը: Ես չէի կարող բաց թողնել իմ գնացքը:

Ես սպասեցի մինչև նա ներս մտավ, ապա որքան կարող էի արագ վազեցի, որպեսզի ժամանակին հասնեի երկաթուղային կայարան: Ես մտածում էի Եգիպտոսում Հովսեփի մասին, երբ նա փախչում էր գայթակղությունից (տես Ծննդոց ԼԹ.7–12):

Երբ հիշում եմ այդ երեկոն, ես ունենում եմ և վախի և երախտագիտության զգացում՝ վախ այն բանի համար, ինչ կարող էր պատահել, և երախտագիտություն Սուրբ Հոգու ընկերակցության համար: Հոգին խոսեց, և ես ուրախ եմ, որ թեև ուշացումով, սակայն, ի վերջո, ականջ դրեցի հուշումին:

Ակնհայտ է, որ այդ երեկո իմ տեսադաշտը այնքան պարզ չէր, որքան Տիրոջինը: Ինչպես Եսայիան է գրել.

«Որովհետև իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն, ասում է Տերը.

Այլ ինչպես որ բարձր է երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են իմ ճանապարհները ձեր ճանապարհներից և իմ խորհուրդները ձեր խորհուրդներից» (Եսայիա ԾԵ.8–9):

Կյանքում մեր առաջ ծառացած որոշ ընտրություններ արագ կայացնում ենք և մոռանում: Կան ընտրություններ էլ, որ իրենց մեջ դաս են պարունակում, և ճիշտ որոշում կայացնելու դեպքում երբեք չենք մոռանում: Ես երախտապարտ եմ գիտելիքի համար, որ եթե ուշադրություն ենք դարձնում Սուրբ Հոգու հուշումներին, և դա անում ենք անմիջապես, մենք կարող ենք ավելի հեշտությամբ մնալ Հիսուս Քրիստոսի ուղու վրա, որ նախատեսված է մեզ համար: ■

Հարցեր և պատասխաններ

«Ինչո՞ւ է մեր ընտանիքը խնդիրներ ունենում, թեև մենք գնում ենք եկեղեցի, անցկացնում ընտանեկան երեկո և աշխատում ապրել ավետարանով: Ի՞նչ մենք կարող ենք անել»:

Ավետարանով ապրելը օրհնություններ է պարգևում, սակայն դա չի նշանակում, որ դուք խնդիրներից զերծ կլինեք: Փորձությունները կարող են ամրապնդել ձեր հավատքը՝ հուշելով ձեզ փնտրել Երկնային Հոր օգնությունը: Նրա օգնությամբ խնդիրները լուծելով դուք կսովորեք արդար որոշումներ կայացնել:

Դուք քննարկե՞լ եք այդ իրավիճակը ընտանիքով: Միասին խորհրդակցելով դուք կարող եք օգտակար մտքեր գտնել: Դուք ծոմ պահե՞լ եք և աղոթե՞լ եք որպես ընտանիք լուծումներ գտնելու համար: Դուք քննե՞լ եք սուրբ գրությունները և գերագույն համաժողովի ելույթները: Միգուցե ձեր ընտանիքը պետք է որոշ փոփոխություններ կատարի իրավիճակը շտկելու համար կամ գուցե դուք պարզապես պետք է լինեք հաստատակամ, համբերատար սպասեք և վստահեք Տիրոջը, որ ամրացնի ձեզ այս փորձության ընթացքում (տես Մոսիա 24.15):

Եթե մյուսները ցավ են պատճառել ձեր ընտանիքին, փորձեք ներել նրանց և չմեղադրել: Թեպետ ներողամտությունը անմիջապես չի լուծի խնդիրը, այն խաղաղություն կպարգևի ձեր սրտին և ավելի կհեշտացնի խնդիրների լուծումը:

Հակառակորդը հարձակում է գործում ընտանիքների վրա, որովհետև նրանց ամրությունը շատ կարևոր է Եկեղեցու և ձեր համայնքի համար: Այնպես որ շարունակեք տոկալ: Շարունակեք եկեղեցի հաճախել, ընտանեկան երեկոներ անցկացնել և ավետարանով ապրել: Հնազանդությունը օգնում է ձեզ զգալ Սուրբ Հոգին, իսկ Նրա առաջնորդությունը էական է գտնելու համար պատասխանները, որոնք դուք փնտրում եք: Ձեր ամենակարևոր նպատակներից մեկն է՝ ամուր ընտանիքում ապրելը, թեկուզև այն ընտանիքում, որը խնդիրներ ունի հաղթահարելու:

Օգտագործեք մեզ տրված ուղեցույցները

Հավանաբար, ընտանիքը չի ամրանում առանց փորձվելու: Բարեբախտաբար, մենք կարիք չունենք մեր խնդիրները միայնակ դիմակայել. Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք հաջողության հասնենք և որպես անհատներ և որպես ընտանիքներ: Մեզ օգնելու նպատակով Նա մեզ կարևոր ուղեցույցներ է տվել, օրինակ սուրբ գրությունները, կենդանի մարգարե, Եկեղեցու այլ ղեկավարները և Սուրբ Հոգին: Նրանք կարող են մեզ օգնել հասկանալ և կիրառել ավետարանի սկզբունքները, որոնք ուրախություն կպարգևեն մեզ և մեր ընտանիքներին: Ինչպես նաև, երբեք մի մոռացեք ասել ձեր ծնողներին, որ դուք գնահատում և սիրում եք նրանց: Ես գիտեմ, որ Տերը ուղի կբացի ձեր ընտանիքի միավորվելու, ամրանալու և բարձրանալու համար: Ես գիտեմ, որ ընտանիքը կարգված է Աստծո կողմից:

Զարեղ Լ., 18 տարեկան, Մինդանաո, Ֆիլիպիններ

Սովորեք ձեր դժվարություններից

Կարևոր չէ, թե որքան տքնաջան եք փորձում, միշտ էլ խնդիրներ կլինեն: Այդ փորձությունները օգնում են մեզ աճել: Այդ ամենը կախված է, թե ինչպես եք դուք արձագանքում այդ խնդիրներին: Կարևորն այն է, որ սովորեք դրանցից: Մի քայլ ետ գնացեք և նայեք, թե ինչ է իրականում կատարվում ձեր շուրջը: Աղոթեք փորձությունների համար, որոնց միջով անցնում եք, և հավատացեք, որ Տերը կօգնի ձեզ դուրս գալ այդ փորձություններից: Նրանք կարող են ուժ դառնալ ձեզ համար, և դուք էլ ձեր հերթին կարող ենք ուժ լինել մյուսների համար:

Մակենզի Ս., 18 տարեկան, Չիհուահուա, Մեքսիկա

Կարդացեք Ընտանիքի Հռչակագիրը

Խնդիրները գալիս են, անկախ նրանից մենք աղոթում ենք, թե ոչ: Դրանք ոչ թե պետք է պատժեն մեզ, այլ ամրացնեն: Կյանքում մեր դեմ ծառացած խնդիրները ընտանիքներին հնարավորություն են տալիս աշխատել միասին: Երբ իմ ընտանիքը առաջ է մղվում լարվածության, փողի խնդիրների միջոց, և պարզապես փորձում է ժամանակ գտնել միասին լինելու, մենք ավելի ենք մոտենում միմյանց և մեր Երկնային Հորը: Երբ դժվար ժամանակներ են լինում, մենք մի բան ենք անում՝ կարդում

Պատասխանները Եկեղեցու վարդապետության մասին հայտարարություններ չեն, այլ միտված են օգնելու և խորհուրդ տալու:

ենք «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագիրը: Այն հիշեցնում է մեզ սուրբ կապը, որով մենք կապված ենք, և թե որքան կարևոր է պահել մեր ուխտերը:
Անիա Գ., 15 տարեկան, Ջորջիա, ԱՄՆ

Վստահեք Տիրոջը

Երբ ես մտածում եմ, թե ինչու իմ ընտանիքը խնդիրներ ունի, անգամ երբ մենք անում ենք հնարավոր ամեն ինչ, ինձ օգնում է Հոբի պատմությունը և նրա կրած փորձությունները: Հոբ ԺԹ.25–26-ում կարդում ենք. «Իսկ ես գիտեմ որ փրկիչս կենդանի է, և նա վերջը պիտի կանգնե հողի վրա: Եվ իմ մորթը այսպես թափվելուց հետո, այն ժամանակ իմ մարմնիցը տեսնելու եմ Աստծուն»: Հոբն անցավ մեծ դժվարությունների միջով, սակայն նա դեռևս գիտեր, որ իր Քավիչն ապրում է: Երբ մենք կարողանանք Հոբի ձևով մտածել և ապրել, ես գիտեմ, որ կտեսնենք, որ մեր խնդիրները լուծվել են և կհասկանանք, որ մենք ունենք Քավիչ, որը բարձրացնում է մեզ այդ փորձությունների ժամանակ:
Մեգան Բ., 17 տարեկան, Յուտա, ԱՄՆ

Հույսով դիմակայենք խնդիրներին

Խնդիրները մեզ ավելի ամուր են դարձնում, երբ ճիշտ ձևով ենք դրանց դիմակայում: Մենք պետք է խնդիրներին դիմակայենք հույսով և քաջությամբ: Դուք հնարավոր է անում ենք ամեն ինչ, հաճախելով եկեղեցի և փորձելով ապրել ավետարանով, և դուք պետք է ընդունեք այն փաստը, որ խնդիրները ձեզ զարգացնում են և, ի վերջո, ավելի են լավացնում: Փորձեք նաև գտնել, թե ինչն եք սխալ անում, և ջանքեր գործադրեք ուղղելու դա: Հաճախ փորձեք օգնել մյուսներին, և այդպիսով ձեր խնդիրները ավելի թեթև կթվան: Այդ ամենից բացի, միշտ խորհրդակցեք Տիրոջ հետ: Աղոթեք ձեր խնդիրների համար և խնդրեք, որ Երկնային Հայրը առաջնորդի ձեզ:
Ռայմոնդ Ա., 18 տարեկան, Ակկրա, Գանա

Ընդունեք Երկնային Հոր կամքը

Կարծում եմ, որ խնդիրների միջոցով Երկնային Հայրը փորձում է մեզ: Մենք չպետք է մոռանանք, որ Նա մեր Հայրն է և Նա շատ է սիրում մեզ, հետևաբար ցանկանում է լավագույնը մեզ համար: Ես գիտեմ, որ խնդիրները հաղթահարելու միակ ուղին հաստատակամությունն է և Հոր կամքը ընդունելը:
Խոսե Ս., 18 տարեկան, Անքեշ, Պերու

Համբերել մինչև վերջ

Արարչի ծրագրում ընտանիքը առանցքային դեր ունի, բնականաբար հակառակորդը ամեն ինչ անում է, որպեսզի մենք չկարողանանք միասին ապրել որպես երջանիկ, ավետարանի վրա հիմնված ընտանիք: Մենք գիտենք, որ կյանքը հեշտ չէ կամ եկեղեցի գնալը և ընտանեկան երեկո անցկացնելը չի ազատում գայթակղություններից: Երբ խնդիրներ են ծագում, կարդացեք ձեր սուրբ գրությունները, աղոթեք և պարզապես զրուցեք որպես ընտանիք:
Երեց Դաղլի, 21 տարեկան, Ինդոնեզիա Ջակարտա Միսիա

ՀԵՏԵՎԵՔ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

«Տիրոջ և Նրա վարդապետության օգնությամբ, ընտանիքի առաջ ծառացած խնդիրների բոլոր վնասակար ազդեցությունները կընկալվեն և կհաղթահարվեն: Ինչպիսի կարիքներ էլ ունենան ընտանիքի անդամները, մենք կարող ենք ամրացնել մեր ընտանիքները, եթե հետևենք մարգարեների տված խորհրդին:

Մեր ընտանիքներն ամրացնելու բանալին կայանում է մեր տներում Տիրոջ Հոգին ունենալու մեջ»:

Elder Robert D. Hales of the Quorum of the Twelve Apostles, "Strengthening Families: Our Sacred Duty," *Ensign,* May 1999, 32.

ՀԱՋՈՐԴ ՀԱՐՑԸ

«Ինչպե՞ս եք զսպում ձեր զայրույթը, երբ իսկապես անտրամադիր եք»:

Ուղարկեք ձեր պատասխանը մինչև 2011թ. մայիսի 15-ը, հետևյալ հասցեով.

Liahona, Questions & Answers 5/11
50 E. North Temple St., Rm. 2420
Salt Lake City, UT 84150-0024, USA
Կամ էլ-փոստով՝
liahona@ldschurch.org

Պատասխանները, հնարավոր է, խմբագրվեն ծավալի ու պարզության համար:

Հետևյալ տեղեկությունը և թույլտվությունը պետք է ներառված լինի ձեր է-փոստի կամ նամակի մեջ. (1) լրիվ անունը, (2) ծննդյան թիվը, (3) ծուխը կամ ճյուղը, (4) ցիցը կամ շրջանը, (5) ձեր գրավոր թույլտվությունը, և, եթե դուք 18 տարեկանից ցածր եք, ձեր ծնողի գրավոր թույլտվությունը (է-փոստը ընդունելի է) ձեր պատասխանը և լուսանկարը տպագրելու համար:

ՄԻԵՏ ՀԻԵԼՔ ԼՐԱՆ



ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԽՈՍՏԱՑԵԼ ԵՆՔ:
(ՏԵՍ ՂՈՒԿԱՍ ԻԲ.19–20; ՎԱՌՈՒ 20.77, 79:)

ՎԵՐՋԻՆ ՊՇԱՐԻՆԸ, ՍԱՅՄՈՆ ԳՅՈՒՆ

Վարդապետություն և Ուխտեր 76.22-24

Այս տողերը հայտարարում են Հիսուս Քրիստոսի մասին արդի վկայությունը, որ՝ Նա ապրում է



22 Եվ արդ, բազմաթիվ վկայու-
թյուններից հետո, որ տրվել են
նրա մասին, սա է [a]վկայությունը,
ամենավերջինը, որ մենք տալիս
ենք նրա մասին. Որ, նա [b]ապրո՛ւմ է:
23 Քանզի մենք [a]տեսանք նրան,
նույնիսկ [b]Աստծո աջ կողմում. և
24 Որ [a]նրանով, նրա միջոցով, և
նրանից է, որ [b]աշխարհները կան
և ստեղծվել են, և դրանց բնակիչ-
ները ծնված [c]որդիներն ու դուստ-
րերն են Աստծո:

Բազմաթիվ վկայություններ

Նախքան այս հայտնությունը բազմաթիվ վկայություններ են տրվել հարություն առած Քրիստոսի մասին: Ահա մի քանի օրինակներ.

- Մարիամ Մագդաղենացի (տես Հովհաննես Ի.11–18)
- Առաքյալները Հիսուսի հայտնվելու օրը (տես Մատթեոս ԻԸ.9–20; Մարկոս ԺԶ.14–20; Ղուկաս ԻԴ.36–53; Հովհաննես Ի.19–29; ԻԱ)
- Երկու առաքյալները Էմմաուսի ճանապարհին (տես Ղուկաս ԻԴ.13–35)
- Ստեփանոս (տես Գործք Է.55–56)
- Պողոս (տես Գործք Թ.1–6)
- Նեփիացիներ (տես 3 Նեփի 11–28)
- Մորոնի (տես Եթեր 12.39)
- Ջոզեֆ Սմիթ (տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.16–20)

Նա ապրում է:

«Ես կարդացել եմ և հավատում եմ վկայություններին նրանց, ովքեր զգացել են Քրիստոսի Խաչելության վիշտը և Նրա Հարության ուրախությունը: Ես կարդացել եմ և հավատում եմ Նոր Աշխարհից նրանց վկայություններին, ում այցելեց նույն հարություն առած Տերը:

Ես հավատում եմ վկայությանը նրա, ով այս տնտեսության մեջ խոսեց Հոր և Որդու հետ մի պուրակում, որն այժմ կոչվում է սուրբ, և ով տվեց իր կյանքը՝ իր արյամբ կնքելով այդ վկայությունը»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, «Նա հարություն առավ» *Լիահոնա*, մայիս 2010, 89:

Աշխարհներ ստեղծվեցին

«Հոր ղեկավարությամբ Քրիստոսը տիեզերքի Տերն էր, որը ստեղծեց անհամար աշխարհներ, որոնցից մերը միակն է (տես Եփեսացիս Գ.9; Եբրայեցիս Ա.2):

Քանի՞ մոլորակ կա տիեզերքում, որոնց վրա մարդիկ են ապրում: Մենք չգիտենք, սակայն մենք միայնակ չենք տիեզերքում: Աստված մեկ մոլորակի Աստվածը չէ»:

Երեց Նիլ Ա. Մաքսվել (1926–2004) Տասներկու Առաքյալների Քվորումից, «Քրիստոսի հատուկ վկաները», *Լիահոնա*, ապր. 2001, 5:

Աստծո որդիներ և դուստրեր

Դուք սովորական էակներ չեք, ողջ աշխարհի իմ սիրելի երիտասարդ ընկերներ: Դուք փառավոր եք և հավերժական: . . .

Իմ աղոթքը և օրհնությունն է, որ երբ դուք նայեք ձեր արտացոլանքին, կարողանաք նայել ձեր թերություններից և կասկածներից այն կողմ և տեսնեք, թե ով եք դուք իրականում, դուք Ամենազոր Աստծո փառահեղ որդիներն ու դուստրերն եք»:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական, «Արտացոլանքը ջրում» (Եկեղեցու Կրթական Համակարգի հավաք երիտասարդ չափահասների համար, նոյ. 1, 2009); մատչելի է՝ CESfiresides.lds.org կայքում:

Խմբագիրների կողմից. Այս էջը միտված չէ մանրակրկիտ բացատրելու ընտրված սուրբ գրության հատվածը, այն հանդիսանում է պարզապես մեկնարկ ձեր անձնական ուսումնասիրության համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎԱՆԳԵԼԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԹԵԼ ԹԱՐՄՈՆ

Վերակառուցման ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

Տխրեցի, երբ տեսա երկրաշարժից առաջացած ավերակները: Սակայն այդ ժամանակ հասկացա, որ Աստված սիրում է և մահացածներին, և փրկվածներին:

Էշլի Դայեր

Քանի որ ես ապրում եմ Շանհայում, Չինաստան, ես հնարավորություն ունեցա դպրոցական խմբի հետ գնալ Չինաստանի հարավում գտնվող Միչուան նահանգ, և օգնել տներ կառուցել երկրաշարժից տուժածների համար, քանի որ մի քանի տարի առաջ երկրաշարժի հետևանքով այդ ողջ տարածքը ամայացել էր: Մենք տքնաջան աշխատում էինք շարելով աղյուսները, սվաղելով կրաշաղախը, հրելով աղյուսներով լիքը ձեռնասայլակները և աղյուսները փոխանցելով շարքով կանգնած մարդկանց: Արդեն երկրորդ օրը մեջքս ցավում էր, և ձեռնոցներիս վրա անցքեր էին առաջացել: Ինչևէ, այդ ճամփորդությունը անմոռանալի փորձառություն էր ինձ համար և ամրապնդեց իմ վկայությունը իմ և յուրաքանչյուր անձի անհատական արժեքի մասին, որը Երիտասարդ Կանանց արժեքներից մեկն է:

Ամեն օր տքնաջան աշխատելով ես նկատեցի, որ իմ անձնական արժեքի մասին իմ համոզվածությունը աճում է: Ես ինձ լավ էի զգում, քանի որ իմ աշխատանքի շնորհիվ բարելավվելու էր կյանքի պայմանները այն մարդկանց, ովքեր ինձանից վատ վիճակում էին գտնվում:

Մենք նաև հնարավորություն ունեցանք այցելելու այդ տարածքի դպրոց: Երբ մենք ժամանեցինք, փոքր երեխաների խումբը վազեց դեպի մեզ: Տեսնելով այդ հրաշալի փոքրիկներին, ես գիտակցեցի նրանց անհատական արժեքը ևս: Նրանք բոլորը Աստծո գեղեցիկ զավակներն են, և ես խորը զգացում ունեցա, որ Նա սիրում և ճանաչում է նրանցից յուրաքանչյուրին:

Իմ ճամփորդության ավարտին մոտ մենք հնարավորություն ունեցանք գնալու առողջավայր, որտեղ պետք է ճաշեինք: Ինչևէ հասնելով այնտեղ, տեսանք, որ այն ավերվել էր երկրաշարժից: Դա իմ տեսած ամենամեծ ավերածությունն էր: Ես սկսեցի արտասվել: Շենքերի առաստաղներն ու պատերը փլվել էին, մոտակա ծառերը տապալվել էին, և ամենուր քարեր էին թափված: Մի հսկայական քար սարից ներքև գլորվելով հարվածել էր մի շենքի՝ խոռոչներ առաջացնելով առաստաղի և պատերի վրա: Մի հատ կոշիկ էր ընկած դռներից մեկի շեմի մոտ:

Երբ մտածեցի այդ մասին և այն փաստի մասին, որ մարդիկ են զոհվել այս աղետի ժամանակ, ես ջանում էի հասկանալ, թե ինչու է Երկնային Հայրը թույլ տվել դա տեղի ունենա: Արդյո՞ք Նա չէր սիրում նրանց: Այնուհետև ես հիշեցի, թե ինչ էինք մենք քննարկում Երիտասարդ Կանանց դասարանում և հասկացա, որ Նա իրոք սիրել է նրանց: Նա ճանաչում էր և սիրում էր նրանց անհատապես: Այդ օրը բոլոր զոհվածները Աստծո զավակներն էին: Սկզբում այդ միտքը նույնիսկ ինձ ավելի տխրեցրեց: Սակայն ես հասկացա, որ այդ մարդիկ հոգևոր աշխարհում էին և կարող էին կրկին վերադառնալ Երկնային Հոր մոտ: Այդ միտքը ինձ սփոփեց և խաղաղության զգացում պարգևեց:

Ես գիտեմ, որ Աստծո զավակն եմ՝ անհատական մեծ արժեքով: Մենք բոլորս մեր Երկնային Հոր զավակներն ենք, որը մեզ գիտի անհատապես: Նա սիրում է մեզ այնպիսի խորը և ուժգին սիրով, որը երբեք չենք կարող պատկերացնել: Այս հասկացողությունը իմ սրտում խորը արմատներ գցեց, երբ ես աշխատում և ծառայում էի մարդկանց մեջ, ովքեր մեծապես տուժել էին Միչուանի երկրաշարժից: ■

Էշլի Դայերը (աջից) օգնել է վերակառուցել տեղի բնակիչների տները 2008թ. Միչուանում, Չինաստան, տեղի ունեցած երկրաշարժից հետո:

ՅՈՍԵՖ ՄՈՐԳԱՆ ԵՎ ԷԼԻԶԱԲԵԹ ՇՈՒՄՈՒՆԻ

ԵՐԻՏԱՍԱՐԴԵՐ

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Երբ երկու թահիթցի դեռահասներ սկսեցին ուսումնասիրել սուրբ գրությունները, նրանց կյանքը փոխվեց:

Ադամ Ս. Օլսեն
Եկեղեցու ամսագրեր

Ռուման իսկապես չէր ցանկանում ուսումնասիրել սուրբ գրությունները: Վայթիերը իսկապես չէր ցանկանում գնալ սեմինարիա: Սակայն երբ նրանք փոխեցին իրենց մոտեցումը, նրանց կյանքը փոխվեց:

Ինչո՞ւ ոչ:

Ինչո՞ւ պետք է դեռահասն ամեն հինգշաբթի երեկո երկու ժամ անցկացնի սուրբ գրությունները ուսումնասիրելով իր մայրիկի հետ: Մեկ տարի առաջ Ռումա Թերուատին Թահիթիից հավանաբար կզարմանար դրա վրա:

Այժմ նա հարցնում է՝ ինչու դեռահասը *չպետք* է այդ ամենը անի:

Սեմինարիայի երեք տարիների ընթացքում Ռուման երբեք ուշադրություն չէր դարձնում, երբ ուսուցիչը հաջորդ դասի սուրբ գրություններն էր հանձնարարում: «Ես չէի ուզում կարդալ,- ասում է նա,- սուրբ գրություններն ինձ համար հետաքրքիր չէին»:

Սակայն նրան հետաքրքիր էր, թե ինչու էին իր ծխի և ցցի Եկեղեցու ղեկավարները միշտ սուրբ գրություններն օգտագործում իրենց ելույթներում և դասերում: Նա հետևում էր իր ղեկավարներին: Նա տեսնում էր, թե որքան հեշտությամբ էր իր ցցի նախագահը մեջբերում սուրբ գրություններից:

Այսպիսով, երբ Ֆաա Թահիթի Ցիցը սեմինարիայի ուսանողներին բաժանեց թիմերի՝ սուրբ գրությունների սերտման մրցույթներ անցկացնելու նպատակով

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՄՈՒՏ Ս. ՕԼՍԵՆ, ԲԱՑԻ ՆՇԱԾԻՑ, ՎԵՐԵՎՈՒՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ © ISTOCK; ՇԱՐԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ © ISTOCK

սեմինարիայի իր ավարտական տարում, Ռուման որոշեց սուրբ գրությունները ուսումնասիրել:

Այդ ժամանակ էր, որ նա իր շաբաթական սուրբ գրությունների սերտման դասերը սկսվեցին: Ամեն երեքշաբթի նրանք միասին պատրաստվում էին հաջորդ օրվա դասի մրցույթին՝ սովորելով, թե որտեղ են գտնվում հետաքրքիր հատվածները և նույնիսկ մտապահելով դրանք:

Եվ այդ ժամանակ սկսվեց փոփոխությունների շարքը Ռումայի կյանքում: Սուրբ գրությունների ուսումնասիրության շնորհիվ նա ավելի մտերմացավ իր մայրիկի հետ: Նա սկսեց զուգահեռներ նկատել այն ամենի միջև, ինչ սուրբ գրություններն են ուսուցանում և այսօր աշխարհում է տեղի ունենում: Երբ նա աղոթում էր իր կարդացածի մասին, նա հասկանում էր, որ դա Աստծուց էր:

Այն նաև օգնեց իրեն առաջնորդել իր թիմին դեպի հաղթանակ ցցի սուրբ գրությունների սերտման մրցույթում:

Ռուման իր ստացած օրհնություններում տեսնում է ուսումնառության ժամանակ քաղած դասը: «Մոսիա 2.24 -ում Բենիամին թագավորն ուսուցանել է, որ երբ մենք ընտրում ենք անել այն, ինչ Տերն է խնդրել, մենք անմիջապես օրհնվում ենք»,- ասում է Ռուման: Նրա ստացած ամենամեծ օրհնություններից մեկը, ինչպես ինքն է ասում. «այս տարի սուրբ գրություններն ուսումնասիրելուց հետո ես գիտեմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է»:

Ինձ մի ասեք ինչ պետք է անեմ

Ուսումնական տարվա սկզբում Վայթիեր Պիտոն անգամ Եկեղեցու

ՋԱՆԱՍԻՐԱԲԱՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՔ

«Արագացված դասընթացները այդքան արդյունավետ չեն, որքան մեր կյանքում սուրբ գրություններն ամեն օր ընթերցելն ու կիրառելը: Ծանոթացեք սուրբ գրություններում ուսուցանվող դասերին . . . Ուսումնասիրեք դրանք այնպես, ասես նրանք խոսում են ձեզ հետ, քանի որ դա այդպես է: . . .

. . . Եթե ջանասիրաբար ուսումնասիրեք սուրբ գրությունները, ձեր բոլոր գործերում գայթակղությունը անտեսելու և Սուրբ Հոգու առաջնորդությունն ունենալու ձեր զորությունը կավելանա»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, «Լավագույնս դրսևորեք ձեզ», *Լիահոնա*, մայիս 2009, 68:

Երբ Ռուման Թերուատին (ներքևում) և իր սեմինարիայի դասընկերները ճամփորդեցին հարևան Մուրի (ձախում) ստուգելու սուրբ գրությունների իրենց գիտելիքը, արդյունքը կարևոր չէր, Ռուման արդեն հաղթող էր:

Երբ Վայթեր Պիտոն Թահիթիից որոշեց ուսումնասիրել սուրբ գրությունները, նա սկսեց տեսնել օրհնությունները:

անդամ չէր: Ուրեմն, ինչպե՞ս նոր անդամը, որ նախկինում երբեք չէր եղել սեմինարիայում, օգնեց իր թիմին հաղթել Ֆաա ցցի սուրբ գրությունների սերտման մրցույթում:

«Ես չէի անհանգստանում, որ շատ փորձառություն չունեմ,- ասում է նա,- ես այդ հատվածներից շատերը սովորել էի միսիոներների հետ դասերի ընթացքում»:

Վայթերի ընտանիքի մեծ մասը միացավ Եկեղեցուն այն բանից հետո, երբ նրա հայրը անսպասելիորեն մահացավ և ծխի միսիայի ղեկավարը միսիոներներին բերեց Վայթերի տուն: Նրանք խոսեցին ընտանիքի միասնության և հավերժ միասին լինելու մասին: «Դա իսկապես փոփոխություն բերեց մեր ընտանիք»,- ասում է նա:

Ինչևէ, դա չփոխեց 17-ամյա աղջկա անհատական մոտեցումը: «Մկրտվելուց հետո, բոլորն ասում էին, որ ես պետք է սեմինարիա հաճախեմ,- ասում է նա,- իսկ ես չեմ սիրում, երբ ինձ ասում են, ինչ պետք է անեմ»:

Վերջապես, նա որոշեց, որ պետք է գնա և նրան այն դուր եկավ: Նրան հանձնարարեցին լինել սուրբ գրությունների սերտման նույն թիմում, որտեղ Ռուման էր:

Սկզբում նա չէր ձգտում կարդալ հանձնարարված սուրբ գրությունները: Սակայն երբ որոշեց պետք է կարդա, շուտով մի քանի օրհնություններ նկատեց:

«Սուրբ գրությունները ինձ մեծապես օգնել են,- ասում է նա,- ես շատ բաներ եմ սովորել սուրբ գրություններից», օրինակ՝ աղոթքի կարևորությունը և որ Երկնային Հայրը կպատասխանի մեր այդ աղոթքներին:

Նա նաև սովորեց, որ երբ նա իր որոշմամբ է պարտավորություն ստանձնում, օրինակ սեմինարիա հաճախել կամ սուրբ գրությունները ընթերցել, պարտավորությունը պահելը ավելի հեշտ է, քան եթե նա ստիպված պետք է դա անի:

Այժմ, երբ ուսումնական տարին ավարտվել է, Վայթերը երախտապարտ է, որ գնացել է սեմինարիա և ուսումնասիրել է սուրբ գրությունները. «Ես գիտեմ, որ մենք օրհնվում ենք կարդալով սուրբ գրությունները»: ■

Իմ օրինության **հուշումը**

Սքոթ Թալբոթ

Ես ծառայել եմ Տեխասի Հյուսթոն Հարավային Միսիայում որպես իսպանախոս երեց: Մի օր իմ զուգընկերը և ես թակում էինք դռները, փորձելով գտնել ինչ-որ մեկին ուսուցանելու նպատակով: Մենք մոտեցանք մի տան, որը մուտքի դիմաց մաշված փայտե հատակով հսկայական սրահ ուներ:

Մի ծեր կին բացեց դուռը և մեզ ներս հրավիրեց: Վստահ չեմ, թե նա իսկապես գիտեր մենք ով քեր ենք և ինչ ենք անում, սակայն նա իսկապես քաղաքավարի էր: Մենք սկսեցինք ուսուցանել նրան առաջին դասը և թվում էր ամեն ինչ հրաշալի է: Շուտով իմ հերթն էր ուսուցանելու Ջոզեֆ Սմիթի և Առաջին տեսիլքի մասին: Ես նկատում էի, որ այդ կնոջ դեմքի շփոթվածությունը մեծանում էր: Ակնհայտ էր, որ նա իրականում չէր հետևում, թե ինչ էի ես փորձում բացատրել իրեն:

Մեր զրույցների թեմաներից մի քանի հարցեր տալուց հետո, որպեսզի պարզեմ, թե որքան էր նա ընկալել, ես շփոթվեցի, քանի որ նա չէր հասկացել Առաջին Տեսիլքի գաղափարը: Երկար օր էր, և միակ բանը, որ չէր ուզի միսիոները, դա այն է, որ ունկնդիրը չի հասկացել այն, ինչ ինքը փափագում է, որ մարդիկ իմանան, որ ճշմարիտ է:

Ես զգացի, որ մի վայրկյանում իմ զգացմունքները փոխվում են բարկության, և այդ պահին իմ հայրապետական օրհնությունից մի փոքր հատված միտքս եկավ: Այն վերաբերում էր իմ ապագա ընտանիքին, որը խորհուրդ էր տալիս ավետարանի մասին սովորեցնել իմ ապագա երեխաներին: Հիշելով այդ հատվածը ես հասկացա, որ Հոգին ինձ հուշում էր, որ այդ խոնարհ կնոջը սովորեցնեմ այնպես, ինչպես կսովորեցնեի իմ երեխային:

Ես սկսեցի նրան ուսուցանել ավելի շատ ժպիտով և սիրալիր մոտեցմամբ: Ես պատկերացրեցի, որ իմ երեխաներն են նստած հյուրասենյակում և նայում են ինձ՝ իրենց հորը, երբ ես ուսուցանում էի Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին: Ապշեցուցիչ էր, երբ տեսա, թե ինչպես փոխվեց նրա դեմքը: Նրա հոնքերը շուտով բարձացան և նրա աչքերը սկսեցին փայլել: Շփոթվածությանը փոխարինեց հետաքրքրվածությունը և զարմանքը: Երբ ես պատմում էի Ջոզեֆ Սմիթին Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հայտնվելու մասին պատմությունը, արցունքները լցվելով նրա աչքերի մեջ հոսեցին դեմքի վրայով: Հոգին լցրել էր սենյակը և իմ շփոթվածությունը փոխվեց ուրախության:

Ես երբեք չեմ մոռանա այդ փորձառության մասին: Այժմ ես անհամբեր սպասում եմ, որ մի օր այդ նույն սկզբունքները ուսուցանեմ իմ երեխաներին և կրկին ապրեմ այդ մեծ ուրախությունը: ■

ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ

«Երիտասարդներ, ես հորդորում եմ ձեզ, պատրաստվեք ծառայելու որպես միսիոներ: Ձեզ պահեք մաքուր, անարատ և արժանի՝ ներկայացնելու Տիրոջը: Պահպանեք ձեր առողջությունը և ուժերը: Ուսումնասիրեք սուրբ գրությունները: Որտեղ հնարավոր է հաճախեք սեմինարիա կամ ինստիտուտ: Ծանոթացեք *Քարոզիր իմ ավետարանը* միսիոներական ձեռնարկին»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, «Մինչ նոր հանդիպում», *Լիահոնա*, նոյ. 2010, 6:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲՐՈՍՅԱՆ ՔՈՒԼԻ

Նախագահ
Բոյդ Կ. Փաքեր
Տասներկու Առաքյալների
Քվորումի Նախագահ

ՄԻՋՆՈՐԴ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ

Թույլ տվեք ձեզ պատմել մի առակ:

Մի մարդ կար, որն ինչ-որ մեծ փափագ ուներ: Թվում էր դա իր կյանքում ամենակարևոր բանն էր: Իր ցանկությունն իրականացնելու համար, նա մեծ պարտք վերցրեց:

Նրան զգուշացրեցին այդքան մեծ պարտքի և, հատկապես, իր պարտատիրոջ մասին: Բայց նրա համար չափազանց կարևոր էր թվում այդ պահին իր փափագած իրն ունենալը: Նա վստահ էր, որ հետագայում կկարողանա վճարել դրա համար:

Նա համաձայնագիր ստորագրեց: Նա պետք է որոշ ժամանակի ընթացքում վճարեր իր պարտքը: Նա շատ չէր անհանգստանում դրա համար, քանի որ ժամկետը շատ հեռու էր թվում: Նա այժմ ուներ իր համար բաղձալի բանը, և դա էր ամենակարևորը:

Պարտատերը միշտ նրա մտքի մի հեռավոր անկյունում էր, և նա երբեմն վճարումներ էր կատարում, չգիտես ինչու մտածելով, որ գումարը վերադարձնելու օրը [ամբողջ գումարը վճարելու օրը] իրականում երբեք չի գալու:

Արդարությո՞ւն, թե՞ ողորմածություն

Սակայն, ինչպես միշտ այդ օրը եկավ և համաձայնագրի ժամկետը լրացավ: Պարտքը լիովին չէր վճարվել: Պարտատերը հայտնվեց և պահանջեց ամբողջ գումարը:

Միայն այդ ժամանակ նա հասկացավ, որ իր պարտատերը իշխանություն ունի ոչ միայն իր ողջ ունեցվածքը վերցնելու, այլև իրեն բանտ նետելու:

«Ես չեմ կարող վճարել քեզ, քանի որ կարողությունս չի ներում»,- խոստովանեց նա:

«Ուրեմն,- ասաց պարտատերը,- կվերցնեմ քո ունեցվածքը և դու կգնաս բանտ: Դու տվել ես քո համաձայնությունը: Դա քո ընտրությունն էր: Դու ստորագրել ես համաձայնագիրը, և այժմ այն պետք է ուժի մեջ մտնի»:

«Կարո՞ղ եք երկարացնել ժամկետը կամ ներել պարտքը,- խնդրեց պարտապանը,- Եկեք ինչ-որ կերպ պայմանավորվենք, որպեսզի կարողանամ ունեցվածքս պահել և բանտ չգնալ: Անշուշտ, դուք հավատում եք ողորմածությանը: Ողորմած չե՞ք լինի»:

Պարտատերը պատասխանեց. «Ողորմածությունը միշտ միակողմանի է աշխատում: Դա կարող է ծառայել միայն քեզ: Եթե ես ողորմածություն ցուցաբերեմ, ես չեմ ստանա իմ հասանելիք գումարը: Ես արդարություն եմ պահանջում: Դու հավատո՞ւմ ես արդարությանը»:

«Ես հավատում էի արդարությանը, երբ համաձայնագիրը ստորագրեցի,- պարտապանն ասաց,- Այն իմ կողմում էր այն ժամանակ, քանի որ մտածում էի, որ այն կպաշտպանի ինձ: Այն ժամանակ ես ողորմածության կարիք չունեի, ոչ էլ կարծում էի, թե երբևէ դրա կարիքը կունենամ:

«Արդարությունը պահանջում է, որ դու վճարես ըստ համաձայնագրի կամ պատիժ

Հիսուս Քրիստոսը՝ մեր Միջնորդը, վճարում է այն գինը, որը մենք ի վիճակի չենք վճարելու, որպեսզի կարողանանք վերադառնալ ապրելու մեր Երկնային Հոր հետ:

Այս թեմայի մասին ավելին իմանալու համար, կարդացեք Ալմա 42, մարգարե Ալմայի արդարադատության, ողորմածության և Քավության բացատրությունը:

ՆԿԱՐԱԳՐՈՒՄԸ ԴԱՍ ԲԱՐԻ

Հավերժական օրենքով, ողորմածությունը չի կարող հասանելի լինել, եթե չլինի մեկը, ով կամենում է և կարող է վերցնել մեր պարտքը և վճարել գինը և սահմանել մեր փրկագնման համար պայմանները:

կրես,- ասաց պարտատերը,- Դա է օրենքը: Դու համաձայնվել ես և այդպես պետք է լինի: Ողորմածությունը չի կարող կողոպտել արդարությանը»:

Այսպիսին էր իրավիճակը՝ մեկը պահանջում էր արդարություն, իսկ մյուսը աղերսում էր ողորմածություն: Չէր կարող դրանցից մեկը մյուսի հաշվին գերիշխել:

«Եթե դու չներես պարտքը, ողորմածություն չի լինի»,- աղերսում էր պարտապանը:

«Եթե ես անեմ դա, արդարություն չի լինի»,- լինում էր պատասխանը:

Կարծես երկու օրենքներն էլ չէին աշխատում: Դրանք երկու հավերժական իդեալներ են, որոնք ասես հակասում են միմյանց: Արդյոք հնարավոր չէ՞, որ և արդարությունը լիովին գործի և՝ ողորմածությունը:

Հնարավոր է: Արդարության օրենքը *կարող* է լիովին բավարարվել և ողորմածությունը *կարող* է լիովին տարածվել, բայց դա ընդգրկում է մեկ ուրիշին ևս:

Նրա Միջնորդը

Պարտապանը ընկեր ուներ: Նա օգնության եկավ: Նա պարտապանին լավ էր ճանաչում: Նրա կարծիքով, անմտություն էր սեփական անձը նման անախորժ վիճակում դնելը: Սակայն, նա ցանկանում էր օգնել, որովհետև սիրում էր նրան: Նա կանգնեց նրանց միջև, պարտատիրոջ դիմաց և այսպիսի առաջարկ արեց. «Ես կվճարեմ պարտքը, եթե դու ազատես պարտապանին իր համաձայնագրից, որպեսզի նա կարողանա պահել իր ունեցվածքը և չընկնի բանտ»:

Երբ պարտատերը մտածում էր այդ առաջարկի մասին, միջնորդն ավելացրեց. «Դու արդարություն ես պահանջում: Քանի որ նա չի կարող վճարել քեզ, ես կվճարեմ: Դու արդար վերաբերմունքի կարժանանաս, և քեզ այլևս ոչինչ պետք չի լինի: Դա արդար չի լինի»:

Պարտատերը համաձայնվեց:

Ապա միջնորդը շրջվեց դեպի պարտապանը: «Եթե ես վճարեմ քո պարտքը, կընդունե՞ս ինձ որպես քո պարտատեր:

«Օ՜, այո,- բացականչեց պարտապանը,- Դու ինձ ազատում ես բանտից՝ ողորմածություն ցուցաբերելով իմ հանդեպ»:

«Ուրեմն, դու պարքդ կվճարես ինձ, և ես կդնեմ ժամկետը,- ասաց բարերարը,- Հեշտ չի լինի, սակայն հնարավոր կլինի: Ես միջոցը կգտնեմ: Դու բանտ չես գնա»:

Այսպիսով, պարտատիրոջը վճարվեց ամբողջ գումարը: Նա արդար վերաբերմունքի արժանացավ: Ոչ մի համաձայնագիր չխախտվեց: Իր հերթին, պարտապանի հանդեպ ողորմածություն ցուցաբերվեց: Երկու օրենքներն էլ կատարվեցին: Միջնորդի շնորհիվ արդարությունը հայցեց իր ողջ բաժինը, և ողորմածությունը լիովին բավարարվեց:

Մեր Միջնորդը

Մեզանից յուրաքանչյուրը ապրում է հոգևոր վարկով՝ պարտքով: Մի օր հաշիվը կփակվի, գումարը կպահանջվի: Որքան էլ դա սովորական համարենք այսօր, երբ օրը գա և մոտենա սեփականության իրավունքից զրկվելու սպառնալիքը, մենք վշտացած կփնտրենք ինչ-որ մեկի, որը կկարողանա մեզ օգնել:

Եվ հավերժական օրենքով, ողորմածությունը չի կարող հասանելի լինել, եթե չլինի մեկը, ով կամենում է և կարող է վերցնել մեր պարտքը և վճարել գինը և սահմանել մեր փրկագնման համար պայմանները:

Եթե չլինի միջնորդ, եթե չունենանք ընկեր, արդարադատությունը իր ողջ ծանրությամբ կընկնի մեզ վրա: Յուրաքանչյուր զանցանքի համար լրիվ վճարումը, լինի չնչին թե մեծ, լիովին կվերցվի:

Սակայն իմացեք՝ ճշմարտությունը, փառավոր ճշմարտությունը հայտարարում է, որ կա նման Միջնորդ: «Որովհետև մեկ Աստված կա և մեկ միջնորդ Աստծո և մարդկանց մեջ Քրիստոս Հիսուս մարդը» (Ա Տիմոթեոս Բ.5): Նրա շնորհիվ ողորմածությունը կարող էր լիովին տարածվել մեզանից յուրաքանչյուրի վրա՝ առանց վնասելու արդարադատության հավերժական օրենքը:

Ողորմածությունը ավտոմատ ձևով հասանելի չէ: Դա հնարավոր է Նրա հետ ուխտի միջոցով: Դա կլինի նրա պայմաններով, Նրա առտաձեռն պայմաններով, որը որպես բացարձակ անհրաժեշտություն ներառում է ընկղմամբ մկրտությունը մեղքերի թողության համար:

Ողջ մարդկությունը կարող է պաշտպանված լինել արդարադատության օրենքով, և միևնույն ժամանակ մեզանից յուրաքանչյուրին անհատապես կարող է հասանելի լինել ողորմածության քավող և բժկող օրհնությունը: ■

Հատված «Միջնորդը» հոդվածից, Ensign, *May 1977, 54–56:*

«Ես ազնիվ կլինեմ Երկնային Հոր, մյուսների և ինքս ինձ հետ»:

Իմ Ավետարանի չափանիշները

Նիյայի ընտրությունը

Մարսել Նիյունջի

Հիմնված է իրական պատմության վրա

Նիյան խաղում էր իրենց տան մոտ, երբ մորաքույրը նրան կանչեց տուն: «Նիյա, կգնա՞ս մթերային խանութ և մի քանի գազար գնես ճաշի համար»,- խնդրեց մորաքույրը:

«Այո»: Նիյան ասաց ուրախ: Նա սիրում էր խանութ գնալ և սիրում էր օգնել իր մորաքրոջը:

Նիյան վերցրեց գումարը, որ մորաքույրը տվեց նրան և գնաց մոտակա խանութը:

«Ես պետք է գազար գնեմ ճաշի համար»,- ասաց Նիան խանութի վաճառողին:

Վաճառողը գազարները դրեց Նիյայի տոպրակի մեջ և ասաց նրան, թե ինչ արժե այն: Նիյան տվեց գումարը:

«Ահա մանրը»,- ասաց վաճառողը նրան տալով գումարի մանրը:

Նիյան շնորհակալություն ասաց և քայլեց դեպի տուն: Քայլելիս նա նայեց գումարին, որը վաճառողն էր իրեն տվել: «Նա ինձ չափից շատ է տվել, ես կարող եմ դա ինձ պահել»,- մտածեց նա:

Սակայն այդ պահին Նիյան կանգ առավ: «Երկնային Հայրը ուրախ չի լինի, եթե ես պահեմ այս գումարը,- մտածեց նա,- ես պետք է ազնիվ լինեմ իմ խոսքով և գործով»:

Նիյան վերադարձավ խանութ: «Դուք ինձ շատ փող եք վերադարձրել»,- ասաց նա վաճառողին՝ նրան տալով ավելնորդ գումարը:

Խանութի վաճառողը վերցրեց գումարը: «Դու լավ աղջիկ ես,- ասաց նա, ապա մի քանի խնձոր դրեց տոպրակի մեջ և տվեց Նիյային,- շնորհակալություն ազնիվ լինելու համար: Խնդրում եմ վերցրու այս խնձորները և անուշ արեք ձեր ընտանիքով»:

Տուն վերադառնալիս Նիյան ներքուստ ջերմություն և երջանկություն զգաց: Նա գիտեր, որ Երկնային Հայրը գոհ էր, որ ինքն ընտրեց ազնիվ լինել: ■

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ՝ ԼՈՒՍԻ ՖԱՐՊԵՏԻՆ





ՇԱԲԱԹ

Վեց օրից զատկի տոնն էր մոտենում: Շատ մարդիկ գալիս էին Երուսաղեմ, որպեսզի այդ օրը զոհեր մատուցեին տաճարում: Հիսուսը քայլում էր Երուսաղեմի մոտ գտնվող Բեթանիա գյուղում: Նա Իր ընկերների՝ Ղազարոսի, Մարիամի և Մարթայի հետ պետք է այնտեղ հինգ օր գիշերեր: Մարիամը յուղով օծեց Նրա ոտքերը:

Տես Հովհաննես ԺԲ.1–3:



ԿԻՐԱԿԻ

Հիսուսը Բեթանիայից գնաց Երուսաղեմ: Նա քաղաք էր գնում ավանակի վրա, ինչպես Հին Կտակարանում է գրված: Մարդիկ համարում էին Նրան իրենց թագավորը՝ բացականչելով. «Ովսաննա», և արմավի ճյուղեր դնելով ավանակի ոտքերի առաջ, որպեսզի փոշին չբարձրանար Փրկչի վրա: Հիսուսն այցելեց տաճար և ապա վերադարձավ Բեթանիա:

Տես Զաքարիա Թ.9; Մատթեոս ԻԱ.1–11; Մարկոս ԺԱ.1–11:



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Հիսուսը տեսավ մարդիկ առևտուր են անում տաճարում: Նա նրանց դուրս քշեց այնտեղից, քանի որ ցանկանում էր, որ տաճարը լիներ «աղոթքի տուն»: Այնուհետև Նա բժշկեց կաղերին և կույրերին: Նախանձ քահանաները բարկացան Նրա վրա:

Տես Մատթեոս ԻԱ.12–17; Մարկոս ԺԱ.15–19:



ԵՐԵՔՇԱԲԹԻ

Հիսուսը ուսուցանեց մարդկանց տաճարում և մոտակա Ձիթենիաց սարի վրա: Քահանաները Հիսուսին սպանելու դավադրություն էին կազմակերպել: Նրա աշակերտներից մեկը՝ Հուդա Իսկարիովտացին, 30 արծաթի դիմաց համաձայնեց Հիսուսին հանձնել քահանաներին:

Տես Մատթեոս ԻԵ.31–46; ԻՁ.14–16:

ԶԱՏԿԻ ՇԱԲԱԹ

Դուք կարող եք պատրաստվել Զատկին սովորելով այն մասին, թե ինչ տեղի ունեցավ Հիսուս Քրիստոսի Խաչելության և Հարության նախորդ շաբաթը: Մկսելով Զատկից ութ օր առաջ, կարդացեք այդ շաբաթվա յուրաքանչյուր օրվա իրադարձությունը և համապատասխան սուրբ գրությունների հատվածը:

5

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Սուրբ գրությունները չեն ասում ինչ էր Հիսուսն անում այդ օրը: Նա հնարավոր է այդ օրն անցկացրել է Իր աշակերտների հետ: Դուք կարող եք կարդալ տաս կույսերի առակը, պատմություն, որը Հիսուսն ուսուցանել է Իր աշակերտներին՝ օգնելու նրանց պատրաստվել Իր Երկրորդ Գալստին:

Տես Մատթեոս ԻԵ.1–13:

6

ՀԻՆԳՇԱԲԹԻ

Հիսուսի աշակերտները պատրաստվում են Զատկի ճաշին: Ճաշի ժամանակ Հիսուսն ասում է աշակերտներին, որ նրանցից մեկը դավաճանելու է Իրեն: Այնուհետև, որպեսզի հիշեն Իրեն, Նա առաջին անգամ տալիս է հաղորդությունը: Հիսուսը գնում է Գեթսեմանի այգի տառապելու մեր մեղքերի համար և աղոթելու Աստծուն: Մարդիկ սրերով գալիս են ձերբակալելու Նրան: Աշակերտները երկյուղած փախուստի են դիմում:

Տես Մատթեոս ԻԶ.17–29, 36–56:

7

ՈՒՐԲԱԹ

Հիսուսին տանում են Կայիափա քահանայապետի մոտ: Հիսուսի աշակերտ Պետրոսը ուրանում է Նրան: Հիսուսին հարցաքննում են կառավարիչը՝ Պիղատոսը, և Հերովդեսը: Նրան դատապարտում են մահվան՝ խաչ բարձրացնելով: Հիսուսը խաչվեց: Հովսեփ անունով մի հարուստ մարդ Հիսուսին դրեց իր գերեզմանի մեջ: Հիսուսի մայրը՝ Մարիամը, և Մարիամ Մագդաղենացին այցելեցին գերեզման:

Տես Մատթեոս ԻԶ.57–72; ԻԷ.1–2, 27–37; Ղուկաս ԻԳ.44–46, 50–56:

8

ՇԱԲԱԹ

Հիսուսի մարմինը դրվեց գերեզմանում: Մի մեծ քար դրվեց դռան առաջ: Չար քահանաները խնդրեցին Պիղատոսին պահակներ նշանակի գերեզմանի մոտ, որպեսզի ոչ ոք չկարողանար ներս մտնել:

Տես Մատթեոս ԻԷ.57–66:

ԶԱՏԿԻ ԿԻՐԱԿԻ

Հիսուսը հարություն առավ: Նա բարձրացավ գերեզմանից: Հրեշտակը իջավ երկնքից և մի կողմ շրջեց քարը:

Հիսուսն ասաց Իր աշակերտներին, որ ուսուցանեն և մկրտեն մյուսներին և խոստացավ, որ միշտ իրենց հետ կլինի:

Տես Մատթեոս ԻԸ:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՄԵԹՅՈՒ ՈՒԵՅԵՐԻ, ՎԵՐԵԼԿՈՒՄ ՀԱՍԿԱ ԵՐԵԿՈՅԱՆ ԳԼԽՈՎ Թ ԳԼԽՈՎԻ ԹԻՍՈՒՆ: ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՏՅԱԼ ԵՐԵՎՈՒՅԹ, ՋԵՑՍՍ ԹԻՍՈՒՆ: ՀԵՂԻՆԱԿ ԵՐԵՎՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ Հ. ԳԱՐԵՂԻՆ Բ ԶԱՐԵՀԱՆԻ, ՀԱՅՐԱՊԵՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱԼՍՏԻ ՀԱՄԱՐ: ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆԵԼ ԶԱՅՆ ԵՐԿՈՒՄԱԲԱՐՁԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՅՍ ՆԱՄՈՒՑ, ԷՐԻՆ ՆԱՄՈՒՑ, ԳՈՒՆԵՐ ՈՒԵՅԻ, ՏՈՒՆԱՐԻՆԵԼԷ ԵՎԵՐԵՑՈՒՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖՐԻԴՐԻԽՍՈՐԾԱԾ ԷՆԱՆԻԱՅԻ ՖՐԻԴՐԻԽ ԲԼՈՒ, ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԷՆԱՆԻԱՅԻ ՄՈՒՏՔԻ ՀԱՄԱՐ: ԿԱՌԼ ԼԵՆԴՐԻԽ ԲԼՈՒ, ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԷՆԱՆԻԱՅԻ ՖՐԻԴՐԻԽՍՈՐԾԱԾ ԷՆԱՆԻԱՅԻ ՄՈՒՏՔԻ ՀԱՄԱՐ: ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳՈՒՄԸ, ԿԱՌԼ ԼԵՆԴՐԻԽ ԲԼՈՒ ® ԻՐ; ԿՈՒՅՑԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՀԱՅՐԻ ԱՆԴՐԵՈՒՆ ® ԻՐ; ԿՈՒՅՑԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՀԱՅՐԻ ԱՆԴՐԵՈՒՆ ® ԻՐ; ՔՐԻՍՏՈՍԻ ԳԵԹՍԵՄԱՆԻ ԱՅԳԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՅՍ ՆԱՄՈՒՑ, ՏՈՒՆԱՐԻՆԵԼԷ ԵՎԵՐԵՑՈՒՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ, ՇԵՐՄԱՍԱՅՆԵԼ; ՆԵՐԹԵՎՈՒՄ՝ ԱՎԱՄՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՍԿ ԴԵԼ ԳԱՐՍՈՆԻՆ

Ողջ աշխարհից երեխաների արվեստի գործերը

Երեխաների միջազգային ցուցահանդեսից նմուշներ «Ավետարանը օրհնում է իմ կյանքը» թեմայով:

Դիտեք ավելի շատ նկարներ ցուցահանդեսից ապագա համարների մեջ Մեր Էջը բաժնում: Տես այլ նմուշներ www.liahona.lds.org կայքում:

Անդրեզա Ա., 10 տարեկան, Բրազիլիա

Դաշա Կ., 11 տարեկան, Ուկրաինա

Զենիֆ Ֆ., 9 տարեկան, Մեքսիկա

Դանիել Ս., 5 տարեկան, Ֆրանսիա

Չունգ-չի, 6 տարեկան, Տայվան

Բեթ Բ., 5 տարեկան, Կանադա

Քերեն Լ., 6 տարեկան, Բոլիվիա

Նատալի Ս., 9 տարեկան, Գվատեմալա

Կառոլինա Ա., 7 տարեկան, Պերու

Սառա Ռ., 9 տարեկան, Արգենտինա

Լեոնարդո Տ., 8 տարեկան, Չիլի

Ֆատիմա Բ., 5 տարեկան, Պերու

Լիի Վ., 9 տարեկան, Լեհաստան

Էդդիսոն Օ., 10 տարեկան, Վիետնամ



Ալինա Ս., 8 տարեկան, Ուկրաինա

Գուեն Ռ., 12 տարեկան, Ֆիլիպիններ

Վանեսսա Գ., 11 տարեկան, Մեքսիկա



Լիի Ջ., 11 տարեկան, Թաիթի

Երդնեջարգալին Օ., 8 տարեկան, Մոնղոլիա

Ամանդա Գ., 12 տարեկան, Էկվադոր

Մարտինա Ֆ., 11 տարեկան, Արգենտինա

Ադրիանա Բ., 10 տարեկան, Էկվադոր

Խոսե Վ., 5 տարեկան, Պերու

Ինչպե՞ս կարող եմ **ես պաշտպանվել** աշխարհի վատ բաներից

Հատված «Ինչպես լավ ապրել, երբ չարը շատանում է», Լիահոնա, May 2004, 100–102:

Հատուկ վկա



Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը որոշ մտքերով կիսվում է այս թեմայի շուրջ:

ԱՎԱՐՅԱՐՈՒՆԸ ԲՈՒՅՍԸ ԲԻՇԻ

Փնտրեք և ուշադրություն դարձրեք այն անհատական առաջնորդությանը, որը ձեզ հասանելի է Սուրբ Հոգու միջոցով:

Երկնային Հայրը պատրաստել է սուրբ գրությունները և աստվածային առաջնորդություն է ապահովում, որպեսզի աջակցի մեզ: Այդ օգնությունը կապահովի, որ դուք խաղաղ ու երջանիկ ապրեք, երբ չարը շատանում է:

Չնայած հիմա կյանքը կարող է դժվար թվալ, ամուր բռնեք ճշմարտության երկաթե ձողից: Դուք ավելի մեծ առաջընթաց եք ապրում, քան գիտակցում եք:

Եթե շարունակեք ձեր միտքն ու սիրտը կենտրոնացնել Տիրոջ վրա, Նա ձեզ կօգնի հարուստ ու լիարժեք կյանքով ապրել՝ անկախ նրանից, թե աշխարհում ինչ է կատարվում ձեր շուրջը:

Դուք կարող եք ապրել առաքինի, արդյունավետ, արդար կյանքով, հետևելով մեր Երկնային Հոր ստեղծած պաշտպանության ծրագրին՝ Նրա երջանկության ծրագրին:

Դուք կարող եք օգտագործել այս դասը և վարժությունը՝ ավելին սովորելով Երեխաների Խմբի այս ամսվա թեմայի մասին:

Հիսուս Քրիստոսն

Իմ Փրկիչն ու Քավիչն է

Անա Մարիա Քոբորն և Քրիստինա Ֆրանկո

«Մենք հավատում ենք, որ Քրիստոսի Քավության շնորհիվ ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով Ավետարանի օրենքներին և արարողություններին» (Հավատո Հանգանակ 1.3):

Ի՞նչ կուզենայիք տալ ինչ-որ մեկին, ում շատ-շատ եք սիրում: Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը այնքան շատ է սիրում մեզ, որ Իր կյանքը տվեց մեզ համար:

Երկնային Հայրը գիտեր, որ եթե մենք մեղանչենք և սխալներ գործենք, չենք կարող կրկին Իր հետ ապրել: Եվ Իր Որդին՝ Հիսուս Քրիստոսը, առաջարկեց լինել մեր Փրկիչը: Երկնային Հայրը ընտրեց Նրան, որ փրկի մեզ, որովհետև միայն Նա կարող էր անմեղ կյանքով ապրել:

Հիսուսը տառապեց և մահացավ, որպեսզի մեզ փրկի մահից և մեր մեղքերից: Այս սիրո արարքը կոչվում է Քավություն: Քավության շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել մեր մեղքերից, ներվել, դառնալ Հիսուսի պես մաքուր և անաղարտ:

Հիսուսը խաչվեց և մահացավ, սակայն երեք օր հետո Նա հարություն առավ: Նա կրկին ապրեց: Քանի որ Նա հարություն առավ, մենք ևս հարություն կառնենք: Սա նշանակում է, որ մեր մարմինները և հոգիները կվերամիավորվեն հավետ:

Իսկապես, Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն ու Քավիչն է: Նա մեր բոլորի համար կատարյալ օրինակ է: Նա սովորեցրեց մեզ բարյացակամորեն վերաբերվել միմյանց: Նա սովորեցրեց մեզ ծառայել միմյանց: Նա սովորեցրեց մեզ ավելի լավը դառնալ: Մենք չենք կարող Նրա պես կատարյալ կյանքով ապրել, սակայն կարող ենք վերադառնալ ապրելու Հիսուսի և Երկնային Հոր հետ՝ հնազանդվելով պատվիրաններին և մեր ուժերի չափով լավագույնս գործելով: Մենք պետք է ամեն օր հետևենք Հիսուս Քրիստոսին: ■

Վարժություն

Կետերը միացնելով ավարտեք «Մարիամը գերեզմանի մոտ» նկարը: Այնուհետև գունավորեք այն: Նայելով նկարին կարող եք հիշել, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն ու Քավիչն է:

ՀԱՅԵՐՆ. ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՊՈՒԼ ՍԱՆԻ © 1991 ԻՐԻ; ԱՋՈՒՍ. ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ԲԵԹ Ս. ԿՈԹԵԿԵՐԻ


79
78
77
31
32
33
76
75
30
29
28
27
74
73
34
26
72
71
1
2
3
35
70
4
25
36
69
5
6
68
7
37
67
8
66
65
9
38
10
64
11
63
12
62
13
61
60
24
23
22
14
39
41
40
59
58
57
21
56
55
42
54
15
53
52
51
16
49
50
20
17
48
44
47
18
19
43
45
46

Ուրախ՝ տանը

Չադ Ե. Ֆարես
Եկեղեցու ամսագրեր

Բունթան և Նեթը քույր ու եղբայր են, և ապրում են Սիեմ Ռիփում, Կամբոջիա:

Դառնալով ութ տարեկան Բունթան որոշեց մկրտվել: Երբ Նեթը դառնա ութ տարեկան, նա ևս կմկրտվի: «Ես ուզում եմ ստանալ Սուրբ Հոգին»,- ասում է նա:

Կարևոր է, որ Բունթան և Նեթը ծառայեն մյուսներին: Երբ մեծանա, Բունթան ցանկանում է լինել միսիոներ: Նեթը անհամբեր սպասում է, երբ կարող է լինել «տատիկ միսիոներ»՝ տարեց միսիոներ: ■

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՉԱԴ Ե. ՖԱՐԵՍԻ

Բունթան և Նեթը շատ ժամանակ են անցկացնում միասին: Նրանք երկուսն էլ փորձում են լավ վերաբերվել միմյանց և իրենց ընտանիքի անդամներին:

Մարդիկ ողջ աշխարհից գալիս են իրենց քաղաք այցելելով հնագույն կառույցները, սակայն **Բունթան և Նեթը** շատ երջանիկ են, երբ տունն են և իրենց ընտանիքի հետ են ժամանակն անցկացնում:

Բունթան և Նեթը բակում հատուկ սովորելու տարածք ունեն, որտեղ նրանք նստում են և կարդում սուրբ գրությունները, կատարում են իրենց տնային աշխատանքը և կարդում են *Լիահոնան:* Բունթան և Նեթը սիրում են կարդալ իրենց սուրբ գրությունները: Ամեն օր նրանք փորձում են կարդալ սուրբ գրությունները: Նեթը սիրում է կարդալ Լեքիի երազի մասին, իսկ Բունթան սիրում է կարդալ Նեփիի մասին:

Նեթը սիրում է խաղալ քարե գնդիկներով: **Բունթան** սիրում է ֆուտբոլ խաղալ ցանկացած գնդակով:

Լրիվ զգեստավորված

Կաարե Ռեվիլ
Հիմնված է իրական պատմության վրա

«Դուք ձեր Եհովա Աստուծո որդիքն եք» (Երկրորդ Օրինաց ԺԴ.1)։



ԱՎԱՐԱՔԱՐԴՈՒՄՆԵՐԸ ԱՔՈԹ ՓԵՔԻՆ

ՄԵՆՔ ԲՈԼՈՐՄ ԱՍՏԾՈ ԶԱՎԱԿՆԵՐՆ ԵՆՔ

Կարևոր չէ, թե որտեղ ենք մենք ապրում կամ ինչ տեսք ունենք, մենք բոլորս Աստծո զավակներն ենք: Նայեք երեխաներին վերևի շրջանակների մեջ և տեսեք, թե արդյոք կարող եք գտնել նրանց քարտեզի վրա: Շրջանակի մեջ առեք ձեր գտած երեխաներին:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Խոսեք ձեր երեխայի ֆիզիկական առանձնահատկությունների կամ անհատական գծերի մասին: Ի՞նչն է նրան յուրահատուկ դարձնում: Բացատրեք, որ Երկնային Հայրը մեզ բոլորիս ստեղծել է տարբեր, սակայն մենք բոլորս Նրա զավակներն ենք: Օգնեք ձեր երեխային գտնի քարտեզի վրա պատկերված յուրաքանչյուր երեխայի յուրահատուկ գծերը:



Ձեռնարկի ուսուցումը շեշտադրում է փրկության աշխատանքը

Ադամ Ս. Օլսեն
Եկեղեցու ամսագրեր

2011թ. փետրվարին ղեկավարների համաշխարհային ուսուցմանը Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները մասնակիցներին հրահանգներ տվեցին նոր ձեռնարկներն ավելի արդյունավետ օգտագործելու վերաբերյալ: Ժողովը 2010թ. նոյեմբերի ղեկավարների համաշխարհային ուսուցման տրամաբանական շարունակությունն էր, որի ժամանակ ներկայացվեցին ձեռնարկները:

Խոսնակները շեշտադրումը կատարեցին նրա վրա, թե ինչպես կարելի է ավելի ոգեշնչված ճանապարհով օգտագործել ձեռնարկները, շեշտեցին նոր ձեռնարկների վարդապետական հիմունքները հասկանալու կարևորությունը, թե ինչպես կարելի է կիրառել Եկեղեցու ծրագրերին հարմարվելու սկզբունքները, ինչպես ձեռնարկների փոփոխությունները կարող են կիրառվել փրկության աշխատանքը կատարելու համար, և թե որն է կանանց դերը խորհուրդներում:

Հեռարձակմանը մասնակցում էին Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգը; Տասներկու Առաքյալների Քվորումից Երեցներ Ռասսել Մ. Նելսոնը, Դալլին Հ. Օուքսը, Ռիչարդ Գ. Սքոթը, Ռոբերտ Դ. Հեյլսը, Ջեֆրի Ռ. Հոլլանդը, Դեյվիդ Ա. Բեդնարը, Քվենտին Լ. Քուկը, Դ. Թոդ Քրիստոֆերսոնը և Նիլ Լ. Անդերսենը; Յոթանասունից՝ Երեցներ Քրեյգ Ս. Քրիչենսենը, Բրյուս Դ. Փորտերը և Վ. Քրեյգ Ցվիկը և օժանդակների գերագույն նախագահները:

Ձեռնարկների ավելի ոգեշնչված կիրառումը

Անվանելով ժողովը «ձեռնարկներն ավելի արդյունավետ օգտագործելու եղանակները բացահայտելու երկրորդ հնարավորություն», Նախագահ Այրինգը խրախուսեց ղեկավարներին մեծացնել հայտնություն ստանալու իրենց ունակությունը:

«Միայն Հոգով դուք կիմանաք ինչպես կարող եք կիրառել ձեռնարկում կարդացածը», - ասաց նա: «. . .Ձեզ համար կարող է ոչ կիրառական թվալ ձեր առօրյա ծառայության մեջ ձեզ համար անհրաժեշտ հայտնությունն ակնկալելը կամ դրա հույսն ունենալը: Դա չի գա առանց հավատքի և տքնաջան աշխատանքի, սակայն դա հնարավոր է»:

Նախագահ Այրինգը խոստացավ, որ եթե ղեկավարները աշխատեն և աղոթեն՝ «հասկանալու և հետևելու համար իրենց տրված կյանքի խոսքերին», Տերը կօգնի նրանց մատուցել այնպիսի ծառայություն և դրսևորել այնպիսի ղեկավարում, որոնք իրենց զորությունից վեր են:

«Ձեռնարկը ձեզ համար գանձ կդառնա, երբ դուք օգտագործեք այն օգնելով ուրիշներին ընտրել հավերժական կյանքի ուղին: Դա է նպատակը»:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Ձեռնարկների վարդապետական հիմունքները

«Ձեռնարկը վարդապետական է, - ասաց Երեց Օուքսը: - Այն ավելի կարճ է, քան նախորդ ձեռնարկը, որովհետև շատ թեմաների համար այն չի տալիս կանոններ կամ ուղղություններ: Դրա փոխարեն տրվում են սկզբունքներ, որոնք կարող են կիրառվել ոգեշնչված ղեկավարների կողմից . . . ըստ տեղական պայմանների»:

Երեց Բեդնարը և Երեց Քրիստոֆերսոնը նախազգուշացրեցին ղեկավարներին, որ վերջիններս չշրջանցեն *Ձեռնարկ 2-ի* առաջին գլուխները՝ անմիջապես անցնելով հետագա գլուխներում շարադրված քաղաքականություններին: Սկզբի գլուխները տալիս են վարդապետական այն հիմքը, որն անհրաժեշտ է հաջորդող սկզբունքները և քաղաքականությունները հասկանալու և կիրառելու համար:

Երեց Բեդնարն ասաց, որ «սկզբունքի վրա հիմնված, կիրառման ավելի քիչ մանրամասներով ձեռնարկները մեր առաջ հոգևոր առումով ավելի պահանջկոտ և դժվար խնդիր են դնում»:

Հարմարեցման սկզբունքները

«Առաջին Նախագահության և Տասներկուսի կողմից հաստատված վարդապետության, ուխտերի

և քաղաքականությունների հարցում մենք չեն շեղվում ձեռնարկից, - ասաց Երեց Նելսոնը,- Հարմարեցումը թույլ է տրվում որոշ միջոցառումների դեպքում՝ տեղական պայմաններին համապատասխան գործելու նպատակով»:

Ըստ Երեց Փորտերի, գլուխ 17-ը՝ «Հետևողականություն և Հարմարեցում», ներառվել էր օգնելու համար տեղական ղեկավարներին հետևել Հոգուն և որոշել, թե երբ է հարկավոր հարմարեցնել որոշ ծրագրեր: Գլուխը բացատրում է այն, ինչ չի կարող փոփոխվել, և տալիս է հինգ պայման, որոնց պարագայում կարելի է հարմարեցում կատարել. Ընտանեկան հանգամանքներ, սահմանափակ տրանսպորտային և հաղորդակցման միջոցներ, փոքր քվորումներ կամ դասարաններ, ղեկավարների ոչ բավարար քանակ և անվտանգության խնդիրներ:

«Ճիշտ հարմարեցումը չի թուլացնում Եկեղեցին, այլ ամրացնում է», - ասաց Երեց Փորտերը Յոթանասունական Երեց Վ. Քրեյգ Ցվիկի ելույթի ժամանակ: Ոգեշնչված հարմարեցումներ կատարելիս ղեկավարները չպետք է այնպիսի զգացում ունենան, կարծես կատարյալից շեղվում են: «Եկեղեցու ցանկացած միավորի մատչելի են վարդապետությունները, ծեսերը, քահանայության զորությունը և Հոգու պարգևները, որոնք անհրաժեշտ են Աստծո զավակների փրկության և վեհացման համար», - գրել է Երեց Փորտերը:

Փրկության աշխատանքը

Ձեռնարկ 2-ում կատարված փոփոխությունները միտված են առաջ տանել փրկության աշխատանքը: Նախագահ Այրինգն ասել է. «Ձեռնարկը ձեզ համար գանձ կդառնա, երբ դուք օգտագործեք այն օգնելով ուրիշներին ընտրել հավերժական կյանքի ուղին: Դա է նպատակը»:

Գլուխ 5-ը «Փրկության աշխատանքը ծխում և ցցում» վերնագրի ներքո միացնում է իրար մի շարք թեմաներ, որոնք նախկինում առանձին էին մատուցվում, ներառյալ՝ անդամի միսիոներական աշխատանքը, նորադարձին Եկեղեցում պահելը, ակտիվացումը, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքները և ավետարանի ուսուցումը:

«Պողոսն ասել է, որ ժամանակների լրության այս տնտեսության մեջ, բոլոր բաները կհավաքվեն միասին և մեկ կլինեն Քրիստոսում», - ասաց Երեց Բեդնարը (տես Եփեսացիս Ա.10): «Կա միայն մեկ աշխատանք»:

Օրինակ, այն, ինչ նախկինում համարվում էր Եկեղեցու առանձին առաքելություններ,

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՔՐԵՅԳ ՅԱՅՄՈՆԴԻ, © ԻԻ

իրականում «նույն աշխատանքն է տարբեր բնագավառներում», ասաց նա: Միսիոներական աշխատանքը ավետարանը քարոզելն է և մյուսներին հրավիրելը ստանալ սուրբ ծեսերը և ուխտեր կապել: Սրբերին կատարելագործելը, ներառյալ՝ Եկեղեցում պահելը, ակտիվացումը և ուսուցանումը, աշխատանքը է, որը հրավիրում է մարդկանց հարգել ծեսերը և ուխտերը: Մահացածների փրկագնումը ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքի միջոցով հնարավորություն է տալիս մահացածներին ստանալ ծեսերը և կապել ուխտերը:

Երեց Հոլլանդն ասաց, որ ընդհանուր առմամբ ձեռնարկի փոփոխությունները օգնում են հասկանալ, որ քվորումների և օժանդակների ղեկավարները ծխի խորհրդի կազմում չեն պարզապես այն պատճառով, որպեսզի մտածեն իրենց քվորումների և օժանդակների անդամների մասին, սակայն նրանք նույնպես կիսում են բոլոր անդամների հոգևոր բարեկեցության ընդհանուր պատասխանատվությունը:

Երեց Քուկը օգնեց պարզաբանել, թե ինչպես են *Ձեռնարկ 2*-ում կատարված քաղաքականության որոշ փոփոխություններ նպաստում փրկության աշխատանքին:

Նա շեշտեց եպիսկոպոսների և ծխերի խորհուրդների կողմից բարօրության կարիքները բավարարելու կարևորությունը այժմ, երբ այլևս չեն գործում բարօրության ժողովներ: Նա բացատրեց Մելքիսեդեկյան Քահանայության ղեկավարների աճող դերը քվորումի անդամների հետ խորհրդակցելու գործում: Նա այնուհետև պարզաբանեց այն փոփոխությունները, որոնք թույլ են տալիս այն հայրերին, որոնք տաճարի լիարժեք արժանավորություն չունեն, որոշ դեպքերում մասնակցել ընտանիքի անդամների

Փրկության աշխատանքում քահանայության ղեկավարները պետք է անհատական կարիք համարեն հաջորդ ծեսերը և աջակցեն դրանց նախապատրաստվելու գործում:

ՕԺԱՆԴԱԿՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ Է ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ԳՐԱԴԱՐԱՆԸ

2011թ. ղեկավարների համաշխարհային ուսուցման ժամանակ Եկեղեցու օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահները մասնակցեցին մի շարք խմբակային քննարկումների, որոնց ժամանակ օգտագործվեցին ինտերնետային նոր ուսուցման օրինակները:

Ղեկավարների ուսուցման գրադարանը միավորում է աշխարհով մեկ ծառայող ղեկավարների իրական կյանքի փորձառությունները, որոնք Ձեռնարկ 2-ում տրված սկզբունքների համար օրինակներ են հանդիսանում: Բրազիլիայում, Անգլիայում, Գվատեմալայում և Կորեայում կատարված նկարահանումները ներկայումս թարգմանվում են և մատչելի կլինեն ինտերնետում 2011թ. ընթացքում:

Օգտագործելով այդ վիդեոները, օժանդակների գերագույն նախագահները, Տասներկու Առաքյալների Քվորումից՝ Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի և Երեց Նիլ Լ. Անդերսենի և Յոթանասունական՝ Երեց Քրեյգ Ս. Քրիսչենսենի ղեկավարությամբ քննարկեցին Ձեռնարկ 2-ի երեք կարևոր սկզբունքները

1. Պատրաստվեք հոգեպես

«Զարմանալի է, թե ինչպես է Տերը փնտրում և գտնում մեզ օրինելու ուղիներ», - բացատրեց Ռոզմարի Վիքսոմը՝ Երեխաների Միության գերագույն նախագահը, դիտելուց հետո այն դրվագը, որտեղ ներկայացվում էր, թե ինչպես Հարավային Կորերայում Սփոփող Միության մի ղեկավար ջանասիրաբար խնդրեց և ստացավ ներշնչում ժողովը պանավորելու վերաբերյալ:

Երեց Անդերսենը Սփոփող Միության գերագույն նախագահ Ջուլի Բ. Բեքի և Քույր Վիքսոմի հետ քննարկման ժամանակ ասաց. «Դա հոգևոր աշխատանք է, մենք չենք կարող դա անել առանց Տիրոջ օգնության»: Քննարկմանը մասնակցող անդամները խոսեցին այն մասին, թե ինչպես կարող է հոգևոր նախապատրաստությունը թույլ տալ ղեկավարներին կենտրոնանալ անհատների վրա, միջոցառումները, դասերը և հանձնարարությունները հարմարեցնելով նրանց կարիքներին: «Հայտնությունը ամենուրեք մեր մեջ է», - վկայեց Երեց Անդերսենը:

2. Մասնակցեք խորհուրդներին

Մի իրական պատմություն այն մասին, թե ինչպես Գվատեմալայում խորհրդի անդամները միասին աշխատելով կարողացան մի ընտանիքի վերադառնալ Եկեղեցու լիարժեք ակտիվության, թույլ տվեց Երեց Քրիսչենսենին խորհուրդներում միասին աշխատելու մասին քննարկում ծավալել բոլոր հինգ օժանդակների նախագահների՝ Քույր Բեքի, Քույր Վիքսոմի, Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահ՝ Ռասսել Տ. Օսգութորփի, Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ՝ Էլեյն Ս. Դալտոնի և Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահ՝ Դեյվիդ Լ. Բեքի հետ:

Քննարկվեց այն, թե ինչպես կարող են խորհրդի անդամների միասնական ջանքերը օգնել ծխի անդամներին առաջընթաց ապրել, ինչպես կարող են խորհրդի ակտիվ անդամները թեթևացնել եպիսկոպոսի բեռը և ինչպես ղեկավարներըև անդամները պետք է լսեն, կիսվեն և փնտրեն Տիրոջ կամքը՝ ծխի անդամների վերաբերյալ:

3. Ծառայել ուրիշներին

Երրորդ վիդեոն կենտրոնացած է Անգլիայում մի երիտասարդի շուրջ, որը ձգտում է լիարժեք ակտիվ լինել Եկեղեցում: Քննարկումը, որը վարում էր Երեց Հեյլսը և որին մասնակցում էին Եղբայր Օսգութորփը, Եղբայր Բեքը և Քույր Դալտոնը, նշեց Ծնողների հետ, Եկեղեցու խորհուրդներում և երիտասարդների հետ ղեկավարների աշխատանքի կարևորության մասին:

«Եթե դուք անեք ճիշտ այնպես, ինչպես այսօր տեսաք, - եզրակացրեց Երեց Հեյլսը, - խոսելով վիդեո օրինակների մասին և քննարկելով դրանք, տանելով նրանց դեպի Տերը, . . . դուք առաջնորդություն և ուղղություն կստանաք, որոնք թույլ կտան ձեզ օգնել և ամրացնել, նաև հասնել այն ամենին, ինչ ձեզ հարկավոր է ձեզ տրված կոչումներում»: ■

ծեսերին և օրհնություններին:

«Մենք ծրագրեր իրականացնելու կամ կազմակերպություն ղեկավարելու գործով չենք զբաղված», - ասաց Երեց Բեդնարը: «Դա անհրաժեշտ է, բայց բավարար չէ: Սա փրկության աշխատանք է: Եվ երբ մենք սկսում ենք մտածել ծեսերի և ուխտերի մասին, քահանայության ղեկավարները իրավացիորեն կարող են հարցնել, թե որն է հաջորդ ծեսը, որն անհրաժեշտ է այս անձի կամ ընտանիքի կյանքում և ինչպես մենք կարող ենք օգնել նախապատրաստության այդ գործում»:

Կանայք խորհուրդներում

Երեց Սքոթը մտահոգություն հայտնեց, որ որոշ վայրերում ղեկավարները խորհրդակցելիս չեն ներգրավում կանանց: «Երբ [կանայք] խրախուսվում են ազատորեն մասնակցել ծխի խորհրդի ժողովներին, նրանց մտքերը միշտ

ԻՆՏԵՐՆԵՏՈՒՄ

Գտեք ղեկավարների համաշխարհային ուսուցման հեռարձակումների աուդիո, վիդեո և տեքստային նյութերը lds.org/menu/service/serving-in-the-church կայքում:

Ձեռնարկ 2 -ը կարելի է գտնել ինտերնետում՝ lds.org/handbook/handbook-2-administering-the-church: Ղեկավարների ուսուցման նոր գրադարանը մատչելի է Ծառայել Եկեղեցում բաժնում lds.org by mid-2011:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՔՐԵՅԳ ՂԱՅԱՄՈՎԻ

Եկեղեցու ղեկավարներն ասացին, որ և տղամարդիկ, և կանայք պետք է հավասարապես հնարավորություն ունենան ազատ արտահայտելու իրենց մտքերը ղեկավարների ժողովների ժամանակ:

օգտակար և ոգեշնչող են լինում», - ասաց նա:

Ղեկավարները նման մասնակցություն կարող են խրախուսել, անվանապես դիմելով կանանց և շնորհակալություն հայտնելով նրանց մտքերի և առաջարկությունների համար, բացատրեց Երեց Սքոթը:

«Հավելյալ օրհնությունը, որը մտնում է այս ցուցումներին հետևող քահանայության ղեկավարների տուն» այն է, որ «այդ տղամարդիկ ավելի շատ են գնահատում տանը իրենց սեփական կանանց սուրբ դերը», - ավելացրեց նա:

Նա սովորեցրեց խորհրդի անդամների մեջ համաձայնություն փնտրելու կարևորության մասին: Երբ առկա է նման զգացում, ղեկավարը կարողանում է տեսնել այն և ստանալ ընդհանուր համաձայնությունը: Այն դեպքերում, երբ անդամները միասնական չեն, ղեկավարները պետք է խորհուրդ հարցնեն ծխի խորհրդի յուրաքանչյուր անդամից, շնորհակալություն հայտնեն նրանց մտքերի համար, որոշում կայացնեն և խնդրեն խորհրդի անդամներին միասնական աջակցություն ցուցաբերել այդ որոշման հարցում: Երեց Սքոթը շեշտեց ծխի խորհրդի հարցերում գաղտնիությունը պահելու կարևորությունը:

Ակնկալվող արդյունքները

Երեց Նելսոնը ավարտեց ուսուցումը, հայտնելով երեք հույս. այդ պարզեցումները թույլ կտան անդամների ժամանակը և միջոցները ավելի արդյունավետ օգտագործել, քահանայության զորությունը քահանայության յուրաքանչյուր կրողի մոտ կլավելանա, օրհնելով Եկեղեցում յուրաքանչյուր անձի և ընտանիքի, և յուրաքանչյուր անդամ կարող է նվիրվածության և աշակերտ լինելու ավելի խորը զգացում ունենալ: ■

Երեց Փերին նոր ցից է ստեղծում Գուամում

Երեց Լ. Թոմ Փերին Տասներկու Առաքյալների Քվորումից 2010թ. դեկտեմբերին այցելեց Գուամ՝ Գուամի տարածքում առաջին ցիցը՝ Բարիգամա Գուամ Ցիցը ստեղծելու համար: Երեց Փերին, որը Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ այդ տարածքում ծառայել է Միացյալ Նահանգների Ծովահետևակային Բանակում, այցելեց նաև Խաղաղօվկիանոսյան Պատերազմի Թանգարանը և հարևան Մայպան կղզին: Գուամում ապրում են թվով 1971 Եկեղեցու անդամ: Գուամի տարածաշրջանը Եկեղեցու Հյուսիսային Ասիայի Տարածքում է մտնում:

ՎՕՍ բժիշկները բուժում են խոլերան Պապուա Նոր Գվինեայում

Ավստրալիայից մի խումբ ՎՕՍ բժիշկներ 2010թ. վերջում զբաղված էին՝ բուժելով խոլերայի համաճարակի զոհեր դարձած Պապուա Նոր Գվինեայի հյուսիսարևմտյան հեռավոր գյուղերի բնակիչներին:

Բժիշկները աշխատեցին հարյուրավոր հիվանդների հետ, փրկելով մի տղամարդու, որը հիվանդանոց հասնելու պահին մահվան շեմին էր գտնվում, իսկ մյուսները առանց բուժման չէին կարող ապրել 24 ժամից ավել:

Մարդիկ ցամաքով և նավակներով գալիս էին բժիշկների մոտ: Դեյվիդ Վիլիամսը Բրիսբանից և Էնթոնի Մահլերը Քերնսից ասացին, որ Սոժեր գյուղ ժամանելուն պես մեկ օրվա ընթացքում իրենք բուժեցին ավելի քան 200 խոլերայով հիվանդների: Խոսելով ընդհանուր փորձառության մասին, Դոկտոր Մահլերն ասաց. «Դա իմ կյանքում մասնագիտական առավել հատուցող փորձառություն եղավ, անկախ դժվարություններից և ծայրահեղ հոգնեցնող աշխատանքային ծավալից»:

Բժիշկներ ուղարկելուց բացի, Եկեղեցին տրամադրեց օգնություն, ներառյալ բժշկական օգնության պարագաներ և ջրի մաքրման սարքեր: Եկեղեցու կողմից ճգնաժամ ապրող տարածքներ սննդամթերք և օճառ ուղարկվեց Պորտ Մորեսբիից, անձնական հիգիենայի փաթեթներ ուղարկվեցին Պորտ Մորեսբիից և Բրիսբանից: Ջրի մաքրման մասնագետ միսիոներական մի զույգ մեկնեց Պապուա Նոր Գվինեա օգնության աշխատանքները համակարգելու համար:

Տեսասկավառակը ներկայացնում է 2011թ. Միացյալի Թեման

Հունվարին Եկեղեցին սկսեց աշխարհով մեկ Եկեղեցու միավորներին բաժանել 2011թ. Երիտասարդներին ամրացնելու տեսասկավառակը՝ *Մենք հավատում ենք,* որպես լրացում 2011թ. Միացյալի թեմային:

Տեսասկավառակը պարունակում է մուլտիմեդիա ձևաչափի բովանդակություն, որի նպատակն է օգնել երիտասարդներին իրենց կյանքի կենտրոնական մասը դարձնել Հավատո Հանգանակներ 1.13-ի թեման: Մասնակցում են Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, Երիտասարդ Տղամարդկանց

Եկեղեցին ընդունում է Իններորդ Միջազգային Արվեստի Մրցույթի գործերը

Եկեղեցու Պատմության Թանգարանը Եկեղեցու Իններորդ Միջազգային Արվեստի Մրցույթի գրանցման ձևերը կտեղադրի ինտերնետում 2011թ. ապրիլի 4-ին: Մրցույթի համար գործերը պետք է ներկայացվեն ինտերնետով կամ ուղարկվեն փոստով մինչև 2011թ. հոկտեմբերի 7-ը: Գալիք մրցույթի թեման է «Հայտնի դարձնել Նրա հրաշալի գործերը» (ՎԵՈՒ 65.4): Անգլերենով լրացուցիչ տեղեկության համար կամ նախկին մրցույթներից ընտրված արվեստի գործեր տեսնելու համար այցելեք lds.org/churchhistory/museum/competition:

Նոր Կտակարանի պատմությունները գործի մեջ

Որպես օգնություն 2011թ. Նոր Կտակարանի ուսումնական ծրագրին, *Նոր Կտակարանի Պատմությունները* գրքի տեսաֆիլմերը այժմ անիմացիայի են ենթարկվել, օգտագործելով Պառալակս (parallax) եղանակը: 65 տեսաֆիլմեր մատչելի են անգլերենով, իսկ MP3 աուդիո ձայնագրությունները յուրաքանչյուր տեսաֆիլմի համար մատչելի են LDS.org-ի 11 լեզուներով: Պառալակս տեսաֆիլմերը բոլոր լեզուներով մատչելի կլինեն 2011թ. ընթացքում: Գտեք տեսաֆիլմերը scripturestories.lds.org-ում և ընտրեք **Նոր Կտակարանի Պատմությունները (New Testament Stories** բաժինը:

Բանգալորում երիտասարդները պարտավորություն են ստանձնում Աստծո առաջ

Հնդկաստանի Բանգալոր շրջանից ավելի քան 30 երիտասարդներ հավաքվել էին Կանակապուրա սարերում՝ սովորելու Պարտականություն Աստծո առաջ նոր ծրագրի մասին և հոգևոր դասեր քաղելու ֆիզիկական ծանր վարժություններից: Երիտասարդ տղամարդիկ պարանի և քարշակների միջոցով անցան լիճը: Նրանք առավոտյան վազք էին կատարում, մագլցում էին լեռներ և սովորում էին գոյատևել բարդ պայմաններում: Միջոցառումը ավարտվեց վկայության ժողովով: ■

Դիտեք և ունկնդրեք Նոր Կտակարանի կենդանի և գունազարդ պատմությունները scripturestories.lds.org-ում:

և Երիտասարդ Կանանց գերագույն նախագահները, ներկայացվում է երաժշտություն, երիտասարդների վկայությունները և այլն:

Նյութի հիմնական մասը կազմում են երիտասարդների վկայությունները և ոգեշնչող փորձառությունները:

Երաժշտությունը, ուղերձները և վկայությունները կարող են օգտագործվել տարվա ընթացքում երիտասարդների դասերը, ժողովները և միջոցառումները բովանդակալից դարձնելու համար:

Բոլոր նյութերը կարելի է բեռնաթափել youth.lds.org կայքից:

Տեսասկավառակը թարգմանված է հետևյալ լեզուներով. Չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, ճապոներեն, կորերեն, պորտուգալերեն, ռուսերեն և իսպաներեն: ■

ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

2011թ. հունվարի *Լիահոնան* նշում է, որ ոչ տեղաբնակ միսիոներներ էին ծառայում Իվորի Քոստ-ում (տես Samuel Gould, “In the Presence of Angels,” 50): Այդ համարի տպագրումից հետո այնտեղ պայմանները փոխվեցին, և ոչ տեղաբնակ միսիոներների հանձնարարության վայրը փոխվեց: Եկեղեցին ուշադիր հետևում է քաղաքական իրավիճակին, որտեղ որ միսիոներները ծառայում են, և անհրաժեշտության դեպքում հանում է միսիոներներին տվյալ տարածքից: Միսիոներները վերադառնում են նույն տարածք միայն այն դեպքում, երբ իրավիճակը կրկին անվտանգ է դառնում:

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Նա թեթևացնում է մեր բեռը

Ես սիրում եմ այս ամսագիրը և դրա ողջ բովանդակությունը: Ես սիրում եմ Բարձրագույն Իշխանությունների հոդվածները, հատկապես համաժողովների ելույթները: Դրանք մեզ ուսուցանում են և խրախուսում առաջ գնալ՝ անկախ մեր փորձություններից:

Ես Եկեղեցու անդամ եմ արդեն 26 տարի և կարդացել եմ *Լիահոնայի* յուրաքանչյուր համարը: Ես հաճախ կարդում եմ հին համարները և մի հոդված հատկապես թանկ է ինձ համար. Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի «Տիրոջ բարի ողորմածությունը» (մայիս 2005, 99): Այն օգնում է ինձ հիշել, թե որքան հաճախ է Երկնային Հայրը միջամտում Իր բարի ողորմածությամբ և թեթևացնում մեր ծանր բեռը:

Իոլանդա Վալենտի, Իտալիա

Ուսմունքները գալիս են Տիրոջից

Ես շնորհակալ եմ, որ ամեն ամիս ունեմ կենդանի մարգարեների խոսքերը: Ես գիտեմ, որ նրանց ուսմունքները գալիս են Տիրոջ կողմից և կօրհնեն իմ կյանքը, եթե ես կիրառեմ դրանք: Աշխարհի Սրբերի փորձառությունների մասին կարդալը ամրացնում է իմ հավատքը և վկայությունը, որովհետև ես սովորում եմ, թե ինչպես են մյուսները կրում իրենց բեռը:

Բայրոն Դեյվիդ Քալդերոն Մոսքերա, Էկվադոր

Խնդրում ենք ուղարկեք ձեր կարծիքը կամ առաջարկությունները liahona@ldschurch.org հասցեով: Խմբագրման արդյունքում նյութերի ծավալը կարող է կրճատվել և բովանդակությունը պարզեցվել: ■

ՄՏՔԵՐ **ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԻ ՀԱՄԱՐ**

Այս համարը պարունակում է հոդվածներ և միջոցառումներ, որոնք կարող են օգտագործվել ընտանեկան երեկոյի համար: Ստորև տրվում են մի քանի օրինակներ:

«Միշտ հիշենք Նրան», էջ 20. Ընտանիքով քննարկեք Երեց Քրիստոֆերսոնի խորհուրդը. «Մենք կարող ենք սկսել նրանից, որ մաքրենք ամեն ինչ մեր կյանքից, ապա նորից հետ բերենք՝ դասավորելով ըստ առաջնահերթությունների, դնելով Փրկչին կենտրոնում»: Զրուցեք Երեց Քրիստոֆերսոնի նշած օրհնությունների մասին, որոնք գալիս են, եթե մենք «միշտ հիշում ենք Փրկչին»:

«Սուրբ գրությունների զորությունը», էջ 52. Միասին այս հոդվածը կարդալուց հետո, ընտանիքի անդամներին խնդրեք կիսվել սուրբ գրությունները կարդալու և սեմինարիա հաճախելու վերաբերյալ իրենց զգացողություններով: Խնդրեք նրանց իրենց օրագրերում գրել սուրբ գրությունների զորության մասին իրենց վկայությունները: Խրախուսեք ձեր երեխաներին ուսումնասիրել և անգիր սովորել սուրբ գրությունների սերտման հատվածները:

«Միջնորդ Հիսուս Քրիստոսը», էջ 56. Միասին հոդվածը կարդալով, խնդրեք ձեր ընտանիքին ուշադրություն դարձնել միջնորդի կարևորության վրա: Նրանց հարցրեք, ինչ կպատահեր, եթե միջնորդը չօգներ մարդուն պարտքը վճարել: Դուք կարող եք նաև կարդալ սուրբ գրությունները և քննարկել, թե ինչու է Փրկիչը մեր միջնորդը հանդիսանում: Կարող եք կարդալ 2 Նեփի 2.27–28 և Ալմա 42.24–25:

«Լրիվ զգեստավորված», էջ 70. Ընտանիքի անդամներին խնդրեք կոստյում հագնել կամ խաղալ մեկ ուրիշի դերը: Բոլորին հնարավորություն տվեք կիսվել նրանով, թե ով են իրենք: Պատմությունը կարդալուց հետո բացատրեք, որ անկախ մեր դերից, մենք միշտ Աստծո զավակներն ենք:

Երջանիկ ժամանակ և հավերժական կապեր

Երբ իմ երեխաները փոքր էին, նրանք սիրում էին խաղեր խաղալ ընտանեկան երեկոյից հետո: Նրանց սիրված խաղերից էր «Կնճիթավոր փիղը», որն իր անվանումն էր ստացել մեր դստեր՝ Ջոսելինի դպրոցում սովորած երգի վերնագրի շնորհիվ: Նրանից հետո, երբ մենք բոլորս երգում էինք, ես կատարում էի Փղի դերը և մեջքիս վրա ման էի տալիս երեխաներին: Առաջինը մեջքիս էր բարձրանում իմ երկու տարեկան որդի Ջորջը, ապա իմ չորսամյա դուստր Ջոսելինը, և վերջապես կինս՝ Էլիզաբեթը: Երբ բոլոր երեքը նստած էին մեջքիս, ես նրանց ման էի տալիս հյուրասենյակով: Շատ զվարճալի էր:

Տարիներ անց իմ մեծացած երեխաները սպասում էին իրենց միսիոներական կանչերին: Մի ընտանեկան երեկոյի ժամանակ նրանք հիշեցին «Կնճիթավոր փղին»: Մենք միասին երգեցինք երգը, տարիների ընդմիջումից հետո, և ես կրկին դարձա փիղ: Սկզբից որդիս, ապա դուստրս, հետո կինը, բարձրացան մեջքիս: Ի վերջո, ես փռված-պառկած էի հատակին, և բոլորս ծիծաղում էինք:

Այդ պահի հուշերը մեզ երախտագիտության զգացում են պարգևում նրա համար, որ մարգարեները մեզ ուսուցանել են ընտանեկան երեկոների մասին: Մենք սովորեցինք, որ անկախ նրանից, թե որքան հասարակ են ընտանեկան երեկոները, ամենակարևորն այն է, որ մենք մեր ընտանիքների հետ երջանիկ պահեր ենք ունենում, որոնք ամրացնում են մեր հավերժական կապերը: ■

Վիկտոր Գ. Չոկա Ռիվերա

ՓՇԵ ՊՍԱԿ, ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՍԱԿ

Լարի Հիլլեր
Եկեղեցու ամսագրեր

Օգոստոս է Սուրբ Երկրում: Մեր շուրջը Կափառնայումի ավերակները կայծկլտում են կեսօրվա շոգին: Դա այցելության համար հմայիչ վայր էր, սակայն մինչ մեր գիդը միալար խոսում էր, իսկ մոտակայքում բզզում էր կնճիթավոր ցիկադա բզեզը, միտքս սկսեց թափառել:

Հանկարծ ես զգաստացա, երբ գիդը մատնանշելով ծառը, որի ստվերում կանգնած էինք մենք, իմիջիայլոց ասաց. «Նրանք այս ծառը անվանում են «փշե պսակ»»: Ես նայեցի ստվարախիտ ճյուղերին: Որտե՞ղ էին փշերը: Զգվելով ես զգուշորեն ներքև քաշեցի մի փոքր ճյուղ:

Ահա, նուրբ տերևների մեջ ես տեսա փշերը: Կանաչ ու բարակ, անչափ սուր, իմ բթամատի երկարության փշերը անտեսանելի էին մի քանի քայլ հեռավորությունից: Սակայն տերևներով ծածկված այդ ճյուղերին դիպչելիս անշուշտ ցավ կզգայիր:

Ես հիշեցի այն բազմաթիվ նկարները, որտեղ Փրկիչը կանգնած է ծաղրող դատարանի առաջ կարմիր թիկնոցով, գլխին չոր, փշոտ ճյուղերից հյուսված պսակը: Հանկարծ մտքովս անցավ, որ ստրուկը կամ զինվորը, որին հանձնարարվել էր պատրաստել այդ պսակը, կցանկանար աշխատել ոչ թե կոտրվող, չոր ոստերի, այլ այս ծառի ճյուղերի պես ճկուն կանաչ ճյուղերի հետ: Ավելին, այդ պսակի նպատակը ոչ թե պարզապես ցավ պատճառելն էր, այլ՝ խայթելն ու ծաղրելը:

Հնագույն աշխարհում կանաչ, ստվարախիտ, սովորաբար դափնու բուրավետ ճյուղերից պատրաստված պսակը հաճախ տրվում էր մրցույթների և ճակատամարտերի հաղթողներին: Դափնեպսակները զարդարում էին թագավորների և կայսրների կերպարները: Հավանաբար, դաժան պսակը, որ խրվել էր Փրկչի ճակատի մեջ, լինելով կանաչ և ստվարախիտ, կարող էր չարախինդ ծաղրանքով ներկայացնել հնում ցուցաբերվող այդ մեծարանքը: Սա ենթադրություն է, և ոչ թե վարդապետության արտահայտում: Սակայն դա այդպես պատկերացնելով ինձ համար ավելի պարզ է դառնում Քավության ևս մեկ կողմը՝ Փրկիչը տեղյակ է մեր վշտերին, և Նա կարող է բժշկել մեզ:

Ինձ համար փշե պսակը դարձել է խորհրդանիշ, որ Փրկիչը տեղյակ է մեր բոլոր թաքնված ցավերին և Նա կարող է բժշկել դրանք:

Նրա ուսերին զցված թիկնոցը թագավորական խոհրդանիշի ծաղրանքն էր: Այն ծածկում էր մտրակի հարվածների տեղերը և խոր վերքերը: Նույնկերպ փշոտ սաղարթախիտ պսակը կարող էր թվալ հաղթողի մրցանակ, սակայն իրականում թաքցնում էր իր իսկ պատճառած ցավը:

Մեզանից շատերը կրում են անտեսանելի վիրավորանքներ: Օրհներգն ուսուցանում է, որ «հանգիստ սրտում թաքնված է վիշտը, որ անտեսանելի է աչքի համար» (“Lord, I Would Follow Thee,” *Hymns,* no. 220): Սակայն Փրկիչը *իրոք* տեսնում է: Նա լավատեղյակ է թաքնված տառապանքին: Նրա ողջ ծառայությունն անցավ Քավության և Հարության ակնկալիքով: Սակայն այդ մասին չգիտեին նրանք, ում Նա ուսուցանեց, օրհնեց և բժշկեց: Անգամ Իր աշակերտներն էին անտեղյակ:

Փրկիչը տեսնում է անցած «թիկնոցները» և «պսակները», որ մյուսներից քողարկում են մեր տառապանքները: Կրելով «ցավեր և չարչարանքներ և փորձություններ ամեն տեսակի», Նա լի է ողորմածությամբ և գիտի ինչպես սատարել մեզ, երբ մենք մեր բեռը դնում ենք Նրա ոտքերի մոտ (տես Ալմա 7.11–12): Նրա բալասանը միայն կարող է բուժել խորը և թաքնված վերքերը: Եվ պսակը, որ Նա մեկնում է մեզ, իսկապես հաղթողի պսակ է: ■

ՔՐԻՍՏՈՍԻ ՓՇԵ ՊՍԱԿԻՑ, ԿԱՄ ԼԵՌԻՑ ԲԼՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է ՂԱՆԻԱՅԻ ՖՈՏՈՐԻՍԿՈՂՈՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ, ՉԻՆԱՍՏԱՆԻ:



Հարության առավոտը, Սթիվեն Էդվարդս

Իր մահկանացու ծառայության ժամանակ Քրիստոսն Իր աշակերտներին ասաց, որ «պետք է մարդի Որդին . . . սպանուի և երրորդ օրումը հարություն առնէ» (Ղուկաս Թ.22):

Նրա խաչումից հետո, «Մարիամ Մագդաղենացին եկաւ՝ և մյուս Մարիամը, գերեզմանը տեսնելու։

Եվ ահա մեծ շարժ եղաւ, որովհետև Տիրոջ հրեշտակը երկնքից իջաւ գնաց՝ դռնիցն այն քարը հեռու թաւալեց, և նրա վրա նստեց։ . . .

Եվ հրեշտակը պատասխանեց և այն կանանցն ասեց, Մի՛ վախենաք դուք, գիտեմ որ խաչված Հիսուսին եք որոնում։

Այստեղ չէ. որովհետև հարություն առաւ, ինչպես ասեց» (Մատթեոս ԻԸ.1–2, 5–6):

«Հիշել Փրկչին իհարկե նշանակում է հիշել Նրա Քավությունը, որը խորհրդանշական ձևով ներկայացվում է հացով և ջրով որպես Նրա տառապանքների և մահվան խորհրդանիշներ», - գրում է Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը Տասներկու Առաքյալների Քվորումից: «Մենք երբեք չպետք է մոռանանք այն, ինչ Նա արեց մեզ համար, քանզի առանց Նրա Քավության և Հարության կյանքը իմաստ չունի: Նրա Քավությամբ և Հարությամբ մեր կյանքը ձեռք է բերում հավերժական, աստվածային հնարավորություններ»: Տես «To Always Remember Him,» էջ 20:

ARMENIAN

4 020968420 1 2